ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Նաիրուհի Ռաֆիկի Ավետիսյան

Եկամտահարկի մոդելների կիրառման առանձնահատկությունները ՀՀ-ում

Ատենախոսություն

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ

Ա.Լ. Ալավերդյան

Երևան-2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ1. ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ԴԵՐԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 9

1.1 Եկամտահարկի սոցիալ-տնտեսական բովանդակությունը և նշանակությունը հարկային համակարգում 9

1.2 Տնտեսական գործոնների ազդեցությունը եկամտահարկի մոդելների ձևավորման վրա՝ ըստերկրի տնտեսական զարգացվածության մակարդակի 22

1.3 Եկամտահարկի դերը պետության կողմից սոցիալական քաղաքականության իրականացման գործընթացում 36

ԳԼՈՒԽ2. ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ 51

2.1 Եկամտային հարկի ազդեցությունը սոցիալական քաղաքականության և հարկեր/ՀՆԱ հարաբերակցության վրա 51

2.2 Հարկվող եկամուտների, հարկման գործող մեխանիզմների գնահատականը և համապատասխանությունը միջազգային առաջավոր փորձին 68

ԳԼՈՒԽ3. ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ 104

3.1 Եկամտային հարկի օրենսդրության կատարելագործման ուղիները 104

3.2 ՀՀ-ում եկամուտների գլոբալ հայտարարագրման համակարգի ներդրման և ստվերային տնտեսության դեմ պայքարի հնարավորությունները 114

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 130

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 134

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 156

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Համաշխարհային տնտեսավարման փորձը վկայում է, որ չնայած շուկայական տնտեսության ինքնակարգավորման լծակների գոյությանը և տնտեսության մեջ մասնավոր հատվածի գերակշռող տեսակարար կշռին, այնուամենայնիվ, յուրաքանչյուր երկրի սոցիալ-տնտեսական կյանքում զգալի է պետության դերը: Ընդհանուր առմամբ պետությունը գործում է օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում՝ բազմաբնույթ ու բազմանպատակ պետական քաղաքականության իրականացմամբ:

Օբյեկտիվորեն պայմանավորված լինելով պետության առաջացմամբ՝ հարկերը հանդիսանում են պետական եկամուտների ձևավորման կարևոր աղբյուրը: Եվ եթե հասարակության զարգացման վաղ ժամանակաշրջանում հարկերը պետությունների համար հանդիսացել են հիմնականում պատերազմական գործողությունների ֆինանսավորման աղբյուր, ապա ժամանակի ընթացքում հարկերի ունեցած դերը և նշանակությունը որակապես փոխվել են: Մասնավորապես, 20-դարի կեսերից սկսած հարկային համակարգի ձևավորման կարևորագույն խնդիրներից էր այնպիսի հարկային համակարգի ստեղծումը, որը ոչ միայն չէր խոչընդոտի արտադրական և տնտեսական գործունեության իրականացմանը, այլ ավելին՝ կխթաներ գործարարությամբ զբաղվելու աճը: Ձևավորվում էր, այսպես կոչված, գործարարությունը խթանող հարկային համակարգ: Միաժամանակ, գնալով խորանում էր հարկային համակարգի և պետության կողմից իրականացվող սոցիալական քաղաքականության ուղղակի կապը, այսինքն՝ կարևորվում էր հարկային քաղաքականության դերը նաև սոցիալական հարցերի լուծման գործում՝ ընդգծելով հարկման սոցիալական գործառույթի կարևորությունը:

Այս համատեքստում կարևորվում են հատկապես զարգացած երկրներում եկամտահարկի մոդելների կիրառման և կատարելագործման ուղիների ուսումնասիրությունները, քանի որ ի տարբերություն զարգացող կամ անցումային տնտեսություն ունեցող երկրների, զարգացած երկրներում պետական բյուջեի եկամուտների կազմում եկամտահարկի հավաքագրումներն ունեն

բավականին մեծ տեսակարար կշիռ, ընդգծված սոցիալական ուղղվածություն և լայն կիրառություն պետությունների կողմից եկամուտների վերաբաշխման, սոցիալական խնդիրների լուծման հարցում: Կարծում ենք, զարգացող կամ անցումային տնտեսություն ունեցող երկրներում առկա այս օրինաչափությունը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով, այդ թվում՝ համապատասխան օրենսդրական կարգավորումների բացակայությունը, սահմանափակ վարչարարական կարողությունները և որոշ դեպքերում էլ՝ քաղաքական շարժառիթները: Ամեն դեպքում, ինչպես գրեթե բոլոր զարգացող երկրներում, այնպես էլ ՀՀ-ում եկամտահարկը հարկային եկամուտների կազմում և սոցիալական քաղաքականության վրա ունեցած ազդեցության տեսանկյունից ուներ բավականին սահմանափակ նշանակություն և կիրառություն, ընդ որում նշված միտումը շարունակվում է նաև 2013 թ.-ից գործող եկամտային հարկի պարագայում:

Ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգի բարեփոխումների համար կարող էր լավագույն առիթ հանդիսանալ կենսաթոշակային բարեփոխումները, սակայն «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի ներդրմամբ շոշափելի արդյունքներ չարձանագրվեցին թե՛ հավաքագրված եկամտային հարկի գումարների աճի, թե՛ ստվերային տնտեսության կրճատման, թե՛ սոցիալական քաղաքականության վրա ունեցած ազդեցության տեսանկյունից: Կարծում ենք, պատկերն անփոփոխ կմնա նաև ՀՀ Հարկային օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո ևս, քանի որ ֆիզիկական անձանց եկամուտների հարկման դաշտում լուրջ համակարգային փոփոխություններ նախատեսված չեն:

Ատենախոսությունում քննարկված խնդիրներից շատերը դիտարկված են հայրենական և արտասահմանյան մի շարք տեսաբանների և հետազոտողների աշխատություններում: ՀՆԱ-ի, պետական բյուջեի, ինչպես նաև պետության կողմից իրականացվող սոցիալական քաղաքականության վրա ունեցած ազդեցության տեսանկյունից եկամտահարկի մոդելների ուսումնասիրությունն և վերջիններիս զարգացման արդի միտումների բացահայտումը

հանդիսացել է մի շարք միջազգային կազմակերպությունների (Միավորված ազգերի կազմակերպություն, Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպություն, Համաշխարհային բանկ և Արժույթի միջազգային հիմնադրամ), ինչպես նաև մի շարք հեղինակավոր համալսարանների հետազոտությունների առարկա:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսությունում կատարված հետազոտության հիմնական նպատակն է ուսումնասիրել և բացահայտել ֆիզիկական անձանց եկամուտների հարկման լավագույն արտասահմանյան փորձը և վերջինիս արդյունքներն օգտագործելով, մշակել և ներկայացնել այն հիմնական գործիքակազմը, որի հիման վրա հնարավոր կլինի կատարելագործել ՀՀ-ում գործող եկամտային հարկի մոդելը: Հետազոտության հիմնական նպատակի իրականացման համար անհրաժեշտ է լուծել հետևյալ *խնդիրները*.

- վերլուծել և գնահատել եկամտային հարկի դերը տնտեսության պետական կարգավորման գործընթացում,
- բացահայտել եկամտահարկի սոցիալ-տնտեսական բովանդակությունը և նշանակությունը հարկային համակարգում,
- ներկայացնել հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման և եկամտահարկի մոդելների միջև առկակապերը,
- ուսումնասիրել և վերլուծել եկամտահարկի նշանակությունը և դերը պետության կողմից իրականացվող սոցիալական քաղաքականության, այդ թվում՝ կենսաթոշակային բարեփոխումների իրականացման շրջանակներում,
- ուսումնասիրել զարգացած և զարգացող (անցումային տնտեսությամբ) տնտեսական համակարգերում ֆիզիկական անձանց եկամուտների հարկման մոդելները և ներկայացնել առաջարկներ վերջիններիս տեղայնացման հնարավորությունների վերաբերյալ,
- գնահատել եկամտահարկի ազդեցությունը մի շարք մակրոտնտեսական ցուցանիշների վրա, այդ թվում իրականացնել համադրություններ մի շարք այլ երկրների նմանատիպ ցուցանիշների հետ,

- վերլուծել և գնահատել «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով չհարկվող եկամուտների՝ հետագայում հարկման տնտեսական նպատակահարմարությունը,
- ուսումնասիրությունների և վերլուծությունների միջոցով վերհանել ՀՀ-ում եկամտային հարկի զարգացմանը խոչընդոտող օրենսդրական, տնտեսական և քաղաքական գործոնները և ներկայացնել առաջարկներ ՀՀ-ում ներդնելու միջազգային առաջավոր փորձին համահունչ և միևնույն ժամանակ երկրի տնտեսական և իրավական դաշտին համապատասխան ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգ,
- ներկայացնել եկամտային հարկի հավաքագրման գործող մեխանիզմները, ինչպես նաև բացահայտել եկամուտների համատարած հայտարարագրման համակարգի ներդրման խնդիրները և հնարավորությունները:

Ուսումնասիրության առարկան և օբյեկտը: Ուսումնասիրության առարկան ֆիզիկական անձանց եկամուտների հարկման հիմնական մոտեցումների, դրանց առավելությունների և թերությունների, բարեփոխումների հիմնական ուղղությունների տեսական և մեթոդական հիմնահարցերն են, ինչպես նաև ՀՀ-ում վերջիններիս կիրառման առանձնահատկությունները և բարեփոխումների իրականացման համար ուղենիշ հանդիսացող ժամանակակից միտումները: Հետազոտության շրջանակներում ուսումնասիրության օբյեկտ է հանդիսացել մի շարք զարգացած, զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներում գործող ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգերը, այդ թվում՝ ՀՀ-ում եկամտային հարկի բարեփոխման և զարգացման հետագա տեսլականը:

Ատենախոսության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Ատենախոսության համար տեսական և մեթոդաբանական հիմք են ծառայել ֆիզիկական անձանց եկամուտների հարկման ընդհանուր մոտեցումների և հիմնախնդիրների վերաբերյալ արտասահմանյան ուսումնասիրությունները, վերլուծությունները, հրապարակումները, հետազոտության արդյունքները: Իսկ որպես տեղեկատվական հիմք ծառայել են ՀՀ

ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակված տվյալները, Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպության, Միավորված ազգերի կազմակերպության, Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Դելլոյթի, մի շարք հեղինակավոր կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների կողմից հրապարակած զեկույցները և տեղեկությունները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և այլ երկրների համապատասխան իրավական ակտերը:

Ատենախոսության հիմնական արդյունքները և գիտական նորույթը: Ատենախոսության շրջանակում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում ստացվել են տեսական, մեթոդական ու կիրառական ուղղվածություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնց գիտական նորույթն արտահայտվել է հետևյալ դրույթներում.

- առաջարկվել է հարկային քաղաքականության միջոցով սոցիալական խնդիրների լուծման նոր ձևաչափ, որը թույլ կտա ավելի տեսանելի դարձնել վճարվող հարկերի և ստացվելիք սոցիալական օգուտների միջև առկա կապերը՝ ստացվելիք սոցիալական օգուտներն անմիջականորեն կապելով հայտարարագրված եկամուտների և հարկերի հետ,
- որպես արդարացի հարկային համակարգի ձևավորման հիմնական ուղի հիմնավորվել է եկամուտների և գույքի գլոբալ հայտարարագրման համակարգի կարևորությունը, ինչպես նաև տրվել են գործուն մեխանիզմներ վերջինիս ներդրման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու համար,
- հարկային համակարգում եկամտային հարկի դերի բարձրացման համատեքստում վերլուծվել են զարգացած երկրներում ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգերի բարեփոխումների հիմնական գործիքակազմը և տրվել են դրանց տեղայնացման համար անհրաժեշտ օրենսդրական կարգավորումները,
- առաջարկվել են պասիվ եկամուտների հարկման նոր օրենսդրական կարգավորումներ, ինչպես նաև հիմնավորվել է երկարաժամկետ հատվածում վերջիններիս հարկման դրական

ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների, հարկային համակարգի արդյունավետության և հարկային կարգապահության վրա:

Ատենախոսության գիտական արդյունքները չեն կրկնում այլ հետազոտողների կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքները և որակապես տարբերվում են գոյություն ունեցող մոտեցումներից, որով էլ պայմանավորվում է դրանց գիտական նորույթը:

Ատենախոսության գործնական նշանակությունը: Ատենախոսությունում կատարված վերլուծությունները, ստացված արդյունքներն ու եզրակացությունները կարող են օգտագործվել ՀՀ-ում ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգի արդյունավետության բարձրացմանն ու կատարելագործմանն ուղղված հարկային քաղաքականության բարեփոխումների իրականացման համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական դրույթները զեկուցվել և քննարկվել են ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի նիստերում, ՀՀ ֆինանսների նախարարությունում, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեում, ինչպես նաև մի շարք փորձագետների հետ:

Ատենախոսության արդյունքները արտացոլվել են հեղինակի 6 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է առաջադրված նպատակով և խնդիրներով, ուսումնասիրության մակարդակով: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, առաջարկությունների և եզրակացությունների բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը շարադրված է 148 էջում, ներառում է գծապատկերներ, աղյուսակներ:

ԳԼՈՒԽ 1. ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ԴԵՐԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1.1 Եկամտահարկի սոցիալ-տնտեսական բովանդակությունը և նշանակությունը հարկային համակարգում

Տնտեսության զարգացման ժամանակակից պայմաններում տնտեսության կարգավորման և պետության պահպանման հիմնախնդիրների հետ կապված մեծ նշանակություն է ստանում հարկերի՝ որպես մակրոտնտեսական կարգավորման լծակների դերը: Համաշխարհային տնտեսվարման փորձը վկայում է այն մասին, որ չնայած շուկայական տնտեսության ինքնակարգավորման լծակների գոյությանը և տնտեսության մեջ մասնավոր հատվածի գերակշռող տեսակարար կշռին, այնուամենայնիվ, յուրաքանչյուր երկրի սոցիալ-տնտեսական կյանքում զգալի է պետության դերը: Պետությունը միշտ էլ իրականացնում է կարգավորիչ ֆունկցիա՝ որպես յուրահատուկ մակրոտնտեսական կարգավորման լծակ ընտրելով հարկային քաղաքականությունը: Հարկային քաղաքականությունը հանդես է գալիս պետության ձեռքին որպես յուրահատուկ գործիք՝ ազդելով տնտեսական մի շարք երևույթների վրա: Այլ խնդիր է, թե այդ հարկային լծակները ինչ դրսևորումներ են ստանում տարբեր զարգացվածության մակարդակ ունեցող տնտեսական համակարգերում:

Մասնավորապես, եթե զարգացած երկրներում հարկային գործիքները պետության համար հանդիսանում են հիմնարար լծակներ, որոնց միջոցով պետությունը ուղղակի կամ անուղղակի ձևով ազդում է ամբողջական առաջարկի և ամբողջական պահանջարկի

վրա և կախված տնտեսական պայմաններից՝ իրականացնում է մեկ խթանող, մեկ էլ զսպող քաղաքականություն, ապա բոլորովին այլ պատկեր է անցումային կամ զարգացող տնտեսական համակարգեր ունեցող երկրներում: Այս երկրներում հարկային քաղաքականությունը հիմնականում միտված է առավելագույն չափով հարկերի հավաքագրմանը և պետության ծախսերի ապահովման հիմնախնդիրների իրագործմանը: Արդյունքում, հարկային լծակները, որպես մակրոտնտեսական կարգավորման գործիք, լիարժեքորեն չեն դրսևորվում: Թերացման հետևանքով էլ հանդես են գալիս այնպիսի բացասական երևույթներ, ինչպիսիք են՝ ստվերային տնտեսությունը, կապիտալի և աշխատանքային ռեսուրսների արտահոսքը, ներդրումների բացակայությունը և այլն:

Ընդհանրապես, հարկերի ազդեցությունը հասարակության զարգացման վրա ավելի մեծ է, քան կարելի է ենթադրել: Մի շարք հեղինակներ նույնիսկ հունական, հռոմեական և հրեական քաղաքակրթությունների վերելքը և անկումը կարծում են կարելի է դիտարկել իրականացվող հարկային քաղաքականության շրջանակներում[1]:

Նույնիսկ Աստվածաշնչում է խոսվում հարկերի մասին, որի համաձայն յուրաքանչյուր ոք պարտավոր է իր եկամտի, գույքի, վաճառքի և շահույթի 10%-ը նվիրաբերել եկեղեցուն, ընդ որում այն անձինք, ովքեր կսահմանեն 10%-ից ավել հարկեր, կհամարվեն գողեր և կկորցնեն իրենց հոգիները: Այսպես, օրինակ՝ հին հույները համարում էին, որ հարկ վճարում են միայն ստրուկները և ազատ քաղաքացի լինելու հանգամանքն անմիջականորեն կապված էր տվյալ մարդու կողմից հարկ վճարելու հանգամանքի հետ: Նրանք պատրաստ էին կատարել նվիրատվություններ, սակայն հարկեր չվճարել[2]: Հին Հռոմում հարկեր հավաքագրվում էին միայն պատերազմների ժամանակ, իսկ պատերազմը հաղթելուց հետո հարկերը նվազեցվում էին կամ ընդհանրապես չեղյալ համարվում[3]:

---

[1] Adams Ch., “For good and Evil: the impact of taxes on the course of civilization”, Medison Books, 2001, p.21

[2] Austin M.M. and P. Vidal-Naquet, “Economic and Social History of Ancient Greece, An introduction”, University of California Press Editions, 1977, p. 121

[3] Adkins L., Adkins R., “Handbook to life in Ancient Roma”, New York, USA, 2004 Edition, p.48

Ամեն դեպքում ակնհայտ է, որ հարկերի առաջացումը հիմնականում պայմանավորված է եղել խիստ գործնական պահանջներով, այն է՝ բավարարել պետությունների ֆինանսական պահանջները:

Ինչ վերաբերում է հարկային համակարգում եկամտահարկի ի հայտ գալուն, ապա ինչպես վկայում է հարկման պատմությունը, ֆիզիկական անձանց եկամուտները հարկվել են դեռևս անտիկ ժամանակաշրջաններում, չնայած հարկի հաշվարկման համար որպես հիմք չի հանդիսացել եկամուտը: Առաջին եկամտահարկն ի հայտ է եկել 1404 թ.-ին, սակայն պատմության մեջ գրեթե հիշատակումներ չկան այս հարկի կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ: Եկամտահարկի մասին առաջին հիշատակումներն արել է անգլիացի պատմաբան Թոմաս Վալսինգհամը (1372-1422թթ.), սակայն նրագրառումները ոչնչացվել են[4]:

Ժամանակակից եկամտահարկի նախատիպը անգլիական եկամտահարկն է, որն Անգլիայում սկսել է կիրառվել Նապոլեոնի դարաշրջանում՝ 1799 թ.-ից: Եկամտահարկի ներդրումը պայմանավորված է եղել Նապոլեոնի դեմ պատերազմում հաղթանակ տանելու համար լրացուցիչ ֆինանսական միջոցների հայթայթման անհրաժեշտությամբ և պատահական չէ, որ եկամտահարկը կոչվել է «հարկ Նապոլեոնին ոչնչացնելու համար»: Ընդ որում՝ նախատեսված էր, որ եկամտահարկը լինելու էր ժամանակավոր հարկատեսակ և գործելու էր ընդամենը 6 ամիս: Մինչև 1875թ. եկամտահարկը համարվում էր ժամանակավոր հարկատեսակ, նույնիսկ 1842թ.-ին եկամտահարկի գործողությունը դադարեցվեց, սակայն պայմանավորված բյուջեի եկամուտների ապահովման առավել հաջող այլընտրանք չգտնելու հանգամանքով՝ 1875 թ.-ից եկամտահարկի կիրառությունն այլևս իրողություն էր անգլիական իրականության մեջ[5]: Մեծ Բրիտանիայում եկամուտները բաժանվեցին մի քանի խմբերի և դրանցից յուրաքանչյուրի նկատմամբ կիրառվում էր եկամտահարկով հարկման յուրահատուկ

[4] Adams Ch., “For Good and Evil:the impact of taxes on the course of civilization”, Madison Books, 2001, p. 349

[5] Sabine B.E.V., A History of Income tax: the development of Income Tax from its beginning in 1799 to the present day related to the social, economic and political history of the period, Routledge, 2005, p.43

մոտեցում: Ի տարբերություն բրիտանական եկամտահարկի՝ Պրուսիայում գործում էր այսպես կոչված «սինթետիկ» եկամտահարկը, մասնավորապես տարբեր աղբյուրներից ստացված եկամուտները համախմբվում էին, որի արդյունքում էլ հաշվարկվում էր եկամտահարկի գծով վերջնական պարտավորությունը[6]: Չնայած եկամտահարկի ներդրումը հասարակության կողմից շատ դժվար ընդունելի իրողություն էր, այնուամենայնիվ եկամտահարկը մի կողմից դարձավ այլընտրանք ֆիզիոկրատի հողի (ֆիզիոկրատները գտնում էին, որ հարկերը պետք է վճարեն միայն հողի սեփականատերերը, քանի որ զուտարտադրանք տալիս է միայն հողը) և հարստության հարկերի համար, մյուս կողմից՝ փոխզիջումային հարկատեսակ՝ ակցիզային հարկերը և մաքսատուրքերը չբարձրացնելու համար[7]:

Չնայած եկամտահարկի ներդրման վերաբերյալ բացասական վերաբերմունքին՝ 1911 թ.-ին պրոֆեսոր Սելիգմանն եկամտահարկի մասին իր աշխատության մեջ գրել էր, որ եկամտահարկի դրույքաչափը եկամտահարկի ներդրումից հետո 100 տարիների ընթացքում երբեք չի գերազանցել 6%-ը[8]:

Վստահորեն կարող ենք ասել, որ եկամտահարկի ժամանակակից դրսևորումը անգլիացիների մեծագույն ներդրումն է ժամանակից աշխարհի հարկային համակարգում:

Հոլանդիայում առաջին անգամ եկամտահարկը սկսել է կիրառվել 1893 թ.-ից, Ավստրիայում՝ 1894 թ.-ից:

Ֆրանսիայում եկամտահարկի ներդրման փորձեր կատարվել են սկսած 1848 թ.-ից, սակայն վերջնական փուլի չեն հասել: 1896թ.-ից եկամտահարկ կիրառվել է ֆոնդային բորսաներից ստացված եկամուտների նկատմամբ: Մինչև 1914թ. Ֆրանսիայում ֆիզիկական անձանց եկամուտները հիմնականում հարկվում էին հարստության հարկերով: Ֆրանսիայում եկամտահարկը ներդրվեց 1917 թ.-ին՝

[6] Mares I. and Queralt D., “The Origin of the Modern Fiscal State”, Center of Advanced Study in the Social Sciences, Working Paper 2013/281, p.6,

[7] Майбурд Е. М. Введение в историю экономической мысли. От пророков до профессоров. – М.: Дело, Вита-Пресс, 1996. – Гл. 12

[8] Seligman Edwin R. A., “*The Income Tax: A Study of the History, Theory and Practice of Income Taxation at Home and Abroad”,* New York, Macmillan, 1911, p. 216

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ լրացուցիչ ֆինանսական միջոցներ ապահովելու համար:

ԱՄՆ-ում առաջին անգամ եկամտահարկը կիրառվել է 1812 թ. ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի միջև պատերազմի ժամանակ և գործել է մինչև Գենտի համաձայնագրի կնքումը՝ 1815թ.: Այնուհետև 1861թ.-ին ընդունվեց եկամտահարկի մասին օրենքը, որն այդպես էլ չգործեց: Եկամտահարկի ներդրման հաջորդ փորձը կատարվեց 1862թ. ԱՄՆ նախագահ Աբրահամ Լինքոլնի կողմից: Եկամտահարկի ներդրման հիմնական գաղափարը քաղաքացիական պատերազմի ընթացքում քաղաքացիների կողմից պետությանը աջակցության ցուցաբերումն էր և պատերազմի ավարտից հետո այն պետք է փոխհատուցվեր, ընդ որում հարկն ունենալու էր ժամանակավոր բնույթ[9]: 1875 թ.-ին Գերագույն դատարանը քաղաքացիների ուղղակի հարկումը գտավ ոչ սահմանադրական և եկամտահարկի մասին օրենքն ուժը կորցրած ճանաչվեց[10]:

1913 թ.-ին Վուդրո Վիլսոնն առավել նպատակահարմար գտավ մաքսատուրքերը փոխարինել եկամտահարկով և եկամտահարկի ներդրումը զարգացման նոր մակարդակի վրադրեց ԱՄՆ ֆինանսական համակարգը[11]:

Ցարական Ռուսաստանում եկամտահարկի կիրառման սկիզբը պաշտոնապես համարվում է 1916թ., սակայն դրանից 31 տարի առաջ՝ դեռևս 1885թ.-ից ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնելու դեպքում վճարվում էր եկամտահարկ[12]: Սա պայմանավորված էր այն հանգամանքով, որ 1824 թ.-ից գործող ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար պարտադիր վճարների համակարգը, որի չափը կախված էր ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու ոլորտից (առևտրի, արդյունաբերության կամ արտադրության), արդեն

[9] Փոխհատուցման գործընթացը չհաջողվեց, քանի որ 1870թ. փոխհատուցում ստացավ 276661 քաղաքացի, այն դեպքում, երբ ԱՄՆ-ի հարկատու բնակչությունը 38 մլն էր:
[10] Federer William J., “The interesting history of Income tax: Includes US. Presindent John.F. Kennedy`s tax plan”, 2004, p.43,
[11] Seligman Edwin R. A.,”The United States Federal Income Tax”, The Economic Journal, Vol. 24, No. 93. March 1914, pp. 57,
[12] 1812-1819թթ. ազնվական ընտանիքները վճարում էին հողի հարկ՝Նապոլեոնի դեմ մղած պայքարում կրած կորուստները վերականգնելու համար:

ամբողջովին իրեն սպառել էր[13]: 1885 թ.-ից այս համակարգը փոխարինվեց եկամտահարկի համակարգով, որը կիրառվում էր ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտների նկատմամբ: 1898 թ.-ից այս համակարգն ուներ ժամանակակից եկամտահարկի բոլոր բնորոշ գծերը՝ հայտարարագրման համակարգ և պրոգրեսիվ դրույքաչափեր:

Նախկին խորհրդային երկրներում ֆիզիկական անձանց եկամուտները առանձին չէին հարկվում, միանգամից հարկվում էր տվյալ կազմակերպության աշխատավարձի ֆոնդը, հետևաբար եկամտահարկի կիրառման արդյունավետության վերաբերյալ խոսք անգամ չէր կարողանալ[14]:

Ներկայումս գրեթե անհնար է պատկերացնել որևէ երկրի հարկային համակարգ, որտեղ ֆիզիկական անձանց եկամուտները չհարկվեն: 2014 թ. փետրվար ամսվա դրությամբ աշխարհում գոյություն ունեն 15 պետություններ, որտեղ եկամտահարկ չի գործում: Դրանք հիմնականում քաղաք պետություններ կամ փոքր կղզիներն են (Անդորրա, Մոնակո, Կայմանյան կղզիներ), ինչպես նաև բնական ռեսուրսներով հարուստ երկրներ (Քաթար, Քուվեյթ, ԱՄԷ)[15]:

Հասարակության յուրաքանչյուր անդամի վրա ունեցած ազդեցությամբ պայմանավորված՝ եկամտահարկը զգալի նշանակություն ձեռք բերեց երկրների հարկման համակարգերում, և պատահական չէ, որ ֆիզիկական անձանց եկամուտների հարկման հիմնահարցերը դուրս չեն մնացել տվյալ ժամանակաշրջանում իշխող տնտեսագիտության տեսության շրջանակներից:

Օրինակ՝ Քեյնսյան տեսական մոտեցումների ժամանակ եկամտահարկին բնորոշ է եղել բավականին կտրուկ պրոգրեսիվությունը, քանի որ ենթադրվում էր, որ տնտեսության աճի մեջ ներդրում ունեն միայն բնակչության ցածր և միջին եկամուտ ունեցող խավը, իսկ հարուստները միտված են ավելի շատ խնայողություններ կատարելու, ինչն էլ հանգեցնում էր

[13] 1824թ. ցարական Ռուսաստանի ֆինանսների նախարար Օգոր Կանկրինի կողմից առաջարկվեց նշված ոլորտներում գործունեության համար սահմանել պտտնագրային վճարների համակարգ:
[14] Leif M., “Income Tax Reform”, Fiscal Policies in Economies in Transition, edited by Vito Tanzi, IMF, 1992, p.167,
[15] www.brennerbrief.com, 15 Countries with no Income Tax, Renee Nal

տնտեսության ակնման, այդ պատճառով բարձր եկամուտներ ունեցողները հարկվում էին շատ բարձր դրույքաչափերով, նույնիսկ մինչև 80%: Սակայն 1980-1990թթ. ԱՄՆ նախագահ Ռեյգանի նախագահության ժամանակ իրականացված հարկային բարեփոխումների արդյունքում Քեյնսի նշված տեսությունը կորցրեց իր արդիականությունը: Մասնավորապես, նշված հարկային բարեփոխումների սկիզբ կարելի է համարել 1980թթ., երբ բարեփոխումների համար որպես տեսական հիմք օգտագործվեց քեյնսյան տեսությանը խիստ հակառակ տեսություն: Վերջինիս համաձայն խնայողությունները ոչ թե հանգեցնում են տնտեսության անկման, այլ հանդիսանում են կապիտալի կուտակման կարևորագույն բաղադրիչ և այդ առումով նպաստում են տնտեսական աճին: Այս բարեփոխումների հիմնական նպատակն էր նվազեցնել բնակչության եկամուտների և կազմակերպությունների շահույթի նկատմամբ կիրառվող դրույքաչափերի պրոգրեսիվությունը: Ռեյգանի ժամանակ ԱՄՆ-ում եկամտահարկի դրույքաչափը 70%-ից նվազեց մինչև 33%, իսկ շահութահարկի դրույքաչափը՝ 34%: Նշված հարկային բարեփոխումների արդյունքում ԱՄՆ-ում աճեց սպառման մակարդակը, ինչն էլ իր հերթին հանգեցրեց տնտեսական աճի: ԱՄՆ-ում գրանցված հաջողությունները նախադեպ հանդիսացան, որպեսզի մյուս զարգացած երկրները ևս վերանայեն իրենց հարկային համակարգերի ձևավորման սկզբունքները:

Ներկայումս եկամտահարկը կարևոր դեր ունի զարգացած երկրների հարկային համակարգերում, ինչը վկայում են նաև վիճակագրական տվյալները (մանրամասները Աղյուսակ 1.1.1-ում):

Հետաքրքրական է այն հանգամանքը, որ թե՛ մինչև 20-րդ դարը, թե՛ դրանից հետո որոշակի կապ կա բնակչության կենսամակարդակի և հավաքագրվող եկամուտների տեսակների միջև: Վերլուծությունները վկայում են, որ այն երկրներում, որտեղ համապատասխան բյուջեներ հավաքագրվող եկամուտների կազմում գերակշռում են ուղղակի հարկերը, այդ երկրներում բնակչության կենսամակարդակը բարձր է, և հակառակը (մանրամասները տես Աղյուսակ 1.1.1-ում):

Աղյուսակ 1.1.1

Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի մեծությունը, եկամտահարկ /ՀՆԱ և եկամտահարկ/հարկային եկամուտներ հարաբերակցությունը մի շարք երկրների օրինակով (2014թ.)

Երկիրը	Մեկ շնչին ընկնող ՀՆԱ (ԱՄՆ դոլար կամ $)[16]	Եկամտահարկ/ՀՆԱ (%)[17]	Եկամտահարկ/Հարկային եկամուտներ (%)
ԱՄՆ	54,399	9.9	38.2
Դանիա	45,996	27.7	54.4
Շվեդիա	45,298	12.2	28.6
Մեծ Բրիտանիա	40,217	8.9	27.5
Իտալիա	35,419	11.6	26.6
Ֆրանսիա	39,163	8.4	18.6

[16] http://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.PP.CD

[17] http://www.oecd-ilibrary.org/taxation/data/revenue-statistics/comparative-tables_data-00262-en, Personal income tax as a percent of total taxation, personal income tax as a percent of GDP, 2014

Աղյուսակ 1.1.1-ի շարունակություն

1	2	3	4
Սլովակիա	28,327	3.0	9.8
Չեխիա	31,186	3.5	10.5
Ռուսաստանի Դաշնություն	25,095	3.6	20.1
Ուկրաինա	8,667	4.8	14.0
Վրաստան	9,204	6.7	14.0
Հայաստան	8,099	6.0	26.8
Ճապոնիա	36,577	5.8	26.6

Տարբեր երկրներում կիրառվող եկամտահարկի մոդելների ուսումնասիրությունները վկայում են, որ զարգացած երկրների ժամանակակից հարկային համակարգի գործառույթները որակապես փոխվել են: Մասնավորապես, եթե մինչև 20-րդ դարի կեսերը հարկային համակարգի հիմնական խնդիրն էր ապահովել պետական բյուջեի բավարար եկամուտներ, ապա 20-րդ դարի կեսերից հետո հարկային համակարգի ձևավորման կարևորագույն խնդիրներից է դառնում ստեղծել այնպիսի հարկային համակարգ, որը չի խոչընդոտի արտադրական և տնտեսական գործունեության իրականացմանը, դեռ ավելին կստեղծի անհրաժեշտ պայմաններ գործարարությամբ զբաղվելու համար: Ձևավորվում էր այսպես կոչված գործարարությունը խթանող հարկային համակարգ[18]: Մյուս կողմից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարկային քաղաքականությունը ուղղակիորեն և անուղղակիորեն ազդում է քաղաքացիների եկամուտների վրա և այս առումով վերջինս մեծ դեր ունի պետությունների կողմից իրականացվող սոցիալական քաղաքականության վրա, հարկային համակարգի ու սոցիալական արդարության կապը գնալով խորանում էր, այսինքն՝ ընդգծվում էր հարկման սոցիալական գործառույթի կարևորությունը: Այդ համատեքստում որոշակի վերափոխումների ենթարկվեցին նաև հարկային համակարգի վերաբերյալ դասական պատկերացումները:

[18] Никитин С.М., Глазова Е.С., “Налогообложения в развитых странах”, Финансовый менеджмент, №4', 2007, ст. 7

Այսպես, օրինակ, եթե Ադամ Սմիթը հարկերը տարանջատում էր ուղղակի և անուղղակի և առանձնացնում էր դրանց ֆիսկալ և կարգավորող գործառույթները, ապա Ջ. Մ. Քեյնսը անդրադարձավ հարկերի բաշխման, սոցիալական, վերահսկողական և քաղաքական գործառույթներին:

Ինչպես գիտենք, հարկման սկզբունքների վերաբերյալ հիմնական մոտեցումները ներառված են Դ. Ռիկարդոյի, Ա. Սմիթի, Ա. Վագների աշխատություններում, սակայն վստահորեն կարող ենք ասել, որ հարկման սկզբունքների վերաբերյալ լավագույն բնորոշումը տվել է Ա. Սմիթը, որի կողմից մշակված սկզբունքներն արդիական են նաև մեր օրերում: Մասնավորապես, Ա. Սմիթը (1723-1790թթ.) իր հայտնի աշխատությունում (1776թ.) ներկայացրեց հարկման չորս հիմնարար սկզբունքները՝ հարկերը պետք է լինեն համաչափ և որոշակի, հարկումը՝ հարմար և ոչ ծախսատար[19]: Մյուս կողմից, վերահիմաստավորվում են նաև հարկման սկզբունքների վերաբերյալ հիմնական մոտեցումները: Ներկայումս հարկման սոցիալական ուղղվածության սկզբունքներից են հարկման համընդհանրությունը և արդարությունը, որոշակիությունը և կայունությունը, արդյունավետությունը, չհարկվող նվազագույն շեմի առկայությունը, հարկման խելամիտ մակարդակը: Հարկերը գանձվում են բացառապես հասարակական նպատակներով. հարկային բեռը պետք է համապատասխանի հարկ վճարողի հնարավորություններին: Հարկերը ներդրվում և փոփոխվում են միայն օրենքների շրջանակներում: Հարկման բացասական ազդեցությունը պետք է նվազագույն ազդեցություն ունենա եկամուտների վերաբաշխման վրա:

Նույնիսկ Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ 117 «Սոցիալական քաղաքականության հիմնական նպատակների և նորմերի մասին» կոնվենցիայում ամրագրվեց, որ ցանկացած քաղաքականություն առաջին հերթին պետք է նպատակաուղղված լինի

[19] Смит А. “Исследование о природе и причинах богатство народов”, Т.2, Кн.5, Об источниках общего или государственного дохода общества, М.Л.: Государственное социально-экономическое исдательство, 1935, ст. 341-343

հասարակության զարգացման և բարեկեցության ապահովմանը, ինչպես նաև սոցիալական առաջընթացի խրախուսմանը[20]:

Հատկանշական է, որ զարգացած երկրներում եկամտահարկը մեծ դերակատարություն ունի հասարակության սոցիալական խնդիրների լուծման հարցում: Ֆիզիկական անձանց եկամուտների հարկումը արդյունավետ լծակ է հանդիսանում պետության սոցիալական քաղաքականության խնդիրների լուծման պարագայում: Սոցիալական ուղղվածությամբ հարկային քաղաքականությունը խրախուսում է ֆիզիկական անձանց ձեռնարկատիրությամբ զբաղվելու ցանկությունները, նպաստում է արտադրության զարգացմանը, ինչն էլ իր հերթին հանգեցնում է հարկային եկամուտների ավելացմանը: Արդյունավետ հարկային քաղաքականության միջոցով պետությունը կարող է ստեղծել տնտեսական երևույթների վերափոխման հսկայական բազա, որը հիմնված է մարդկային ռեսուրսների պոտենցիալի վրա:

Աշխարհում գոյություն ունեն սոցիալական քաղաքականության և սոցիալական հարկման բազմաթիվ մոդելներ, որոնք կարող ենք դասակարգել ինչպես սոցիալական, այնպես էլ սուբսիդիար պետության տեսանկյունից: Սուբսիդիար պետությանը բնորոշ է քաղաքացիներին նվազագույն երաշխիքների տրամադրումը և պետության օժանդակությունը սահմանափակ շրջանակին, հասարակության անդամներին:

Սոցիալական պետությանը բնորոշ է հասարակության յուրաքանչյուր անդամի բարեկեցության մակարդակի նկատմամբ պատասխանատվության զգացում և հասարակության յուրաքանչյուր անդամի համակողմանի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում: Օրինակ՝ զարգացած երկրներում մասամբ կամ ամբողջությամբ եկամտահարկով հարկումից ազատված են բնակչության անապահով խավի ներկայացուցիչները, ինչպես նաև սոցիալական կարևորություն ունեցող ծախսերը, մասնավորապես առողջության վրա կատարվող ծախսերը կարող են նվազեցվել հարկվող եկամտից: Իհարկե, որոշ հեղինակներ գտնում են, որ կարող է ավելի արդյունավետ գործել ուղղակի սուբսիդավորման

[20] Տես՝ հոդված 1, էջ 1

համակարգը[21], մասնավորապես շահառուներին միանգամից համապատասխան գումարներ փոխանցելը, սակայն հետազոտությունները ցույց են տալիս, որ սոցիալական արդարության տեսանկյունից եկամտահարկը առավել արդյունավետ լծակ է սոցիալական արդարության ապահովման գործում[22]:

ԱՄՆ-ում բնակչության ամենաաղքատ 10%-ի և ամենահարուստ 10%-ի հարաբերությունը նվազում է 16%-ից 5.3%՝ սոցիալական օգնության վճարների և առավելապես եկամտահարկի հաշվին[23]: Այս վիճակագրությունը թույլ է տալիս ենթադրել, թե եկամտահարկի ազդեցության ճիշտ գնահատումը կարող է լուրջ ազդեցություն ունենալ տվյալ երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա:

Եկամտահարկի կարգավորող գործառույթի միջոցով սոցիալական քաղաքականության իրականացումը զարգացած երկրներում սկսեց զարգանալ 2-րդ Համաշխարհային պատերազմից հետո, երբ ակնհայտեր եկամտահարկի ազդեցությունը կապիտալի կուտակման, դրա կենտրոնացման, բնակչության վճարունակության՝ հետևաբար նաև պահանջարկի և այլ գործոնների վրա:

Սոցիալական գործառույթի միջոցով եկամտահարկն ազդում է եկամուտների վերաբաշխման անհավասարության, եկամուտների մակարդակի, խնայողությունների, ներքին պահանջարկի ծավալների, կյանքի որակի, դեմոգրաֆիական և այլ սոցիալական ոլորտի ցուցանիշների վրա: Եկամտահարկի միջոցով պետությունը կարողանում է միջամտել սոցիալական քաղաքականության, առողջության պահպանման, գործազրկության, աշխատանքի շուկայի և այլ ցուցանիշների վրա: Մասնավորապես, ֆիզիկական անձանց եկամուտների հարկման, հարկային պարտավորությունների նվազեցման կամ հարկից ազատման միջոցով պետությունը կարողանում է ապահովել բնակչության որոշակի խավի՝ օրինակ՝ անվճար բուժօգնությունը, կրթություն ստանալու իրավունքները և այլ սոցիալական երաշխիքներ: Այսինքն՝ պետությունը

---

[21] Никитин С., Личные доходы населения (на примере развитых стран) , Мировая экономика и международные отношения. 2007, № 2, ст. 6

[22] Болотин Б. Разрыв в доходах населения: данные мировой статистики, Мировая экономика и международные отношения. 2005. № 7; ст. 9

[23] Osley H., Burniaux J.M., Dung T.T. and Dicrole M., “Income Destribution and poverty in OECD countries.” OECD, Economic Studies № 24. 2002/1. Paris. P. 29; OECD. Economic Studies № 34. Paris, 2002/1. p. 38.

եկամտահարկի միջոցով կարողանում է ապահովել սոցիալական կայունություն և արդարություն, ինչը հանգեցրեց պետության սոցիալական գործառույթի և հարկման սոցիալական ուղղվածության կապի խորացմանը: Եվ պատահական չէ, որ հարկային համակարգի վերը նշված փոփոխությունները հանգեցրին սոցիալական հարկերի ի հայտ գալուն (որոշ երկրներում կիրառվում են սոցիալական հարկերի, իսկ որոշներում՝ վճարների համակարգեր): Սոցիալական հարկերի՝ այլ հարկատեսակների հետ ունեցած տարբերությունը կայանում է նրանում, որ վերջինս ունի նպատակային նշանակություն, և այդ գումարներն ուղղվում են բացառապես սոցիալական ապահովության տարբեր ծրագրերի ֆինանսավորմանը՝ կենսաթոշակային, ապահովագրական, զբաղվածության հիմնադրամներ: Սոցիալական հարկերը, որպես կանոն, գանձվում են աշխատավարձերից և դրանց հավասարեցված վճարումներից: Մասնավորապես, սոցիալական հարկեր գանձվում են վարձու աշխատողներից և գործատուներից: Սոցիալական հարկերը զարգացած երկրներում կազմում են հարկային հավաքագրումների շուրջ 10-15%-ը:

Սոցիալական հարկերը, որպես կանոն, ունենում են երկու բաղադրիչ. 1-ին բաղադրիչը հավաքագրվում է անմիջապես վարձու աշխատողներից, իսկ 2-րդ բաղադրիչը՝ վարձու աշխատողների անունից և նրանց համար, որը վճարվում է գործատուների կողմից: Մյուս կողմից, գործատուների կողմից կատարվող սոցիալական վճարները բաժանվում են բաղադրիչների, օրինակ՝ կենսաթոշակային, բժշկական ապահովագրության հիմնադրամներ և այլն (մանրամասն՝ Հավելված 1):

Վիճակագրական տվյալները թույլ են տալիս փաստել, որ սոցիալական հարկերի ընդհանուր գումարի մեծ մասը, իհարկե որոշակի բացառություններով, ձևավորվում է գործատուների կողմից վճարվող սոցիալական հարկերի շնորհիվ (մանրամասն՝ Հավելված 2):

Հաշվի առնելով վերը նշվածը՝ կարող ենք վստահորեն ասել, որ եկամտահարկի ներդրումը լուրջ հեղափոխություն էր ժամանակակից պետությունների հարկային համակարգերում:

ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգի ներդրման պատմության ուսումնասիրությունից կարող ենք եզրահանգել, որ եթե եկամտահարկի ներդրման սկզբնական ժամանակահատվածում այն պատերազմի արդյունքում առաջացած ծախսերի ֆինանսավորման համար այլընտրանքային եկամուտների ապահովման մեթոդ էր, ապա ներկայումս եկամտահարկը, բացի ֆիսկալ գործառույթի իրականացումից, նաև լուրջ քաղաքական և սոցիալական լծակ է պետությունների կողմից իրականացվող տնտեսական կարգավորման գործընթացում:

1.2 Տնտեսական գործոնների ազդեցությունը եկամտահարկի մոդելների ձևավորման վրա՝ ըստ երկրի տնտեսական զարգացվածության մակարդակի

Ավստրիացի տնտեսագետ Յոզեֆ Շումպետերը դեռևս 1918թ.-ին փաստել էր, որ հարկման պատմությունը կարող է ավելի շատ տեղեկատվություն հաղորդել հասարակության մասին, քան պատմությունը: Եվ այն երկրները, որոնք կարողանում են գիտակցել, թե որքան կարևոր է հարկային քաղաքականությունը տվյալ հասարակության բարեկեցության համար կարողանում են ճիշտ ընտրություն կատարել արդյունավետ հարկային քաղաքականության մշակման հարցում: Ակնհայտ է, որ հարկերի վճարումը այնքան էլ հաճելի գործընթաց չէ: Միաժամանակ ենթադրվում է, որ յուրաքանչյուր ոք հարկ վճարելիս պետք է գիտակցի, որ հարկն այն գինն է, որը վճարվում է որոշակի ենթակառուցվածքներ ունենալու և պետության կողմից մատուցվող ծառայություններ ձեռք բերելու համար: Եվ, վերջապես, հարկ վճարողները «հավատում են», որ հարկային բեռը և դրանց վճարման դիմաց ստացված օգուտները բաշխվում են արդարության և հավասարության սկզբունքների հիման վրա: Միևնույն ժամանակ ժամանակակից բարդ տնտեսական և սոցիալական միջավայրում շատ դժվար է մշակել և կիրառել այնպիսի հարկային համակարգ, որը

կատարելապես կբավարարի արդարության և հավասարության սկզբունքներին, չնայած այդպիսի հարկային համակարգի ստեղծումը հանդիսանում է բոլոր պետությունների կառավարությունների կարևորագույն թիրախներից մեկը[24]:

Մյուս կողմից, բոլորը կհամաձայնեն, որ «արդարություն» և «հավասարություն» հասկացությունների սահմանումը բավականին բարդ է, նույնիսկ անհնար, քանի որ վերջիններս բարոյական և սոցիալական կատեգորիաներ են, և յուրաքանչյուր ոք ունի իր պատկերացումները արդարության և հավասարության վերաբերյալ:

Այնուամենայնիվ, հարկային քաղաքականությունը վկայում է, և տեսաբանները համաձայնում են, որ հարկային համակարգը կարող է համարվել արդար, եթե այն բավարարի հորիզոնական և ուղղահայաց արդարության սկզբունքներին: Հարկման հորիզոնական արդարություն ասելով հասկանում ենք՝ եկամտի (հարկվող օբյեկտի) նույն մեծությունից յուրաքանչյուր ոք (հարկատու) պետք է վճարի հարկի նույն գումարը («հավասարների նկատմամբ հավասար վերաբերմունք»)[25]: Ընդ որում, այս սկզբունքի կիրառումը համարվում է պարտադիր: Հաջորդ՝ հարկման ուղղահայաց սկզբունք ասելով, հասկանում ենք, որ վճարման ենթակա հարկի գումարն ուղիղ համեմատական է եկամտի (գույքի) մեծությանը՝ ինչքան մեծ է եկամտի (գույքի) մեծությունը, այնքան մեծ է դրանցից գանձվող հարկի գումարի չափը: Այս սկզբունքի կիրառումը ցանկալի է, բայց ոչ պարտադիր:

Ինչ վերաբերում է ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգում նշված սկզբունքների կիրառմանը, ապա մեր կարծիքով եկամտահարկի առաջնային դերը ողջ հարկային համակարգի հորիզոնական և ուղղահայաց սկզբունքների ապահովումն է: Եկամտահարկն այն միակ հարկատեսակն է, որ կարող է հարկային համակարգին հաղորդել հսկայական պրոգրեսիվություն (ուղղահայաց արդարության սկզբունք): Սակայն շատ մեծ պրոգրեսիվությունն էլ իր հերթին առաջ է քաշում մի շարք այլ

[24] Guiding Principles for Tax Equity and Fairness, American Institute of Certified Public Accountants, New York, 2007, p. 6,

[25] Глухов В.В., Дольдэ И. В.,“Налоги, теория и практика”, Издательство Специальная литература, 1996, стр. 32

խնդիրներ: Մասնավորապես, եկամտահարկի շատ բարձր սահմանային դրույքաչափերը խնդրահարույց են, քանի որ դրանք հանգեցնում են աշխատելու ցանկության կրճատմանը, եկամուտների թերհայտարարագրման դեպքերի աճին, ինչն էլ իր հերթին դժվարացնում է վարչարարության իրականացումը: Այս առումով առավել նպատակահարմար է խելամիտ պրոգրեսիվությունը՝ ընդլայնելով հարկվող օբյեկտը:

Եկամտահարկը կարող է ունենալ առանձնահատուկ ներդրում նաև հարկային համակարգի հորիզոնական արդարության սկզբունքի ապահովման հարցում, քանի որ եկամտահարկը հաշվարկվում է անմիջապես ֆիզիկական անձի եկամտից, ապա հարկվող եկամտի սահմանումը կարող է ձևափոխվել՝ ըստ տվյալ հասարակության համար ընդունելի արդարության սկզբունքների:

Ընդհանրապես տեսության մեջ գոյություն ունի եկամտահարկի երկու մոդել՝ միասնական (global) և կառուցվածքային (schedular): Միասնական եկամտահարկի մոդելի դեպքում եկամտահարկով հարկման ենթակա եկամուտ է համարվում տվյալ ֆիզիկական անձի համախառն եկամուտը՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից: Մինչդեռ կառուցվածքային եկամտահարկի մոդելի դեպքում տվյալ ֆիզիկական անձի եկամտահարկով հարկման ենթակա եկամտի տարբեր տեսակների նկատմամբ կիրառվում են հարկի հաշվարկման տարբեր ընթացակարգեր: Զարգացած երկրներում առավել տարածված են եկամտահարկի միասնական մոդելները, իսկ զարգացող կամ անցումային տնտեսությամբ երկրներում՝ եկամտահարկի կառուցվածքային մոդելները: Այս միտումը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Մասնավորապես, կառուցվածքային եկամտահարկի մոդելի դեպքում նվազում են հարկերի հավաքագրման հետ կապված վարչարարական ծախսերը, քանի որ եկամտահարկը գանձվում է հիմնականում հարկային գործակալների միջոցով: Մյուս առավելությունը կայանում է նրանում, որ եկամտահարկի կառուցվածքային մոդելի պարագայում տվյալ երկրի կառավարությունը տարբերակված դրույքաչափերի միջոցով կարող է ավելի բարենպաստ հարկման պայմաններ ստեղծել ֆիզիկական անձանց որոշակի խմբերի, կապիտալի որոշակի տարրերի հարկման

համար, այսինքն՝ վերջինս տվյալ երկրի կառավարության համար կարող է արդյունավետ լծակ լինել որոշակի սոցիալական խնդիրներ լուծելու հարցում: Ամեն դեպքում տեսականորեն առավել ընդունելի է եկամտահարկի միասնական մոդելը, քանի որ եկամտահարկի պրոգրեսիվ դրույքաչափերի սանդղակը թույլ է տալիս առավելագույնս ապահովել հարկման ուղղահայաց և հորիզոնական արդարության սկզբունքները, քանի որ հարկը կիրառվում է տվյալ ֆիզիկական անձի ստացած բոլոր եկամուտների՝ համախառն եկամտի նկատմամբ: Այս համակարգը կարող է արդյունավետ լինել վարչարարության տեսանկյունից, մասնավորապես՝ տարբեր աղբյուրներից եկամուտ ստացող ֆիզիկական անձինք ստիպված չեն լինի ներկայացնել տարբեր հաշվարկներ, հայտարարագրեր, և հաշվետու ժամանակաշրջանից հետո բավարար կլինի մեկ միասնական հաշվարկի ներկայացումը:

Միաժամանակ, եկամտահարկի միասնական մոդելի դեպքում գրեթե բացառված են այն դեպքերը, երբ եկամտի որևէ տեսակ եկամտի որևէ խմբում սահմանված չլինելու պատճառով կարող է դուրս մնալ հարկման դաշտից: Շատ երկրներում նմանօրինակ խնդիրներից խուսափելու նպատակով սահմանվում է «այլ եկամուտներ» ենթախումբը, որն իր մեջ ներառում է մնացած այլ եկամուտները:

Չնայած վերը նշված առավելություններին և թերություններին՝ աշխարհում չկան բացարձակ միասնական կամ կառուցվածքային եկամտահարկի մոդելներ, սակայն, որպես ընդհանուր միտում, կարող ենք փաստել՝ հիմնականում աշխարհում ավելի մեծ տարածում ունեն եկամտահարկի կառուցվածքային մոդելները: Միևնույն ժամանակ շատ են այն երկրները, որտեղ գործում է միասնական եկամտահարկի մոդելը՝ կառուցվածքային մոդելի որոշակի տարրերի համակցությամբ: Գոյություն ունեն նաև եկամտահարկի բարդ մոդելներ, որոնք իրենցից ներկայացնում են, ըստ էության, կրկնակի հարկման համակարգեր[26]: Այս համակարգի պարագայում առաջին փուլում եկամտահարկ գանձվում է կառուցվածքային մոդելին բնորոշ մոտեցումներին

[26] Plasschaert S., “Schedular, Global and Dualistic Patterns of Income Taxation”, 1988, p. 17

համապատասխան, այնուհետև բոլոր եկամուտները համախմբվում են և կիրառվում է եկամտահարկի միասնական մոդելի մոտեցումները:

Ժամանակի ընթացքում աշխարհում տեղի ունեցող տնտեսական իրողությունները հանգեցրել են միասնական և կառուցվածքային եկամտահարկի մոդելների մի շարք վերափոխումների, որոնց արդյունքում մի շարք չափանիշներից ելնելով, եկամտահարկի մոդելները պայմանականորեն բաժանվում են հինգ խմբի՝ միասնական (comprehensive), դուալ (dual), մասնակի դուալ (semi-dual), հաստատագրված (flat), ծախսերի հարկման:

Միասնական եկամտահարկի կիրառման դեպքում հարկվող եկամտի բոլոր տեսակների նկատմամբ կիրառվում է դրույքաչափի նույն սանդղակը, որպես կանոն պրոգրեսիվ, ինչը նշանակում է, որ թե՛ աշխատավարձի տեսքով, թե՛ կապիտալից ստացված եկամուտների նկատմամբ կիրառվում է եկամտահարկի նույն դրույքաչափը:

Միասնական եկամտահարկի մոդելի բացարձակ տեսակը ենթադրում է, որ համախառն եկամտի սահմանումը համապատասխանում է Ծանզ-Հեյգ-Սիմոնսի կողմից սահմանված «ֆիզիկական անձի եկամուտ» սահմանմանը[27]:

Ընդհանրապես եկամտահարկի արդյունավետ կիրառման առանցքային խնդիրներից է համախառն եկամտի ճիշտ սահմանումը: Շատ հեղինակներ են տվել համախառն եկամտի բնորոշումը, սակայն մինչ օրս եկամտի լավագույն բնորոշում է համարվում Հենրի Սիմոնսի սահմանումը, որի համաձայն եկամուտը՝ սպառման իրավունքն է արտահայտված շուկայական գներով, ինչպես նաև գույքային իրավունքների արժեքի փոփոխությունը հաշվետու ժամանակահատվածի սկզբում և վերջում[28]:Այլ կերպ ասած՝ եկամուտը հաշվետու ժամանակահատվածում սպառման և հաշվետու ժամանակահատվածի սկզբի և վերջի դրությամբ հարստության դրական տարբերությանհանրագումարն է[29]:

---

[27] King J. R., “The Concept of Income”, edited by Parthasarathi Shome, Tax Policy Handbook, IMF, Washington D.C, 1995, pp. 117-118, 318

[28] Simons H. C., “Personal Income Taxation: The Definition of Income as a Problem of Fiscal Policy”, Chicago, University of Chicago Press, 1938, p.50

[29] Նման սահմանումներ տրվել էին ավելի վաղ շրջանում Հեյգի (1921) և Ծանզի (1986) կողմից, ինչով էլ պայմանավորված գրականության մեջ համախառն եկամուտի այս սահմանումը կոչվում է Ծանզ-Հեյգ-Սիմոնսի:

Միաժամանակ գլոբալիզացիոն գործընթացների խորացմանը զուգընթաց, որպես միասնական եկամտահարկի մոդելի կիրառման բացասական կողմ, ի հայտ եկավ նաև այն, որ ի տարբերություն աշխատուժի, կապիտալը դարձավ ավելի մոբիլ, այսինքն՝ ֆիզիկական անձանց համար ստեղծվեցին հնարավորություններ ներդրումներ կատարել այնպիսի երկրներում, որտեղ կապիտալի հարկումն ավելի թեթև է, ինչն էլ հանգեցրեց իրենց երկրներում եկամուտների թերհայտարարագրման դեպքերի աճի: Թերևս, սահանդիսացավ պատճառ, որ շատ զարգացած երկրներ անցում են կատարել միասնական եկամտահարկի մոդելից եկամտահարկի հարկման կիսադուալ համակարգերի՝ կապիտալի հարկման համար սահմանելով ավելի ցածր եկամտահարկի դրույքաչափեր:

Այս մոդելի առաջացումը հիմնականում պայմանավորված է կազմակերպությունների և կապիտալի հարկման անհամամասնությունները հարթելու նպատակով 1990-ական թթ. Ֆինլանդիայում, Շվեդիայում և Նորվեգիայում, ինչպես նաև որոշ չափով էլ Դանիայում եկամտահարկի համակարգում տեղի ունեցած բարեփոխումներով[30]:

Դուալ եկամտահարկի մոդելն իրենից ներկայացնում է աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների տեսքով ստացված եկամուտների հարկում՝ պրոգրեսիվ դրույքաչափով, և կապիտալի տեսքով ստացված եկամուտների հարկում՝ հաստատագրված դրույքաչափերով, ընդ որում՝ հաստատագրված դրույքաչափի մեծությունը, որպես կանոն, համապատասխանում է շահութահարկի և աշխատավարձի նկատմամբ կիրառվող եկամտահարկի դրույքաչափերի պրոգրեսիվ սանդղակի ամենացածր դրույքաչափին[31]:

Այս մոդելի բացարձակ տարբերակը գործում է Նորվեգիայում:

Վարչարարության տեսանկյունից այս մոդելի կիրառությունը բավականին ծախսատար է այն դեպքերում, երբ նույն ֆիզիկական անձը ստանում է տարբեր տեսակի եկամուտներ՝ աշխատավարձ և կապիտալ: Ինչ վերաբերում է այս մոդելի հարկման հորիզոնական արդարության սկզբունքի ապահովմանը, ապա եթե դիտարկենք առանձին աշխատավարձի և կապիտալի տեսքով եկամուտ

[30] Boadway R., “The Dual Income Tax System-An Overview”, CESifo Dice Report, 3/2004, p.3
[31] Sorensen P. B., “Dual Income Taxation: Whay and How?”, CESIFO, Working Paper No, 1551, 2005, p.3

ստացողներին, ապա առանձին-առանձին այն պահպանվում է: Հարկման հորիզոնական արդարության սկզբունքը խաթարվում է միայն այն ֆիզիկական անձանց դեպքում, ովքեր ստանում են երկու տեսակի եկամուտներ: Իհարկե, այս դեպքում էլ այս մոդելի կողմնակիցները գտնում են, որ հորիզոնական արդարության սկզբունքը չի խաթարվում, եթե ֆիզիկական անձանց եկամուտների հարկումը դիտարկենք ոչ թե մեկ տարվա, այլ ամբողջ կյանքի ընթացքում:

Եկամտահարկի 3-րդ տեսակը մասնակի դուալ մոդելն է, որի հիմնական առանձնահատկությունն այն է, որ եկամտի որոշ տեսակներ հարկվում են ցածր դրույքաչափերով, իսկ մնացած տեսակները՝ հիմնականում աշխատավարձի և դրանց հավասարեցված վճարումների տեսքով ստացվող եկամուտները՝ պրոգրեսիվ դրույքաչափերով: Մոդելը տարածում ունի ՏՀԶԿ անդամ երկրներից գերակշիռ մասում: Հատկանշական է, որ որոշ մասնագետներ այս մոդելն անվանում են կիսամիասնական, սակայն տեսական մակարդակով այս երկու մոդելների տարբերությունները հստակ տարանջատված չեն[32]:

Ինչ վերաբերում է եկամտահարկի 4-րդ մոդելին, ապա վերջինիս ներդրումը հիմնականում պայմանավորված է 1980թթ. ԱՄՆ-ում սկսված գործընթացներով, երբ Ռոբերտ Հոլը և Ալվին Ռաբուշկան 1985թ.-ին հրատարակեցին «Հաստատագրված հարկ» գիրքը, որտեղ հեղինակները քննադատում էին ԱՄՆ-ում գործող եկամտահարկի համակարգը և նրանց կողմից որպես լավագույն այլընտրանք առաջարկվում էր ֆիզիկական անձանց եկամուտները հարկել մեկ միասնական դրույքաչափով[33]: Միաժամանակ, հեղինակները կարևորում էին չհարկվող շեմի պարտադիր առկայությունը: ԱՄՆ-ում եկամտահարկի հաստատագրված մոդելը չընդունվեց, սակայն եկամտահարկի հաստատագրված մոդելի ներդրումը լայն տարածում գտավ անցումային տնտեսությամբ շատ երկրներում, հատկապես Արևելյան Եվրոպայի երկրներում: Վերջինս առաջին անգամ կիրառվել է 1994 թ.-ին՝ Էստոնիայում, երբ եկամուտների և

[32] Fundamental Reform on Personal Income Tax, No-13, OECD, 2006, p. 82,
[33] Turley G., Luke P., “Transition Economics: Two Decades on”, Routledge, New Yorq, 2011, p. 120

շահույթների հարկման համար սահմանվեց մեկ դրույքաչափ՝ 26%: Էստոնիայի փորձը սկսեց կիրառվել մյուս բալթյան երկրներում, ինչպես նաև կենտրոնական և արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում, այդ թվում՝ նաև Ռուսաստանի Դաշնությունում, որտեղ հաստատագրված եկամտահարկը սկսվել է կիրառվել 2001թ.-ից:

Միասնական հարկ կիրառելու մոտեցման կողմնակիցները գտնում են, որ վերջինիս կիրառությունը հնարավորինս պարզեցնում է հարկային համակարգը և կիրառելիության տեսանկյունից շատ պարզ է:

Հաստատագրված եկամտահարկի մոդելն իր հերթին ունի տարատեսակներ, մասնավորապես՝

- եկամտահարկի հաստատագրված դրույքաչափ, (եկամտի չհարկվող շեմ չի կիրառվում),
- եկամտահարկի հաստատագրված դրույքաչափ, (չհարկվող շեմի առկայություն),
- եկամտի չհարկվող շեմը գերազանցելու դեպքում եկամտահարկի հաստատագրված դրույքաչափ,որն իրենից ավելի շատ ներկայացնում է սպառման հարկ՝ եկամտի չհարկվող շեմի առկայությամբ:
- եկամտահարկի հաստատագրված դրույքաչափ, չհարկվող շեմի առկայություն, ընդ որում՝ եկամտի չհարկվող շեմի գումարը բոլորի համար նույն է, որը ենթադրվում է՝ փոխարինում է բոլոր սոցիալական օգուտները:

Հաստատագրված եկամտահարկի մոդելի դեպքում համակարգի պրոգրեսիվությունը պահպանվում է չհարկվող շեմի առկայությամբ: Միաժամանակ, հաստատագրված եկամտահարկի ներդրման պարագայում, ինչպես վկայում են վիճակագրական տվյալները, այդ երկրներում վերանայվել և գերակշիռ մասում բավականին բարձրացվել են չհարկվող եկամտի մակարդակները[34]:

Այնուամենայնիվ, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ եկամտահարկի պրոգրեսիվ դրույքաչափից մեկ միասնական դրույքաչափ սահմանելու դեպքում եկամտահարկի և շահութահարկի

[34] Kim K., Varsano R., Keen M., “The Flat Taxes: Principles and Evindence”, IMF, Working Paper, 2006, p. 42-45,

գծով հավաքագրումները նվազում են՝ զուգահեռ բարձրացնելով անուղղակի հարկերի դրույքաչափերը[35]:

Հարկման պատմության մեջ ամենահին գաղափարներից է ֆիզիկական անձանց եկամուտների հարկումը ծախսերի հարկման միջոցով իրականացնելու գաղափարը: Այս գաղափարը դեռևս բարձրաձայնվել է Ջ.Ս. Միլի, Ի. Ֆիշերի կողմից, սակայն իր զարգացման գագաթնակետին է հասել Նիկոլաս Կալդորի կողմից[36]: Շատ տնտեսագետներ գտնում են, որ ծախսերի հարկումը ֆիզիկական անձանց եկամուտների հարկման լավագույն եղանակն է: Այս մոտեցման հիմնական փաստարկն այն է, որ ներկա ապագա սպառումը կհարկվի նույն դրույքաչափով, ինչը եկամուտների հարկման դեպքում այդպես չէ, քանի որ ապագա սպառումն ավելի բարձր դրույքաչափերով է հարկվում, քան ներկա սպառումը: Ֆիզիկական անձանց հարկումը սպառման, թե եկամուտների տեսանկյունից հարկելու վերաբերյալ գոյություն ունեն մի շարք տեսակետներ, սակայն գործնականում աշխարհում չկա որևէ երկիր, որը եկամուտների հարկումը փոխարինի ծախսերի հարկմամբ:

Եկամտահարկի մոդելի մշակման ժամանակ հաշվի են առնվում չորս հիմնական սկզբունքներ՝

1. հարկվող միավորի ընտրությունը,
2. հարկման ենթակա եկամուտների աղբյուրները,
3. նվազեցումների համակարգը,
4. դրույքաչափերի առանձնահատկությունները:

Կախված վերը նշված սկզբունքների ընտրությունից՝ տարբեր երկրներ ունեն եկամտահարկի տարբեր մոդելներ: Հարկվող միավորի որոշման եղանակները չորսն են[37]: Հարկվող օբյեկտի որոշման առաջին եղանակի դեպքում ֆիզիկական անձի եկամուտը հարկվում է՝ առանց հաշվի առնելու ամուսնական կարգավիճակը, երկրորդ եղանակի դեպքում՝ հարկվող եկամտի որոշման ժամանակ կարևորվում է տվյալ ֆիզիկական անձի ամուսնական կարգավիճակը,

[35] Saavedra P. with contributions from Marcincin A. and Valachy J., “Flat Income Tax Reforms”, Fiscal Policy and Economic Growth, Lessons for Eastern Europe and Central Asia (edited by Cheryl Gray, Tracey Lane, Aristomene Varoudakis, The World Bank, Washington D.C., 2007, p. 264

[36] The Expenditure Tax: Concept, Administration and Possible Applications, Advisory Commission on Intergovernmental Relataions, Washington, D.C., 1974, p. 3,

[37] Thuronyi V., “Tax Law Design and Drafting”, International Monetary Fund, 1988, vol. 1, p. 538

մասնավորապես՝ հարկվող եկամուտը որոշվում է ամուսնացած զույգի ստացած համատեղ համախառն եկամտից: Երրորդ եղանակը, ըստ էության, հանդիսանում է առաջին երկուսի յուրօրինակ համադրումը. ամուսնացած ֆիզիկական անձինք հնարավորություն ունեն ընտրելու, թե վերը նշված որ եղանակով են ցանկանում վճարել եկամտահարկ: Եվ վերջապես հարկվող եկամտի որոշման չորրորդ եղանակի ընտրության դեպքում հարկվող եկամուտը հաշվարկվում է՝ հաշվի առնելով տվյալ ֆիզիկական անձի ընտանիքի անդամների ստացած եկամուտների ընդհանուր գումարը: Չնայած վերը նշվածին՝ հարկման տեսության մեջ բացակայում է նշյալ եղանակներից որևէ մեկի հարաբերականորեն առավել արդյունավետ լինելու միանշանակ գնահատական:

Եկամտահարկի կայացման դեռևս վաղ փուլերում, օրինակ՝ 1799 թ.-ի Մեծ Բրիտանիայի եկամտահարկի մասին օրենքի համաձայն՝ չամուսնացած ֆիզիկական անձանց և ամուսնական զույգերի հարկվող եկամտի որոշման կանոնները միանման էին, քանի որ այդ ժամանակաշրջանում շատ երկրների իրավական համակարգերում կանայք չէին համարվում, այսպես կոչված «ինքնուրույն միավորներ»[38]: Դրանից մեկ դար հետո Ավստրալիայում, Կանադայում, Նոր Զելանդիայում, Ծվեդիայում և ԱՄՆ-ում ընդունվեցին եկամտահարկի մասին օրենքները, որոնց դրույթների համաձայն հարկվող եկամտի որոշման ժամանակ հիմք էր ընդունվում տվյալ ֆիզիկական անձի համախառն եկամուտը՝ անկախ նրա ամուսնական կարգավիճակից:

Վերջին տարիներին ՏՀԶԿ բոլոր երկրներում միանգամից կամ աստիճանաբար անցում է կատարվել հարկվող եկամտի որոշման առաջին՝ անհատական եղանակին: Միաժամանակ, որոշ երկրներում հարկվող եկամտի որոշման եղանակը կարող է փոփոխվել՝ կախված ստացվելիք եկամտի տեսակից: Օրինակ, Նիդերլանդներում աշխատավարձի տեսքով ստացված եկամուտների հարկման դեպքում հարկվող եկամուտը որոշվում է անհատական հիմքի վրա, իսկ շահաբաժինների տեսքով ստացված եկամուտների դեպքում՝

[38] Head J. G., Krever R. E., “Tax units and the tax rate scale”, 1996, p. 35,

միասնական եղանակով[39]: Ամուսնական կարգավիճակից կամ ընտանիքի անդամների թվով պայմանավորված՝ հարկվող եկամտի որոշման ամենացայտուն համակարգը կարծում ենք՝ Ֆրանսիայի եկամտահարկի համակարգն է (Տես՝ Աղյուսակ 1.2.1):

Աղյուսակ 1.2.1[40]

Ըստ ընտանեկան կարգավիճակի եկամտահարկով հարկման առանձնահատկությունները մի շարք երկրների օրինակով (2015թ.)

	Տարեկան եկամտահարկի հաշվարկի ներկայացման պահանջ	**Ըստընտանեկան կարգավիճակի եկամտահարկի հաշվարկման դրության առկայություն**	**Առանձնահատկություններ**
Ավստրիա	պարտադիր է	ներկայացվում են անհատական հաշվարկներ	Եկամտահարկի հաշվարկից յուրաքանչյուր երեխայի համար տրամադրվում են հարկվող եկամտի նվազեցման հնարավորություններ: Օրինակ, 1 երեխայի գծով հնարավոր է հարկվող եկամուտը նվազեցնել 1510 եվրոյով, 4 երեխայի դեպքում՝ 14.060 եվրոյով, հաշմանդամ երեխայի դեպքում՝ 3020 եվրոյով: Հարկի գումարից նվազեցվում են նաև երեխաների խնամքին ուղղված գումարները՝ 12 տարեկան երեխաների դեպքում օրական 11.20 եվրոյի չափով: Հարկի գումարից նվազեցման ենթակա են նաև մասնավոր տների՝ հրդեհից և գողությունից պաշտպանելու համար կատարված ապահովագրության գումարները:
Բելգիա	պարտադիր է	ներկայացվում են անհատական հաշվարկներ	

[39] Sommerhalder R., “The Taxation of Families and Individuals in Europe”, International Bureau of Fiscal Documentation, Amsterdam, 1996, p. 166-179

[40] www.ey.com, Publications, Worldwide Personal Tax Guide: Income tax, social security and immigration, 2015-2016

Աղյուսակ 1.2.1-ի շարունակություն

1	2	3	4
Ֆրանսիա	պարտադիր է	ամուսնական զույգերը ներկայացնում են բացառապես միասնական տարեկան եկամուտների հաշվարկներ	Գործում է Ընտանեկան գործակիցների համակարգ, որը թույլ է տալիս ըստ ընտանիքի անդամների թվի ստանալ համապատասխան գործակիցներ՝ հարկվող եկամուտը նվազեցնելու համար:Օրինակ, 2 երեխա ունեցող ընտանիքի հարկվող եկամուտը կարող է նվազեցվել 3 գործակցով: Նվազեցման ենթակա են մի շարք ծախսեր, այդ թվում երեխայի խնամքը, ուսման վրա կատարված ծախսերը, որոնք փաստաթղթերով հիմնավորված են:
Գերմանիա	պարտադիր է	ըստ հայեցողության՝ կարող են ներկայացվել թե՛ անհատական, թե՛ միասնական հաշվարկներ:	Նվազեցման ենթակա են այդ թվում՝ նաև երեխայի խնամքի, ուսման, մասնագիտական գրականության ձեռք բերման համար կատարված ծախսերը, աշխատանքի մեկնելու համար տրանսպորտային ծախսերը: Միասնական հաշվարկներ ներկայացնող ընտանիքները յուրաքանչյուր երեխայի համար կարող են ստանալ ամսական 364 եվրոյի չափով նվազեցման իրավունք, իսկ առանձին ներկայացնելու դեպքում՝ 182 եվրո:
Դանիա	պարտադիր է	ներկայացվում են անհատական հաշվարկներ	Թույլատրվում է կատարել տարեկան կտրվածքով 43.400 դանիական կրոնին համարժեք նվազեցումը, որը ամուսնական զույգերը կարող են բաժանել ըստիրենց կողմից նախընտրելի համամասնության:
Ֆինլանդիա	պարտադիր է	ներկայացվում են անհատական հաշվարկներ	
ԱՄՆ	պարտադիր է	ըստ հայեցողության՝ կարող են ներկայացվել թե՛ անհատական, թե՛ միասնական հաշվարկներ: Գոյություն ունի նաև ընտանիքի գլխավոր հանդիսանալու դեպքում եկամտահարկի հաշվարկի տարբերակ:	Ըստ հաշվարկի ներկայացման ձևից՝ կիրառվում են եկամտահարկի տարբեր դրույքաչափեր: Որպես կանոն, նվազեցումներ գույքային հարկերը, առողջության համար կատարված ծախսերը, որոնք չեն փոխհատուցվել, հիփոթեքային վարկերի և ապառիկի համար վճարված տոկոսների գումարները, ինչպես նաև անձնական նվազեցում՝ 4000 դոլարի չափով:

Աղյուսակ 1.2.1-ի շարունակություն

1	2	3	4
Էստոնիա	պարտադիր է	ըստ հայեցողության՝ կարող են ներկայացվել թե անհատական, թե միասնական հաշվարկներ:	Թույլատրվում է կատարել ընդհանուր նվազեցում՝ 1848 եվրոյի չափով, յուրաքանչյուր երեխայի համար ևս 1848 եվրո, հիփոթեքային վարկերի և ապառիկի համար վճարված տոկոսների գումարները՝ 1920 եվրոյի չափով և այլն:
Վրաստան	պարտադիր է հարկային գործակալի կողմից հարկեր չհաշվարկելու դեպքում	ներկայացվում են անհատական հաշվարկներ	
Ռուսաստան	պարտադիր է հարկային գործակալի կողմից հարկեր չհաշվարկելու դեպքում	ներկայացվում են անհատական հաշվարկներ	Կարող են ներկայացնել տարեկան հաշվարկներ՝ որոշակի նվազեցումներից և արտոնություններից օգտվելու նպատակով:
Ղազախստան	պարտադիր է հարկային գործակալի կողմից հարկեր չհաշվարկելու դեպքում	ներկայացվում են անհատական հաշվարկներ	
Հայաստան	պարտադիր է հարկային գործակալի կողմից հարկեր չհաշվարկելու դեպքում	ներկայացվում են անհատական հաշվարկներ	

Աղյուսակ 1.2.1-ից ակնհայտ է զարգացած երկրներում ինքնահայտարարագրման համակարգի լայնորեն կիրառումը, որի թերևս ամենագլխավոր առավելությունն այս երկրներում ծախսերի հայտարարագրման համակարգի զարգացումն է: Իհարկե, հարկվող եկամտի՝ ըստ ամուսնական կարգավիճակի որոշելու եղանակը, այնուամենայնիվ կարող է հանգեցնել որոշակի իրավական խնդիրների՝ կապված ամուսնության գրանցման, նախկինում զույգերից մեկի ամուսնացած, սակայն օրենքով սահմանված

կարգով բաժանված չլինելու, ինչպես նաև իրավական բնույթի մի շարք այլ հանգամանքներով[41]:

Ցանկացած հարկային համակարգի համար շատ կարևոր է որոշել ֆիզիկական անձանց հարկման սկզբունքները՝ անկախ քաղաքացիությունից և ազգությունից: Այսինքն՝ ռեզիդենտության կանոնների միջոցով հնարավորություն է ընձեռնվում որոշելու եկամտի ստացման աղբյուրը: ՏՀՁԿ հարկային համաձայնագրերի մոդելը թույլ է տալիս ռեզիդենտին արտասահմանում կատարած աշխատանքի համար ստացած եկամուտը հարկել ռեզիդենտության երկրում, եթե նա արտասահմանում չի գտնվել 183 օրից ավել[42]: Այս դրույթը գործում է երկրների մեծամասնությունում, այդ թվում՝ նաև ՀՀ-ում:

Եկամտահարկի համակարգի մշակման հաջորդ կարևորագույն քայլը դրույքաչափի ընտրությունն է:

Ինչպես արդեն նշել ենք, եկամտահարկի պրոգրեսիվ դրույքաչափը հնարավորություն է տալիս ապահովել հարկման ուղղահայաց սկզբունքը, ինչն էլ իր հերթին արդյունավետ ծակ է պետությունների համար եկամուտների վերաբաշխման հարցում: Թերևս սա է պատճառը, որ աշխարհի երկրների մեծ մասում գործում են եկամտահարկի պրոգրեսիվ դրույքաչափերը (Տես՝ Հավելված 3):

Մյուս կողմից եկամտահարկի դրույքաչափերի ընտրության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ գրեթե բոլոր երկրներում աշխատավարձի և դրան հավասարեցված միջոցների նկատմամբ կիրառվում են սոցիալական վճարներ կամ հարկեր, որոնք մեծացնում են հարկային բեռը: Որպես կանոն, սոցիալական վճարների կամ հարկերի դրույքաչափերի սանդղակը լինում է ռեգրեսիվ[43]:

Միաժամանակ, հարկ ենք համարում ներկայացնել նաև եկամտահարկի մոդելների դասակարգումը՝ ըստ վերջիններիս պատմական նշանակության տեսանկյունից: Իհարկե, նշված տարբերակումն ունի խիստ սուբյեկտիվ բնույթ՝ կապված

[41] Stotsky J., “The Choice of taxable Unit”, Tax Policy Handbook ed. P. Shome, IMF, 1995, p. 129
[42] OECD Model Tax Convention on Income and Capital, p. 80
[43] Zee Howell H., “Personal Income Tax Reform:Concepts, Issues, and Comparative Country Developments”, IMF Working Paper, 2005, p. 16

հետազոտողի համար ընդունելի չափանիշներից, այդուհանդերձ այս խմբավորման համար հիմք են հանդիսացել առավել ընդհանուր չափանիշներ՝ պատմական իրադարձությունները, սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակները, ինչի արդյունքում եկամտահարկի մոդելները տարանջատվել են 8 խմբի (մանրամասները՝ Հավելված 4-ում):

1.3 Եկամտահարկի դերը պետության կողմից սոցիալական քաղաքականության իրականացման գործընթացում

Ֆիզիկական անձանց եկամուտների՝ սոցիալական վճարներով հարկման համակարգերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին քսան տարիներին, սոցիալական ապահովության համակարգերը լուրջ փոփոխությունների են ենթարկվել: Սոցիալական ծրագրերի ֆինանսավորման համար անհրաժեշտ սոցիալական վճարների համապատասխան մակարդակ ապահովելու ձգտումը շատ երկրների համար դարձել է մարտահրավեր, որը հիմնականում պայմանավորված է ժողովրդագրական խնդիրներով՝ բնակչության ծերացման մակարդակի աճը, ծնելիության մակարադակի նվազումը, կյանքի միջին տևողության աճը և այլն:

Ըստ մի շարք վիճակագրական տվյալների՝ 2040 թ.-ին Եվրոպայում 59-ը տարեկանից բարձր մարդկանց թիվը գրեթե կհավասարվի 20-50 տարեկան մարդկանց թվին, իսկ կախվածության գործակիցը 2030 թ.-ին կարող է հասնել մինչև 45%[44]:

Այս համատեքստում 1990 թթ.-ից մի շարք միջազգային կազմակերպություններ և հաստատություններ խրախուսում էին սոցիալական վճարների և հարկերի հավաքագրման մեխանիզմների միավորման գաղափարը: Այս կազմակերպություններից էր նաև Արժույթի Միջազգային Հիմնադրամը, որը 1994 թ.-ին հրապարակեց հաշվետվություն, որով առաջարկվում էր սոցիալական ապահովության վճարների հավաքագրումը իրականացնել եկամտահարկի հավաքագրման հետ միասին և որպես պատասխանատու

[44] Hedva S., Youcef Gh., “The political economy of pension reforms in times of global crisis: state unilateralism or social dialogue?”, International Labour office, Jeneva, February 2012, p. 1

մարմին սահմանել հարկային մարմնին, ինչը թույլ կտա տնտեսել որոշակի վարչարարական ռեսուրսներ[45]:

Մյուս կողմից, մի շարք հեղինակներ գտնում էին, որ միավորման դրական արդյունքները պայմանավորված են ավելի շատ սոցիալական ապահովության վճարների և հարկերի հավաքագրման մեխանիզմով, քան հավաքագրման համար պատասխանատու մարմինների միավորմամբ[46]:

Սոցիալական ապահովությունն վճարները մի շարք երկրներում հանդիսանում են պետական եկամուտների զգալի աղբյուր, որի միջոցով ֆինանսավորվում են պետության կողմից մատուցվող մի շարք ծառայություններ՝ առողջապահությունը, անաշխատունակության նպաստները, թոշակները և այլն:

Աղյուսակ 1.3.1

Սոցիալական ապահովությունն վճարների հավաքագրումների ընդհանուր պատկերը մի շարք երկրների օրինակով (2014թ.,տոկոս)[47]

Երկիրը	Սոցիալական ապահովության վճարները հարկային եկամուտների նկատմամբ	Սոցիալական ապահովության վճարները ՀՆԱ-ի նկատմամբ
Ավստրիա	34.3	14.5
Բելգիա	31.5	14.1
Գերմանիա	38.7	14.2
Իտալիա	30.0	13.1
Դանիա	0.15	1.0
Նորվեգիա	25.4	9.9
Ֆինլանդիա	28.9	12.7
Չեխիա	43.9	15.4
Սլովակիա	43.4	12.3
Չիլի	7.2	1.4
Էստոնիա	33.9	11.2

[45] The Pay-As-You-Earn Tax on Wages-option for Developing Countries and Countries in Transition, IMF working Paper, 1994, p.8

[46] Rofman R., Demanrco G., “Collecting and Transferring Pension Contributions, Social Protection”, Discussion Paper, No 9907, The World Bank, 1999, p. 16,

[47] http://www.oecd-ilibrary.org/taxation/data/revenue-statistics/comparative-tables_data-00262-en, Social insurance contributions as a percent of total taxation, Social insurance contributions as a percent of GDP, 2014

Ֆրանսիա	37.7	16.7
ԱՄՆ	23.9	5.5

Աղյուսակ 1.3.1-ից ակնհայտ է, որ սոցիալական ապահովության վճարների տեսքով հավաքագրվող եկամուտները զարգացած երկրներում հանդիսանում են պետական եկամուտների զգալի աղբյուր: Այս երկրներում սոցիալական ապահովության վճարների զգալի դերը հիմնականում պայմանավորված է Բիսմարկի մոդելով, որի էությունը կայանում է նրանում, որ կենսաթոշակների վճարումն իրականացվում է սոցիալական ապահովության սկզբունքին համապատասխան. ապագա կենսաթոշակի չափն ուղղակիորեն կապ ունի վճարված սոցիալական ապահովության գումարների հետ[48]:

Սոցիալական ապահովության վճարներն ըստ երկրների տարբերվում են ոչ միայն հավաքագրելիության մակարդակով, այլև ըստ հավաքագրման մեխանիզմների: Մասնավորապես սոցիալական վճարները կարող են հավաքագրվել առանձին ֆոնդերի, հիմնադրամների կամ հարկային մարմնի կողմից[49]:

Գրականության մեջ սոցիալական ապահովության վճարների հավաքագրման մեխանիզմները բաժանվում են երեք խմբի՝ կենտրոնացված, ապակենտրոնացված և խառը (Տես՝ Հավելված 5):

Կենտրոնացված համակարգի դեպքում սոցիալական ապահովության վճարների հավաքագրման համար պատասխանատու մարմին է հանդիսանում հարկային մարմինը, ապակենտրոնացված համակարգի դեպքում սոցիալական ապահովության վճարների հավաքագրման պատասխանատու մարմինը տարբերվում է հարկային մարմնից, և խառը՝ սոցիալական որոշ ծրագրերի համար անհրաժեշտ սոցիալական ապահովության վճարների հավաքագրման պատասխանատու մարմինը կարող է տարբերվել[50]: Օրինակ՝ մինչև 2006թ. նման համակարգ գործում էր Նիդերլանդներում. ընդհանուր

[48] Schludi M., “The Reform of Bismarckian Pension Systems: A Comparison of Pension Politics in Austria, France, Germany, Italy and Sweden”, Amsterdam University Press, 2005, p. 16

[49] https://www.oecd.org/ctp/administration/CIS-2008.pdf , “Tax Administration in OECD and selected Non-OECD Countries”, Comparative Information Series 2008, p. 29,

[50] Bakirtzi E., Leuven K., “Merging the Administrations of Social Security Contribution and Taxation”, European Institute of Social Security (EISS), 2010, p. 15,

սոցիալական ապահովության վճարները հավաքագրվում էին հարկային մարմինների կողմից, իսկ վարձու աշխատողների կողմից վճարվող սոցիալական ապահովության վճարները հավաքագրում էին սոցիալական ապահովության հիմնադրամները[51]:

2004 թ.-ին Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից հրապարակված աշխատանքային զեկույցի համաձայն՝ հարկերի և սոցիալական վճարների հավաքագրումը մեկ մարմնում կենտրոնացնելու միտումը կարող է հանդիսանալ երկարաժամկետ հատվածում լավագույն ռազմավարություն որոշակի նախադրյալների առկայության դեպքում, մասնավորապես՝

1. հարկային մարմնի և սոցիալական ապահովության հիմնադրամի մոդերնիզացվածության մակարդակը,
2. հասարակության վերաբերմունքը,
3. քաղաքականության և օրենսդրության համապատասխանությունը,
4. վարչարարական կառուցվածքը և կարողությունները, ռազմավարության պլանավորումը և կառավարումը, այդ թվում՝ քաղաքական և ենթակառուցվածքային համապատասխանությունը,
5. և այլն:

Ամեն դեպքում, գործնականում հայտնի չեն դեպքեր, երբ կենտրոնացված համակարգերից անցում են կատարվել ապակենտրոնացված համակարգերի[52]:

Միասնական համակարգերի գործունեության համար, բացի օրենսդրական դաշտի մշակումից, կարևորագույն նախադրյալ է հանդիսանում համապատասխան տեղեկատվական տեխնոլոգիաների առկայությունը: Օրինակ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների դերը խիստ ընդգծված է Իռլանդիայում, որտեղ հարկ վճարողների և հարկային մարմինների միջև բոլոր գործողությունները տեղի են ունենում բացառապես էլեկտրոնային եղանակով[53]:

[51] Zaglmayer B., Schoukens P., Pieters D., “Cooperation Between Social Security and Tax Agencies in Europe”, IBM Center of Business of Government, 2005, p.16
[52] Barrand P., Stanford R. and Graham H., “Integrating a Unifed Revenue Administration for Tax and Social Contributions collections Experiences of Central and Eastern European Countries”, IMF Working Paper WP/04/237, 2004, p.14
[53] Analysis of the main systems of social security contribution collection in the European Union based on the experience of 12 Member States, 2012, p. 34

2005 թ.-ին Համաշխարհային բանկի տնտեսագետ Զորան Անուսիկը, կատարեց վերլուծություններ, որոնց արդյունքում ցանկանում էր պարզել, թե արդյոք կենտրոնացված հավաքագրման համակարգի դեպքում նվազում են վարչարարական ծախսերը, ավելանում են հավաքագրումները և բարձրանում է սպասարկման որակը: Այս հարցերին պատասխանելու նպատակով հեղինակը ուսումնասիրեց մի շարք եվրոպական երկրների փորձը և եկավ իրարամերժ եզրահանգումների: Առաջինը՝ նրա ուսումնասիրության արդյունքում միջնաժամկետ հատվածում եկամուտների հավաքագրման կենտրոնացված համակարգի ներդրումը չի հանգեցնում վարչարարական ծախսերի կրճատման, իսկ երկրորդը՝ միավորման աստիճանից կախված մեծանում են հավաքագրումների ծավալները[54]:

ՀՀ-ում սոցիալական ապահովության վճարների և հարկերի հավաքագրման մարմինների գործառույթների միավորմանն ուղղված առաջին քայլերը արվել են դեռևս 2007 թ.-ին, երբ «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքում կատարվեցին փոփոխություններ, ինչի արդյունքում սահմանվեց, որ սոցիալական վճարները ապահովադիրների կողմից պարտադիր կարգով ՀՀ պետական բյուջե վճարվող միջոցներ են: Նախկինում սոցիալական վճարները պարտադիր սոցիալական ապահովագրության պետական ծրագրերի ֆինանսավորման նպատակով ապահովադիրների կողմից պարտադիր կարգով վճարվող միջոցներ էին, որոնք ուղղվում էին կենսաթոշակային ապահովության հիմնադրամ[55]: Արդյունքում, 2008թ-ից ի վեր ՀՀ-ում իրականացվում է միասնական եկամտային քաղաքականություն, իսկ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն իրականացնում է միայն պետական կենսաթոշակային ապահովության քաղաքականության մշակում և դրա իրականացում[56]: Պարտադիր սոցիալական ապահովության

[54] Anusic, Z., “International experience in consolidated social contributions and tax collection, reporting and administration”, WB, 2005, p.14

[55] «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 24.10.2007, ՀՕ-245-Ն,

[56] ՀՀ կառավարության 14.10.2002 «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրությունը,

վճարների և եկամտահարկի միավորման գործընթացի հաջորդ փուլն իրականացավ կենսաթոշակային բարեփոխումների շրջանակներում: Մասնավորապես, 2005 թ.-ից սկսած երկրի կենսաթոշակային համակարգում իրականացվում են լայնամասշտաբ աշխատանքներ՝ կենսաթոշակների բաշխողական համակարգից դեպի կենսաթոշակների կուտակային համակարգին անցնելու համար[57]: Այս համատեքստում ընդունվել են մի շարք իրավական ակտեր, մասնավորապես ՀՀ կառավարության 26.05.2006թ. մայիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային ապահովության համակարգի բարեփոխումների հայեցակարգը հաստատելու մասին» թիվ 796-Ն որոշմամբ ամրագրվեցին կենսաթոշակային բարեփոխումների հիմնական ուղղությունները, ինչպես նաև դրանց իրականացումն ապահովող միջոցառումները: Նշված հայեցակարգի՝ հարկային քաղաքականության առնչվող միջոցառումներից էր հանդիսանում եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների միավորումն էր, ինչը կարծում ենք որոշիչ դեր չուներ կենսաթոշակային բարեփոխումների իրականացման համար, քանի որ կենսաթոշակային համակարգի ներդրման հիմնաքարն անձնավորված հաշվառման արդյունավետ համակարգի ներդրումն է:

Միաժամանակ, հատուկ շեշտվում էր, որ նշված հայեցակարգային մոտեցումները մշակվել են հանրային լայն քննարկումների և միջազգային լավագույն փորձի արդյունքում:

Տվյալ դեպքում, միջազգային լավագույն փորձ ասելով, կարող ենք հասկանալ Էստոնիայի փորձը, քանի որ ՀՀ-ում կենսաթոշակային բարեփոխումների իրականացման համար որպես ուղենիշ է հանդիսացել Էստոնիայի սոցիալական ապահովության բնագավառում իրականացված բարեփոխումների փորձը, որը հակիրճ ներկայացվում է ստորև:

Էստոնիան հանդիսանում է նախկին Խորհրդային, իսկ այժմ Եվրոպական Միության անդամ պետություններից: Երկրում կենսաթոշակային բարեփոխումներն իրականացվել են 1990թթ. և

նախարարության աշխատակազմի կառուցվածքը, նախարարության աշխատակազմին հանձնվող գույքի չափը հաստատելու մասին» թիվ 1821-Ն որոշում,

[57] ՀՀ կառավարության 28.04.2005թ. «Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային ապահովության համակարգի բարեփոխումների հայեցակարգային մոտեցումները հաստատելու մասին» թիվ 666-Ն որոշում,

անցում է կատարվել եռաստիճան կենսաթոշակային համակարգի: Էստոնիայի սոցիալական ապահովության համակարգի բաղկացուցիչ մասն են կազմում կենսաթոշակները, առողջապահության սոցիալական ապահովությունը[58], ինչպես նաև ընտանիքի հիվանդ անդամի խնամքի կամ անաշխատունակության համար վճարվող նպաստները[59]:

Էստոնիայում սոցիալական ապահովության համակարգի ֆինանսավորման հիմնական աղբյուրը սոցիալական հարկի տեսքով հավաքագրված եկամուտներն են, որոնք վճարվում են գործատուների կողմից՝ յուրաքանչյուր վարձու աշխատողի համախառն եկամտից 33□ դրույքաչափով: Անհատձեռնարկատերերը ևս վճարում են սոցիալական հարկ, ընդ որում՝ հարկի 13□-ն ուղղվում է առողջապահության, իսկ մնացած 20□-ը՝ կենսաթոշակների ֆինանսավորմանը: Այն վարձու աշխատողները, ովքեր միացած են կուտակային կենսաթոշակների 2-րդ բաղադրիչին (պարտադիր պահանջ է 1983 թ.-ից հետո ծնվածների համար), աշխատավարձից վճարում են ևս 2□: Այս դեպքում կենսաթոշակներին ուղղված սոցիալական հարկի 20□-ից 16□-ն ուղղվում է պետական կենսաթոշակների, իսկ 4□-ը՝ պարտադիր կուտակային բաղադրիչի ֆինանսավորմանը, սակայն տնտեսական ճգնաժամով պայմանավորված՝ 2011թ.-ից պարտադիր կուտակային բաղադրիչին միանալու դեպքում վարձու աշխատողների կողմից վճարվող 2□ դրույքաչափը դարձել է 1□, իսկ սոցիալական հարկի գումարներից մասհանվող 4□-ը՝ 2□:

Գործատուների և վարձու աշխատողների կողմից, ի լրումն նշված գումարների, վճարվում են նաև գործազրկության ապահովության վճարներ համապատասխանաբար 1.4□ և 2.8□ դրույքաչափերով: Նշված դրույքաչափերը կիրառվում են աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների նկատմամբ և գանձվում են հարկային գործակալների միջոցով[60]: Էստոնիայի պետական եկամուտների կազմում սոցիալական հարկի գումարները մեծ կարևորություն ունեն: 2010թ.-ին դրանց գծով հավաքագրված գումարները կազմում

[58] Առողջության սոցիալական ապահովությունն առողջության պահպանման, հիվանդության, ծննդյան և հետծննդյան ժամանակահատվածում, ինչպես նաև ընտանիքի հիվանդ անդամի խնամքի համար վճարվող եկամուտներն են:
[59] www.pensionikeskus.ee, Legal Acts, Social Tax Act
[60] http://estonia.eu/abpit-estonia/society/pension-system-in-estonia.html

են ընդհանուր հարկային եկամուտների շուրջ 35.6%-ը, որը ԵՄ երկրներում ամենաբարձր ցուցանիշներից է: Այլ պատկեր է վարձու աշխատողների կողմից կատարվող սոցիալական ապահովության վճարների դեպքում: Դրանք կազմում են հարկային եկամուտների ընդամենը 2.4%-ը[61]:

Էստոնիայում 2008 թ.-ից գործում է եկամտահարկի միասնական 21% դրույքաչափ և գործում է եկամտի չհարկվող շեմ: 2015 թ.-ին եկամտահարկով չհարկվող շեմը սահմանված է 1848 եվրո (շուրջ 1 միլիոն դրամ): Պետական կենսաթոշակների հարկման դեպքում ևս գործում է չհարկվող շեմը, որը սահմանված է 2304 եվրո (շուրջ 1335 հազ. դրամ)[62]:

Անհատ ձեռնարկատերերը նույնպես վճարում են սոցիալական վճարներ, որոնք բաղկացած են երկու մասից՝ կենսաթոշակային և առողջապահության ապահովության վճարներ: Սոցիալական ապահովության վճարների հաշվարկման ժամանակ հարկման բազան սահմանվում է որպես ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող զուտ եկամուտների (համախառն եկամուտ հանած ծախսեր)՝ նվազագույն աշխատավարձի 15-ապատիկ գերազանցող եկամտի նկատմամբ[63]:

Ստացվում է, որ, չնայած հաստատագրված դրույքաչափի կիրառությանը, չհարկվող շեմի առկայությունը ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգին որոշակի պրոգրեսիվություն է հաղորդում, ինչն էլ իր հերթին ապահովում է հարկման ուղղահայաց արդարության սկզբունքի պահպանմանը: Էստոնիայում հարկերի, այդ թվում՝ սոցիալական հարկի հավաքագրման նկատմամբ կիրառվում է միասնական վարչարարություն[64]:

Նշված գործընթացն ամբողջությամբ իրականացվում է էլեկտրոնային համակարգի միջոցով և համակարգն, այսպես կոչված, անձնավորում է վճարված գումարները ըստ նշանակության: Այդուհանդերձ, նշված բարեփոխումները երկրում ընթացել են

[61] https://stats.oecd.org/Index.aspx?DataSetCode=AWCOMP, Taxing wages-Comperative Series
[62] Taxation Trends in the European Union, Data for the EU Member States, Iceland and Norway, Taxation and Customs Union, 2015 Edition, p. 42
[63] Էստոնիայում նվազագույն աշխատավարձի մակարդակը 2010թ.-ին կազմել է 278 եվրո,
[64] http://www.emta.ee/eng/business-client/taxation-payment-taxes/requisites-payment-taxes

բավականին հանգիստ մթնոլորտում, քանի որ բարեփոխումների նպատակները հասկանալի և ընկալելի էին բոլոր շահառուների կողմից: Ոլորտի պատասխանատուները ֆիզիկական անձանց եկամուտների՝ եկամտահարկով և սոցիալական հարկով հարկման համակարգում առանցքային փոփոխություններ չեն նախատեսում, չնայած բարեփոխումների իրականացման ժամանակ մատնանշվում էր նաև վերը նշված հարկատեսակները մեկ միասնական հարկատեսակի տեսքով ներդնելու գաղափարը[65]:

ՀՀ-ում Էստոնիայի սոցիալական ապահովության վճարների բնագավառում կատարված բարեփոխումներից, մեր կարծիքով, հարկային քաղաքականության առնչվող մասով կիրառվում է միայն մեկ միասնական հաշվարկի միջոցով եկամտային հարկի և կուտակային վճարի հաշվարկման և վճարման գաղափարը, ինչպես նաև եկամտային հարկի հաշվարկը բացառապես էլեկտրոնային կարգով ներկայացնելու պահանջը: Ինչպես արդեն նշել ենք, կենսաթոշակային բարեփոխումների հայեցակարգում ամրագրվեց, որ նոր համակարգին անցած քաղաքացիները գործատուների միջոցով իրենց աշխատավարձից կվճարեն նաև ներկայիս 3 % և լրացուցիչ 7 % չափով սոցիալական վճար, որը կփոխանցվի քաղաքացիների կողմից ընտրված կենսաթոշակային հիմնադրամներում բացված անձնական հաշիվներին[66]: Արդյունքում գործատուն, որպես իր իսկ աշխատողների սոցիալական ապահովությունների խնդիրների լուծման անմիջական մասնակից, դուրս մղվեց այս իրավահարաբերություններից, իսկ պետությունը հարկատուների հաշվին ստանձնեց լրացուցիչ պարտավորություններ:

Այս իրավիճակը հետագայում տեղափոխվեց օրենսդրական հարթություն: Մասնավորապես, 2010 թ.-ի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտավ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը, որով ուժը կորցրած ճանաչվեց «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքները[67]:

---

[65] Bakirtzi E., Leuven K., “Merging the Administrations of Social Security Contribution and Taxation”, European Institute of Social Security (EISS), 2010, p. 35,

[66] ՀՀ կառավարության 26.05.2006թ. 796-Ն որոշում, «Եկամտահարկ և սոցիալական վճարներ» հատված, 7-րդ պարբերություն,

[67] «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք, 28-րդ հոդված, 2-րդ մաս

Չնայած այն հանգամանքին, որ նշված օրենքը հանդիսանում է «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքների մեխանիկական միավորում, ավելի ստույգ՝ օրենքն, ըստ էության, հիմնված է «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի նույն տրամաբանության վրա, որի մեջ ներառված են «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթները, մասնավորապես աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում գրավոր չձևակերպելու դեպքում կիրառվող տուգանքների չափերը[68], այնուամենայնիվ այս փոփոխության արդյունքում տեղի ունեցան երկու խոշոր համակարգային փոփոխություններ, մասնավորապես՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարը դարձավ հարկ, իսկ գործատուն դուրս մղվեց աշխատող-գործատու-պետություն իրավահարաբերություններից:

Այս համատեքստում մեր կողմից կատարվել են մի շարք ուսումնասիրություններ, որոնք վերաբերում են թե՛ զարգացած և թե՛ զարգացող երկրներում ֆիզիկական անձանց եկամտահարկի և պարտադիր սոցիալական վճարների (հարկերի) կիրառման առանձնահատկություններին, ինչի արդյունքում պարզել ենք, որ միասնական եկամտահարկ գործում է միայն Վրաստանում, որտեղ գործում է եկամտահարկի հաստատագրված 20% դրույքաչափ[69]:

Միևնույն ժամանակ, նույն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործատուների և աշխատողների կողմից կատարվող սոցիալական ապահովության վճարների տոկոսային հարաբերակցությունն այնպիսինն է, որ հիմնականում գործատուների հաշվին է ձևավորվում նպատակային սոցիալական վճարների երկու երրորդից ավելին: Անկախ կենսաթոշակային համակարգի առանձնահատկություններից՝ միջազգային փորձը ցույց է տալիս, որ համեմատաբար ավելի մեծ հաջողություն են արձանագրում այն երկրները, որտեղ կենսաթոշակային ապահովման խնդրի լուծմանը մասնակցում են երեք հիմնական սուբյեկտներ՝ պետություն, գործատու և աշխատող[70]:

---

[68] «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք, 25-րդ հոդված, 5-րդ ենթակետ,
[69] Deloitte Highlights 2014, Georgia, International tax, p.2, Հավելված 1,
[70] Տես՝ Հավելված 2,

Արդյունքում, Հայաստանը սոցիալական-իրավական պետության սահմանադրական սկզբունքն ամրագրած եզակի երկրներից է, որտեղ կենսաթոշակային ֆոնդի նպատակային անհատական վճարումները չեն ձևավորվում սոցիալական ապահովության վճարներից, այլ կազմավորվում են աշխատավարձից լրացուցիչ պարտադիր մասհանումների և հարկերի հաշվին[71]:

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի ներդրման առանցքային խնդիրներից էր հանդիսանում եկամտային հարկի դրույքաչափերի գործող սանդղակը, որը չի կարող արդյունավետ լծակ հանդիսանալ ֆիզիկական անձանց եկամուտների վերաբաշխման ժամանակ: Միաժամանակ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքում սահմանվեց, որ օրենքն ուժի մեջ մտնելու պահից գործատուն իր միջոցների հաշվին կրում է վարձու աշխատողներին օրենքի ուժի մեջ մտնելու տարվա յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկված աշխատավարձից պահված և վճարված եկամտային հարկի ամբողջ գումարի չափով լրացուցիչ պարտավորություն, եթե օրենքի ուժի մեջ մտնելուց հետո վարձու աշխատողից եկամտային հարկի պահումը հանգեցրել է մինչև օրենքի ուժի մեջ մտնելը տվյալ վարձու աշխատողին հարկումից հետո վճարման ենթակա աշխատավարձի հիման վրա ՀՀ կառավարության սահմանված կարգով որոշվող մեծության նվազման[72]: Ստացվում է, որ վարձու աշխատողների եկամուտների մակարդակի պահպանումը կախված էր մի շարք սուբյեկտիվ գործոններից. գործատուների բարեխղճությունից և հարկային վարչարարության կարողություններից: Մյուս կողմից, չհարկվող եկամտի շեմի վերացումը, չի համապատասխանում ֆիզիկական անձանց եկամուտների հարկման դասական պատկերացումներին[73] :

Մասնավորապես եկամտի չհարկվող շեմ առկա է գրեթե բոլոր երկրներում, որն արդյունավետ լծակ է հանդիսանում ցածր եկամուտ ստացող ֆիզիկական անձանց սոցիալական խնդիրների լուծման հարցում (Տես՝ Աղյուսակ 1.3.2):

---

[71] Հանուն Հայաստանի Հանրապետության ՀՀ Սահմանադրական դատարանի 2014թ. ապրիլի 2-ի թիվ ՍԴՈ-1142 որոշում, էջ 39

[72] «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 25, 6-րդ ենթակետ

[73] Moukhovikov M. V.," Regulation in the sphere of income taxation as a part of the social policies implemantation mechanism", Economic Sciences, 2008, p. 4,

Աղյուսակ 1.3.2.[74]

Չհարկվող եկամտի շեմը մի շարք երկրների օրինակով (2015թ.)

	Չհարկվող շեմի մակարդակը
Ավստրիա	Չհարկվող շեմը տարեկան կտրվածքով սահմանված է 8354 եվրո, իսկ միասնական տարեկան եկամուտների հաշվարկ ներկայացնելու դեպքում՝ 16708 եվրո:
Բելգիա	Չհարկվող շեմը տարեկան կտրվածքով սահմանված է 7090 եվրո:
Գերմանիա	Չհարկվող շեմը տարեկան կտրվածքով սահմանված է 11000 եվրո:
Իտալիա	Նվազեցման ենթակա են սոցիալական բնույթի մի շարք ծառայությունների ձեռք բերման ծախսերը, ինչպես նաև հարկային պարտավորության գումարի կրճատման հնարավորությունը՝ մինչև 19%:
Ֆրանսիա	Չհարկվող շեմը տարեկան կտրվածքով սահմանված է 9690 եվրո:

[74] www.ey.com, Services, Tax, Worldwide Personal Tax Guide: Income tax and immigration, 2015-2016,

Աղյուսակ 1.3.2-ի շարունակություն

1	2
Դանիա	Չհարկվող շեմը տարեկան կտրվածքով սահմանված է 43400 եվրո:
Ֆինլանդիա	Չհարկվող շեմը տարեկան կտրվածքով սահմանված է 15000 եվրո:
Էստոնիա	Չհարկվող շեմը տարեկան կտրվածքով սահմանված է 1848 եվրո:
Լատվիա	Չհարկվող շեմը ամսեկան կտրվածքով սահմանված է 75 եվրո:
Լիտվա	Չհարկվող շեմը տարեկան կտրվածքով սահմանված է 1992 եվրո, եթե տարեկան եկամուտը չի գերազանցում 3480 եվրոն, իսկ գերազանցելու դեպքում՝ անձնական նվազեցման չափը որոշվում է հատուկ բանաձևի միջոցով:
Միացյալ Թագավորություն	2014 թ.-ից հետո տարեկան անձնական նվազեցման չափը սահմանված է 40000 ֆունտ:
ԱՄՆ	Անձնական նվազեցման չափը սահմանված է 4000 ԱՄՆ դոլար:
Ուկրաինա	Կախված եկամտահարկ վճարողի կարգավիճակից հնարավոր են նվազեցումներ 1 անգամ: Յուրաքանչյուր նվազեցման չափը սահմանված է 1218 գրիվնի:
Ռուսաստան	Չհարկվող շեմ սահմանված չէ, սակայն նվազեցումներ են նախատեսված երեխաների, առողջապահության մասնավոր կենսաթոշակային համակարգերին, կրթության վրա կատարված ծախսերի համար:
Ղազախստան	Նվազագույն աշխատավարձը հարկման ենթակա չէ: 2015 թ.-ին այն կազմում է 21.364 տենգե:
Վրաստան	Տարեկան կտրվածքով եկամտի մակարդակը 6000 լարին չգերազանցելու դեպքում,համաձայն հարկային մարմին սահմանած հատուկ տարեկան հաշվարկի, վերադարձման ենթակա է 1800 լարի:
Հայաստան	Չհարկվող շեմ սահմանված չէ:

Չհարկվող շեմի գաղափարը թույլ էր տալիս ապահովել ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված այն մոտեցումը, որ յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, ինչպես նաև անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունք[75]:

Կուտակային կենսաթոշակային համակարգի համատեքստում հաջորդ խնդիրը պարտադիր կուտակային բաղադրիչին միացած ֆիզիկական անձանց եկամուտների հարկումն է: «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ պարտադիր կուտակային բաղադրիչին պարտադիր միանում են 1974 թ.-ի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված վարձու աշխատողները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները[76]:

[75] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունված 05.07.1995, Հոդված 32

[76] «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, ընդունված 22.12.2010, ՀՕ-244-Ն, հոդված 5,

Նույն օրենքի համաձայն՝ պարտադիր կուտակային վճարի դրույքաչափը սահմանվեց 10%, որը հաշվարկվում է բազային եկամտի նկատմամբ: «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բազային եկամուտ է համարվում աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները, իսկ անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ստացման ենթակա հարկվող եկամուտը: Վարձու աշխատողի, օտարերկրացու և քաղաքացիություն չունեցող անձի համար, որի ամսական բազային եկամուտը չի գերազանցում 500 հազ. դրամը, կուտակային վճարի ամսական չափը սահմանվեց 5%, իսկ 10%-ը լրացնելու նպատակով մնացած 5%-ը մասնակցի համար (օգտին) վճարվում է պետական բյուջեից:

Մյուս կողմից, ամսական 500 հազ. դրամը գերազանցող բազային եկամուտ ստանալու դեպքում պետական բյուջեից մասնակցի համար (օգտին) վճարվում է 25 հազ. դրամ, իսկ 10%-ը լրացնելու նպատակով մնացածը վճարվում է մասնակցի կողմից[77]:

Կարելի է ասել, որ պարտադիր կուտակային վճարները պարտադրված խնայողություններ են, ընդ որում՝ հասարակության որոշակի հատվածի համար:

Թերևս, վերը նշված հանգամանքներով էր պայմանավորված հասարակության լայն զանգվածների կողմից 2014 թ.-ի հունվարի 1-ից հետո ուժի մեջ մտած պարտադիր կուտակային բաղադրիչի շուրջ ծավալված լուրջ ընդվզումները, որոնց արդյունքում ՀՀ Սահմանադրական դատարանը 2014 թ.-ի ապրիլի 2-ի թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ հակասահմանադրական ճանաչեց «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթներ: Արդյունքում, «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում կատարվեցին փոփոխություններ, մասնավորապես «կուտակային վճար» տերմինը փոխարինվեց «սոցիալական վճար» տերմինով[78]:

Այսինքն՝ այս դեպքում ևս խնդիրը կարգավորվեց բացառապես պետական բյուջեի՝ եկամուտներ չկորցնելու հարթությունում և կրկին չքննարկվեց սոցիալական քաղաքականության տեսանկյունից

[77] Տես նույն տեղում, հոդված 6
[78] Տես նույն տեղում, Հոդված 2, 36-րդ ենթակետ

(հարկային բեռի թեթևացում, նվազագույն աշխատավարձի պահպանում և այլն):

Հարկային քաղաքականության առնչվող մյուս փոփոխությամբ օրենքով հնարավորություն տրվեց մինչև 2018 թ.-ի հուլիսի 1-ը ցանկության դեպքում հրաժարվել սոցիալական վճար կատարելու պարտականությունից՝ մինչև 2014 թ.-ի դեկտեմբերի 25-ը հարկային մարմին համապատասխան դիմում ներկայացնելու միջոցով[79]:

Ամփոփելով կարող ենք եզրակացնել, որ կենսաթոշակային բարեփոխումների համատեքստում ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգի մշակման ժամանակ կարևորվել են կարճաժամկետ նպատակներ, իսկ հարկման տեսությունը վկայում է, որ հարկային քաղաքականության փոփոխությունների ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել երկարաժամկետ նպատակներ[80]:

[79] Տես նույն տեղում՝ հոդված 81
[80] Bird Richard M. and Zolt Erik M., “Introduction to Tax Policy Design and Development”, 2003, p.10

ԳԼՈՒԽ 2. ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

2.1 Եկամտային հարկի ազդեցությունը սոցիալական քաղաքականության և հարկեր/ՀՆԱ հարաբերակցության վրա

Տարբեր երկրների հարկային համակարգեր, չնայած որոշակի ընդհանրությունների և հարկման նմանատիպ մեխանիզմների կիրառման, որոշակիորեն տարբերվում են միմյանցից և իրենց ձևավորման ու զարգացման ամբողջ ընթացքում կրում են բազմաթիվ փոփոխություններ[81]:

ԽՍՀՄ փլուզումից հետո նախկին սոցիալիստական երկրները կանգնեցին լուրջ մարտահրավերների առաջ:

Անհրաժեշտություն առաջացավ ամբողջությամբ վերանայել տնտեսական քաղաքականության մոտեցումները, անցում կատարել շուկայական հարաբերությունների և մշակել այդ հարաբերություններին համահունչ հարկային քաղաքականություն: Այս պարագայում անցումային տնտեսություն ունեցող մի շարք երկրները նոր հարկային համակարգերի ձևավորման ժամանակ առաջնորդվեցին զարգացած երկրների հարկային համակարգերի օրինակներով՝ առանց հաշվի առնելու իրենց տնտեսությունների առանձնահատկությունները և պահանջները, որն էլ պատճառ հանդիսացավ տնտեսության զարգացման որոշակի խոչընդոտների առաջացման համար: Դրանք էին հարկային նոր հարաբերությունների մասին թույլ պատկերացումները, տնտեսության խարխլված կառուցվածքը, վարչարարական կարողությունների սահմանափակ մակարդակը, հասարակության գաղափարական անպատրաստվածությունը և սոցիալական անմխիթար վիճակը: Նշված խնդիրների լուծումը պահանջում էր համապատասխան ֆինանսական միջոցների առկայություն, որ հնարավոր էր միայն հարկային եկամուտների համապատասխան մակարդակի դեպքում:

[81] Թամազյան Ա., «Հարկային օրենսդրության հիմունքները», Երևան, Ֆինանսաբանկային քոլեջ, 2003, էջ 12

Արդյունքում, անցումային տնտեսություն ունեցող երկրների հարկային քաղաքականությունն ինքնաբերաբար նպատակաուղղվեց առավել բարձր հարկային եկամուտներ ապահովող հարկային համակարգերի ձևավորմանը՝ անտեսելով հարկային համակարգի միջոցով գանձարանային նպատակներից բացի այլ տնտեսական նպատակների իրականացման հնարավորությունները:

Միաժամանակ, թույլ վարչարարական կարողությունների առկայությունը, մասնավորապես՝ տնտեսվարող սուբյեկտների և նրանց կողմից ծավալած տնտեսական գործունեության մասին հավաստի տեղեկատվության հավաքագրման համակարգի բացակայությունը նպաստեց նաև ստվերային տնտեսության առաջացմանը և զարգացմանը:

Նշենք նաև, որ զարգացած երկրներում բյուջեի եկամուտների միայն 60 - 70% է ձևավորվում հարկերի և տուրքերի հաշվին, մինչդեռ զարգացող երկրներում այն կազմում է շուրջ 90%[82]:

Հարկային վարչարարության, հարկերի հավաքագրման արդյունավետության գնահատման միջազգային պրակտիկայում ընդունված ցուցանիշներից ամենատարածվածը՝ հարկային եկամուտների ու ՀՆԱ-ի հարաբերակցությունն է:

Այս ցուցանիշը ցույց է տալիս որոշակի ժամանակահատվածում պետության կողմից հավաքագրված հարկերի հնարավորության աստիճանը ՀՆԱ-ի նկատմամբ: Գնահատման այս ցուցանիշը հստակ պատկերացում է տալիս, թե երկրում արտադրված ամբողջական արդյունքի որ մասն է հարկերի, այդ թվում՝ առանձին հարկատեսակների տեսքով հավաքագրվել պետական կամ համայնքային բյուջեներ:

Ի դեպ, ՀՆԱ-ի հարկային վերաբաշխման բաժինը կախված է նախև առաջ յուրաքանչյուր երկրում իրականացվող պետական կարգավորման աստիճանից: Որքան մեծ է պետական բյուջեում ընդգրկվող միջոցների տեսակարար կշիռն ազգային արդյունքի մեջ, այնքան հարկաբյուջետային քաղաքականությունը մեծ դեր է խաղում շուկայական տնտեսության պետական կարգավորման մեջ[83]:

---

[82] Բադանյան Լ., Աբգարյան Կ., Սալնազարյան Ա. և ուրիշներ, «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ», Դասագիրք, Երևան, Զանգակ-97, 2007, էջ 147

[83] Редакционная коллегия Финансы рыночного хозяйства, ‘’Путь России’’, Москва 2003, ст-244

ԽՍՀՄ փլուզումից հետո նշված գործընթացներից անմասն չմնաց նաև ՀՀ-ն: Մասնավորապես, հարկման ինքնուրույն եղանակների կիրառման պրակտիկան հանրապետությունում սկսվեց կիրառվել 1992թ.-ից, երբ օրենսդրական կարգավորում ստացան հիմնական հարկատեսակները, որոնք էին շահութահարկը, ավելացված արժեքի հարկը, ակցիզային հարկը, եկամտահարկը և գույքային հարկերը:

1995 թ.-ի ապրիլի 1-ին ընդունվեց «Եկամտահարկի մասին» առաջին ՀՀ օրենքը (մինչև 1995 թ.-ը ՀՀ-ում ֆիզիկական անձանց եկամուտների հարկումը կատարվում էր համաձայն «ԽՍՀՄ քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց եկամտային հարկի մասին» ԽՍՀՄ օրենքի դրույթների, որը բավականին տարբերվում է ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համար կիրառվող ներկայիս մոտեցումներից, ընդ որում՝ տարբերությունները թե՛ կառուցվածքային էին, թե՛ բովանդակային: Եվ, եթե անդրադառնանք եկամտահարկի գծով պետական բյուջե հավաքագրումների մակարդակին, ապա կարող ենք ասել, որ դիտարկվող ժամանակահատվածում ՀՆԱ-ի մեջ եկամտահարկն աճել է ընդամենը 0.5 տոկոսային կետով, այն դեպքում, երբ եկամտահարկի գումարներն աճել են շուրջ 8 անգամ:

Աղյուսակ 2.1.1.
Եկամտահարկ (1994-1999թթ.)[84]

	1994	1995	1996	1997	1998	1999
ՀՆԱ (մլրդ դրամ)	187.1	522.3	661.2	804.3	955.4	987.4
Հարկային եկամուտներ և տուրքեր (մլրդ դրամ)	21.6	55.4	69.1	102.3	130.4	158.8
Հարկեր/ՀՆԱ (%)	11.5	10.6	10.5	12.6	13.6	16.1
Եկամտահարկ (մլրդ դրամ)	2.3	6.8	8.8	14.4	13.5	17.5
Եկամտահարկ/ՀՆԱ (%)	1.2	1.3	1.3	1.8	1.4	1.7

[84] ՀՀ ֆինանսների նախարարություն, IMF Staff Country report No 96/118, ՀՀ վիճակագրական տարեգիրք, 2001

Այնուամենայնիվ, կարող ենք ասել, որ ՀՀ-ում ինքնուրույն հարկային համակարգի ներդրման սկզբնական փուլը բնորոշվեց բավականին լուրջ թերություններով:

Այս իմաստով հատկանշական էր 1997 թ.-ը, երբ ուժի մեջ մտավ «Հարկերի մասին» ՀՀ նոր օրենքը, որը սկզբունքորեն նոր հարթություն տեղափոխեց հարկային համակարգի հիմնարար սկզբունքները: Հարկային համակարգի բարեփոխումներ նախատեսող 1997 թ.-ի փաթեթը շրջադարձային էր ՀՀ հարկային քաղաքականության ոլորտում: Կարող ենք ասել, որ այս փաթեթը նախկին խորհրդային մտածելակերպից, նրա օրենսդրական ազդեցություններից ձերբազատված առաջին՝ հայաստանյան հարկային քաղաքականության բարեփոխումներ նախատեսող փաթեթն էր: Իհարկե, բացառություն չէր նաև ֆիզիկական անձանց եկամուտների հարկման դաշտը, որը նշանավորվեց եկամտահարկի մասին նոր՝ ժամանակակից շարադրանքով և կառուցվածքով օրենքի ընդունմամբ: Մասնավորապես, 1997 թ. դեկտեմբերի 30-ին ընդունվեց «Եկամտահարկի մասին» ՀՀ նոր օրենքը: Այս օրենքի առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ ֆիզիկական անձանց եկամուտների՝ եկամտահարկով հարկման ենթակա վերջնական գումարը որոշվում էր տարեկան եկամուտների հայտարարագրի հիման վրա: Կարևոր էր նաև աղբյուրի մոտ հարկման գաղափարի ներդրումը, այսինքն՝ աղբյուրի մոտ հարկման գաղափարի ներդրմամբ հանրապետությունում ներդրվեց հարկային գործակալի ինստիտուտը:

1998թ. հունվարի 1-ի դրությամբ սահմանվեցին եկամտահարկի հետևյալ դրույքաչափերը՝ 15-30% և ամսական չհարկվող նվազագույն շեմ, որը համապատասխանում էր տվյալ տարվա նվազագույն աշխատավարձի գումարի չափին: Ի լրումն ուղղակի հարկերի ոլորտում կատարված շրջադարձային փոփոխությունների՝ ներդրվեց պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների սկզբունքորեն նոր համակարգ: 1998թ. հունվարի 1-ից կիրառության մեջ դրվեց պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվարկման նոր եղանակ: 1998թ. հունվարի 1-ից սահմանվեց պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների դրույ-

քաչափերի ռեգրեսիվ սանդղակ՝ 15-5% դրույքաչափերով՝ նախկին 34%-ի փոխարեն: Անհատ ձեռնարկատերերի համար սահմանվեց պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումար՝ ամսական 5 հազար դրամի չափով, բայց ոչ պակաս տարեկան 60 հազար դրամից: Ֆիզիկական անձինք պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ կատարում են համախառն եկամտի 3 տոկոսի չափով:

Լինելով աշխատուժի շուկայում մեծ ազդեցության գործոններից մեկը՝ թվում էր, որ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների բեռի նվազեցումը պետք է խթաներ նոր աշխատատեղերի ստեղծմանը, ինչպես նաև գործատուների կողմից աշխատողներին վճարվող աշխատանքի վարձատրության հայտարարագրման դեպքերի ավելացմանը, ինչն էլ իր հերթին կավելացներ պետական բյուջե մուտքագրվող եկամտահարկի գումարները: Սակայն եկամտահարկի գծով հավաքագրումների զգալի աճ չգրանցվեց:

Գծապատկեր 2.1.2.

ՀՆԱ, հարկային եկամուտներ և տուրքեր, եկամտահարկ դինամիկան (1994-1999թթ.)[85]



Գծապատկեր 2.1.2-ից ակնհայտ է, որ հարկային եկամուտների և ՀՆԱ-ի դինամիկան ուղիղ համեմատական են, ինչը չենք կարող ասել եկամտահարկի մասին: Ստացվում է, որ 1995-1996թթ. հարկային եկամուտներն աճել են շուրջ 14 մլրդ դրամով, իսկ եկամտահարկը՝ ընդամենը 2 մլրդ, այն դեպքում, երբ 1997-1998 թթ. հարկային

[85] ՀՀ ԱՎԾ, «Հայաստանի վիճակագրական տարեգիրք», Երևան 2002, էջ 217,

եկամուտները աճել են շուրջ 27 մլրդ դրամով, իսկ եկամտահարկի գումարները նվազել են 9 մլրդ դրամով, ինչը որևէ օբյեկտիվ պայմանով չի կարող մեկնաբանվել: Ի դեպ, ՀՀ-ում տնտեսական անկումը կասեցվել է 1994թ., երբ շուրջ հինգ տարի անկումից հետո արձանագրվեց իրական ՀՆԱ-ի աճ՝ 131.7%, իսկ միջին տարեկան աճը կազմել է 6.4%[86]:

2001թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտավ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով եկամտահարկի եռաստիճան սանդղակը փոխարինվեց երկաստիճան սանդղակով՝ 10% և 20%, ինչպես եկամտահարկի հաշվարկման և գանձման պարտականություններն առավելապես վերապահվեցին հարկային գործակալներին: Այնուամենայնիվ, այս փոփոխությունները ևս արդյունք չտվեցին: 2001 թ.-ին եկամտահարկի գծով պետական բյուջեի եկամուտները կազմել են 11.2 մլրդ դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 7.2 %-ը՝ նախորդ տարվա 9.3%-ի դիմաց և ՀՆԱ-ի 0.9%-ը: 2000թ. համեմատ եկամտահարկի գծով պետական բյուջեի մուտքերը նվազեցին 16.2%-ով, ինչը հիմնականում բացատրվեց օրենսդրական փոփոխություններով:

2001 թ.-ից ի վեր «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում տեղի են ունեցել մի շարք փոփոխություններ, որոնց հիմնական նպատակն է եղել հստակեցնել օրենքում առկա տարընթերցումները: Եկամտահարկի գծով պետական բյուջեի եկամուտների աճ ապահովելու նպատակով «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում կատարվեցին լրացումներ, ինչի արդյունքում 2006թ. հունվարի 1-ից ներդրվեց նվազագույն եկամտահարկի գաղափարը[87]: Վերջինս, ըստ էության, վարչարարական լծակ էր, որը թույլ է տալիս որոշակիորեն ապահովագրել ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտներից նվազագույն եկամտահարկի գումարների հավաքագրում: Սակայն վիճակագրական տվյալները վկայում են, որ նվազագույն եկամտահարկի ներդրումը որևէ ֆիսկալ արդյունք չապահովեց, քանի որ 2006-2009 թթ. ընթացքում այն պետական բյուջե հավաքագրվող եկամտահարկի

[86]«Տնտեսական աճի որակը», 2012-2013թթ., ներհամալսարանական գիտական դրամաշնորհային հետազոտություն, ՀՊՏՀ, «Տնտեսագետ», 2014, էջ 33,
[87]«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենք, ընդունված 27.12.1997, ՀՕ-183, հոդված 29[1]

գումարների վրագրեթե ազդեցություն չի ունեցել (Տես՝ Աղյուսակ 2.1.3.): Արդյունքում 2013 թ. հունվարի 1-ից ուժը կորցրած ճանաչվեց նվազագույն եկամտահարկի կիրառումը: Մյուս փոփոխությունը, որը կարող էր ավելացնել եկամտահարկի գծով պետական բյուջե հավաքագրումների մակարդակը, եկամտահարկի դրույքաչափերի սանդղակի վերանայումն էր[88], մասնավորապես 2012 թ. հունվարի 1-ից եկամտահարկի դրույքաչափերի սանդղակը դարձավ եռաստիճան՝ 2 մլն դրամից ավել եկամուտ ստացող անձանց համար եկամտահարկի դրույքաչափը սահմանվեց 25%: Սակայն այս փոփոխությունը ևս որևէ շոշափելի արդյունք չտվեց: Ոչ պաշտոնական տեղեկատվության համաձայն՝ ՀՀ-ում 2 մլն դրամից ավել աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ ստացող ֆիզիկական անձանց թիվը, ովքեր ունեն այդչափ հայտարարագրված եկամուտներ, ընդամենը 600 են[89]:

Աղյուսակ 2.1.3

ՀՆԱ, հարկային եկամուտներ, եկամտային հարկ (2000-2015 թթ.)[90]

	Անվանական ՀՆԱ (մլն դրամ)	Հարկային եկամուտներ (մլն դրամ)[91]	Եկամտային հարկ (մլն դրամ)	Հարկային եկամուտներ /ՀՆԱ (%)	Եկամտային հարկ/հարկային եկամուտներ (%)	Եկամտային հարկ/ՀՆԱ (%)
2000	1.031.338	149.141	14.794	14.4	9.9	1.4
2001	1.175.877	159.420	11.247	13.6	7.1	0.9
2002	1.362.472	190.025	12.487	13.9	6.6	0.9
2003	1.624.643	218.278	16.781	13.4	7.7	1.0
2004	1.907.945	257.520	20.413	13.5	7.9	1.1
2005	2.242.881	312.316	26.616	13.9	8.5	1.3
2006	2.656.190	375.537	35.469	14.1	9.4	1.3

[88] Տեսանելի հարստությունը հարկելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակվել և 29.12.2011 թ.-ի թիվ 1865-Ն որոշմամբ ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել Հարկային օրենսդրության վերանայման միջոցառումների 2012-2014 թթ. ծրագիրը, որով նախատեսվում էր բարձր եկամուտներ ստացող ֆիզիկական անձանց եկամուտները հարկել առավել բարձր՝ 25% դրույքաչափով,

[89] Տեղեկատվությունը վերցված է ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան վերլուծական նյութերից,

[90] Հայաստանի վիճակագրական տարեգրքեր, 2001-2015թթ.

[91] Հարկային եկամուտներն արտացոլում են համախմբված բյուջեի եկամուտները, իսկ մինչև 2013 թ. եկամտային հարկի սյունյակներում և հաշվարկներում՝ եկամտահարկի գումարները,

2007	3.149.283	494.421	46.828	15.7	9.5	1.5
2008	3.568.228	610.422	53.749	17.1	8.9	1.5
2009	3.141.651	518.544	60.205	16.5	11.6	1.9

Աղյուսակ 2.1.3-ի շարունակություն

1	2	3	4	5	6	7
2010	3.460.203	589.901	73.940	17.0	12.5	2.1
2011	3.777.945	647.808	81.211	17.1	12.5	2.1
2012	4.000.722	741.795	91.667	18.5	12.3	2.3
2013	4.555.638	972.939	256.863	21.4	26.4	5.6
2014	4.828.626	1.031.234	289.343	21.4	28	6.0
2015 [92]	5.032.089	1.201.690	311.692	23.4	25.9	6.2

Հարկ ենք համարում անդրադառնալ 2009 թ.-ին եկամտահարկի գումարների աճին: Չնայած համաշխարհային ֆինանսական ճգնաժամով պայմանավորված գրանցվել է ՀՆԱ-ի կտրուկ անկում, այնուամենայնիվ 2009-2010թթ. հարկային եկամուտների, այդ թվում՝ եկամտահարկի գումարների նվազեցում չի արձանագրվել: Դեռ ավելին, եկամտահարկի մուտքերը 2009 և 2010թթ. կտրվածքով աճել են համապատասխանաբար 6.5 և 13.7 մլրդ դրամով: Սա հիմնականում պայմանավորված է «Պարզեցված հարկի մասին» օրենքի գործողության դադարեցմամբ, ինչպես նաև վարչարարության խստացմամբ:

ՀՀ-ում ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգի վերջին և թերևս ամենաշրջադարձային փոփոխություններից էր «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որն ուժի մեջ մտավ 2013 թ.-ի հունվարի 1-ից: Օրենքի ընդունմամբ ուժը կորցրած ճանաչվեցին «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքները[93]:

Եկամտային հարկի ընդունումը հիմնավորվում էր մի շարք նկատառումներով, սակայն հիմնական շարժառիթը ՀՀ-ում իրականացվել իք կենսաթոշակային բարեփոխումներն էին:

[92] 2015թ. համար ներկայացված տեղեկությունները վերցված են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայք-էջից և ՀՀ ֆինանսների նախարարության տրամադրած համապատասխան տեղեկանքներից,

[93] «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք, ընդունված 22.12.2010, ՀՕ-246-Ն, հոդված 28

Թերևս, համաձայնենք, որ վաղաժամ է համեմատել պետական բյուջե հավաքագրվող եկամտային հարկի գումարները նախկինում հավաքագրվող եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների հետ, սակայն կարող ենք արձանագրել որոշակի միտումներ:

Աղյուսակ 2.1.4.

Եկամտահարկ, եկամտային հարկ, պարտադիր սոցիալական ապահովության վճարներ 2010-2015թթ. (մլրդ դրամ)[94]

	2010	2011	2012	2013	2014	2015
Եկամտահարկ, եկամտային հարկ	74.16	81.21	91.67	5.79	0.17	1.17
Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	105.3	123.5	129.1	17.6	12.2	8.6
Եկամտային հարկ	---	---	---	251.1	289.2	311.7

Աղյուսակ 2.1.4-ի տվյալներից ակնհայտ է, որ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի ներդրումը, համենայն դեպս, օրենքի գործողության սկզբնական ժամանակաշրջանում նշանակալի արդյունք չի տվել պետական բյուջե հավաքագրվող եկամուտների մասով:

Միաժամանակ, եթե համեմատենք մինչև օրենքի ուժի մեջ մտնելը հավաքագրված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության համախառն գումարները, ապա վերջիններիս և 2013 թ.-ի կտրվածքով հավաքագրված եկամտային հարկի գումարի դրական տարբերությունը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ մինչև 2013թ.-ի հունվարի 1-ը նվազագույն աշխատավարձը հանրապետությունում հարկման ենթակա չէր:

Ինչ վերաբերում է 2014 թ.-ին եկամտային հարկի գումարների աճին (2013թ.-ի համեմատ այն աճել է շուրջ 15.2 տոկոսով), ապա վերջինս պայմանավորված է 2014 թ.-ի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ, որով բարձրացան պետական ծառայողների

[94] Աղյուսակի կազմման համար հիմք են հանդիսացել ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի կողմից տրամադրված՝ ՀՀ պետական բյուջե հավաքագրված եկամուտների վերաբերյալ տեղեկանքները 2010-2015թթ. կտրվածքով,

աշխատավարձերը: Եկամտային հարկի գումարների աճի պատճառ է հանդիսացել նաև «Նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունը, որի համաձայն նվազագույն ամսական աշխատավարձը 45000 դրամից դարձավ 50000 դրամ:

Եկամտահարկի գծով թերհավաքագրումների պատճառները կարելի է բաժանել 2 խմբի՝ օրենսդրական և վարչարարական: Օրենսդրական կարգավորումների մասով ԱՄՀ փորձագետները գտնում են, որ թերհավաքագրումները հիմնականում կարող են պայմանավորված լինել «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով նախատեսված լայն շրջանակի արտոնություններով: Վարչարարական կարողությունների պակասի տեսանկյունից կարող ենք նշել այն փաստը, որ բարձր եկամուտ ունեցող ֆիզիկական անձանց վերաբերյալ հարկման նպատակով տեղեկությունները հարկային մարմիններին գրեթե անհասանելի են: Չնայած եկամուտների անհավասարությունը նկարագրող Ջինիի գործակիցը ՀՀ-ում բավականին ցածր է, այնուամենայնիվ համախառն եկամտի մեջ բարձր եկամուտ ստացող ֆիզիկական անձանց եկամուտների տեսակարար կշիռը անսպասելիորեն շատ ցածր է: Մասնավորապես, վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ ամսական կտրվածքով 300 հազար դրամից ավել եկամուտ ստացող ֆիզիկական անձանց եկամուտները կազմում են բոլոր ֆիզիկական անձանց համախառն եկամուտների ընդամենը 3.3%, ինչը շատ ցածր ցուցանիշ է[95]: Օրինակ՝ ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից հրապարակած՝ 2008 թ.-ի տվյալների համաձայն, բարձր եկամուտներ ստացող ֆիզիկական անձանց եկամուտը կազմել է շուրջ 22.5 մլրդ դրամ, որի 80%-ը իրենից ներկայացնում է շահաբաժինների տեսքով ստացված եկամուտները, որոնք ստացվում է հարկման ենթակա չեն[96]:

Որոշ գնահատականների համաձայն՝ երկրում ստվերային տնտեսությունը կազմում է ՀՆԱ-ի 30 տոկոսը, և հայտարարագրվող աշխատուժի ծավալը կրկնակի քիչ է իրական ծավալներից: Սա

[95] ՀՀ-ում բարձր աշխատավարձ ստացող վարձու աշխատողների 0.9%-ի ստացած եկամուտները կազմում են համախառն եկամուտների 5.6%-ը, մինչդեռ ԱՄՆ-ում՝ 40%-ը:

[96] Grote M., Caner S., and Hutton E., “Continuing Tax Policy reforms in Armenia-Planning for a Simpler, Fairer aand More Efficient Tax System”, Internation Monetary Fund, March 2011

հիմնականում պայմանավորված է ոչ արդյունավետ հարկային վարչարարությամբ[97]:

Վերը նշված միտումներով է բացատրվում նաև այն հանգամանքը, որ արդեն տարիներ շարունակ եկամտահարկի գծով պետական բյուջե հավաքագրվող եկամուտների շուրջ 90%-ը ձևավորում է աշխատանքային և քաղաքացիաիրավական պայմանագրերից ստացված եկամուտներից: Այսինքն, կարող ենք ասել, որ ՀՀ-ում հարկվում են միայն այն եկամուտները, որոնցից հարկի պահման (գանձման) իրավասությունը վերապահված է հարկային գործակալներին, այսինքն՝ այն եկամուտները, որոնք պետությունը կարողանում է հաշվառել (տե՛ս Աղյուսակ 2.1.5.):

Աղյուսակ 2.1.5

Եկամտային հարկի հավաքագրման պատկերը ըստ եկամտի տեսակների (2004-2015թթ.)[98]

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Եկամտային հարկ/եկամտահարկ (մլրդ դրամ)[99]	20.41	26.62	35.47	46.83	53.75	60.20	73.94	81.21	91.67	251.0	274.3	295.8
Աշխատանքային և քաղաքացիաիրավական պայմանագրերի կատարումից ստացված եկամուտներից (%)	88.8	91.5	95	93	93.4	86.8	83.4	84.1	83.7	95.2	94.9	94.9
Ձեռնարկատիրական գործունեությունից ստացած եկամուտներից (%)	2.4	2.3	1.5	1.7	1.9	4.6	5.5	5.7	5.6	1.4	1.2	1.1
Փայ ամանություններից, ժետեղթերից և ավանդներից ստացված եկամուտներից (%)	0.9	0.7	0.6	0.6	0.7	1.3	1.1	1.8	2.4	2.7[100]	3.1	3.2
Այլ եկամուտներից (%)	7.4	4.8	2.4	4.1	3.3	4.2	5.6	5.1	5.0	0.5	0.7	0.7
Եկամտահարկ ոչ ռեզիդենտից (%)	0.2	0.2	0.05	0.1	0.1	0.1	0.2	0.1	0.5	---	---	---
Եկամտահարկ ոչ ռեզիդենտից աղբյուրի մոտ(%)	0.3	0.5	0.3	0.2	0.3	0.5	0.7	0.4	0.4	0.2	0.1	0.1
Եկամտահարկ մեկ տոկոս դրույքաչափով (%)	---	---	0.1	0.1	0.3	2.5	3.1	2.8	2.7	---	---	---

[97] Davoodi H. R. and David A. Grigorian, “Tax Potentials. Tax Effort: A cross-Country Analysis of Armenia`s Stubbornly Low Tax Collection”,IMF, Working Paper, WP/07/106, p. 21

[98] 2004-2015թթ. կտրվածքով պետական բյուջե մուտքագրված եկամուտների վերաբերյալ ՀՀ ՖՆ տրամադրած տեղեկանքներ

[99] 2013 թ. եկամտահարկի գումարը ներառում է միայն հավաքագրված եկամտային հարկի գումարը

[100] Ներառված են բոլոր պասիվ եկամուտներից հավաքագրված եկամտային հարկի գումարները

Աղյուսակի 2.1.3.-ում ներկայացված ցուցանիշները ցույց են տալիս, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում եկամտահարկի գծով պետական բյուջեի հավաքագրումներն ունեցել են ընդհանուր առմամբ կայուն աճի միտում, սակայն աճը հիմնականում ապահովվել է աշխատանքային և քաղաքացիաիրավական պայմանագրերի կատարումից ստացված եկամուտներից հավաքագրվող եկամտահարկի գումարների հաշվին, ինչը տեղի է ունեցել հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի (հետևաբար նաև՝ միջին աշխատավարձերի) մակարդակի աճի հաշվին:

Ինչպես արդեն վերը նշել ենք, եկամտահարկի գծով պետական բյուջե հավաքագրումների առյուծի բաժինը ընկնում է աշխատանքային և քաղաքացիաիրավական պայմանագրերի կատարումից ստացված եկամուտներին, սակայն 2009 թ.-ից սկսած այն որոշակիորեն նվազել է: Այս նվազմանը զուգահեռ, չնայած հարկային եկամուտների կտրուկ անկմանը, որն, ինչպես գիտենք, պայմանավորված էր համաշխարհային տնտեսական ճգնաժամով, եկամտահարկի գծով հարկային մուտքերն աճել են, մասնավորապես եկամտահարկ/ՀՆԱ ցուցանիշն աճել է 0.5 տոկոսային կետով: Եկամտահարկի աճը մեծ մասամբ տեղի է ունեցել ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտների մասով, այդ թվում՝ նաև նվազագույն եկամտահարկի գծով: Սա հիմնականում կարելի է բացատրել երկու հանգամանքով: Առաջինը՝ «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի գործողության դադարեցմամբ պարզեցված հարկով հարկման դաշտում գործող անհատ ձեռնարկատերերը տեղափոխվել են հարկման ընդհանուր դաշտ[101], ինչպես նաև «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության տեսակների զգալի կրճատմամբ:

Մյուս կողմից, ուժի մեջ են մտել «Արտոնագրային վճարների մասին»[102] և «Ծրջանառության հարկի մասին»[103] ՀՀ օրենքները համապատասխանաբար՝ 2011թ. հունվարի 1-ից և 2013 թ. հունվարի 1-ից:

[101] «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքը ուժը կորցնելու մասին» ՀՀ օրենք, ընդունված 21.08.2008, ՀՕ-149-Ն
[102] «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենք, ընդունված 22.12.2010, ՀՕ-209-Ն
[103] «Ծրջանառության հարկի մասին» ՀՀ օրենք, ընդունված 19.12.2012, ՀՕ-236-Ն

Միևնույն ժամանակ, կառավարության կողմից իրականացվող ջանքերը՝ կապված փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների համար գործունեության բարենպաստ պայմաններ ստեղծելու հետ, կարծում ենք որոշակիորեն խեղաթյուրում է տնտեսական գործունեությունն իրականացնող անհատ ձեռնարկատերերի հարկային պարտավորությունների իրական պատկերը:

Հարկերի հավաքագրելիության հաջորդ մակրոտնտեսական ցուցանիշը հարկային սահմանության գործակիցն է (ՀՍԳ): Այն ցույց է տալիս ՀՆԱ-ի 1% աճին համապատասխանող հարկերի տոկոսային աճը: Որքան ՀՍԳ-ն մոտ է 1-ին, այնքան տնտեսության և հարկերի հավաքելիության աճի տեմպերը ներդաշնակ են, և նշանակում է հարկային բեռի փոփոխություն չի կատարվել: Եթե ՀՍԳ-ը փոքր է 1-ից, ապա առկա է հարկերի հավաքելիության խնդիր, քանի որ հարկման մակրոտնտեսական բազայի աճը առաջանցիկ է հարկերի աճի տեմպից: ՀՍԳ-ի 1-ից ավելի լինելը նշանակում է հարկային բեռի ծանրացում: Այս կանոնները գործում են այլ հավասար պայմաններում՝ հարկման միջավայրի, ՀՆԱ-ի կառուցվածքի անփոփոխության և այլ դեպքերում:

ՀՍԳ-ն հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\text{ՀՍԳ} = \frac{(\text{Հարկ}_n / \text{Հարկ}_{n-1} - 1)}{(\text{ՀՆԱ}_n / \text{ՀՆԱ}_{n-1} - 1)}, \quad \text{որտեղ՝}$$

Հարկ_n և ՀՆԱ_n-ն տվյալ տարում համապատասխանաբար հավաքագրված մուտքերն են և ստեղծված նոր արժեքը բացարձակ մեծությամբ, Հարկ_{n-1} և ՀՆԱ_{n-1}-ը տվյալ տարվան նախորդող տարում համապատասխանաբար հավաքագրված մուտքերն են և ստեղծված նոր արժեքը բացարձակ մեծությամբ[104]:Եկամտային հարկի սահմանության գործակիցը ցույց է տալիս ՀՆԱ-ի աճի ազդեցությունը եկամտային հարկի հավաքագրումների վրա:

[104] Belinga V., Benedek D., Mooij R. and Norregaard J., “Tax Buoyancy in OECD Countries”, IMF Working Paper, 2014, p. 4

Աղյուսակ 2.1.6

Հարկերի և եկամտային հարկի սահմանության գործակիցները (1994-2015թթ.)[105]

Տարի	ՀՆԱ (մլրդ դրամ)	Հարկային եկամուտներ և տուրքեր (մլրդ դրամ)	Եկամտային հարկ (մլրդ դրամ)	Հարկերի եկամուտների և տուրքերի ՀՍԳ	Եկամտային հարկի ՀՍԳ
1995	522.3	55.4	6.8	1.1	1.1
1996	661.2	69.1	8.8	1.1	1.1
1997	804.3	102.3	14.4	2.2	3
1998	955.4	130.4	13.5	1.5	0.3
1999	987.4	158.8	17.5	6.5	8.9
2000	1031.1	152.6	13.38	0.9	5.3
2001	1175.8	168.8	11.22	0.8	1.2
2002	1362.9	203.9	12.49	1.1	0.7
2003	1624.6	234.2	16.78	0.8	1.8
2004	1907.9	275.3	20.41	1	1.2
2005	2242.9	330.6	26.61	1.2	1.7
2006	2656.2	396.1	35.46	1.1	1.8
2007	3149.3	518.3	46.83	1.7	1.7
2008	3568.2	621.1	53.73	1.5	1.1
2009	3141.7	642.8	60.2	0.3	1.0
2010	3460.2	718.3	73.94	1.2	2.3
2011	3777.9	796.9	81.21	1.2	1.1
2012	4000.7	898.4	91.66	2.2	2.2
2013[106]	4555.6	1022.1	256.9	2	26.2
2014	4828.6	1087.4	289.3	1.1	2.4
2015	5032.0	1201.7	311.6	2.5	1.8

Հարկերի և եկամտային հարկի սահմանության գործակիցների վրա ազդում են մի շարք գործոններ, որոնք իրենց բնույթով կարող են լինել օրենսդրական կամ վարչարարական[107]:

Գծապատկեր 2.1.7

[105] ՀՀ ԱՎԾ, ՀՀ վիճակագրական տարեգրքեր, 2001-2015թթ.

[106] 2013թ. հունվարի 1-ից հետո հավաքագրված եկամտային հարկի գումարը համադրելի չէ մինչ այդ հավաքագրված եկամտահարկի գումարների հետ՝ կապված եկամտային հարկի մեջ նաև պարտադիր սոցիալական ապահովության վճարների ներառված լինելու հանգամանքի հետ:

[107] Wallace S., "Buoyancy of Georgia's Personal Income Tax – Brief", Fiscal Research Center of the Andrew Young School of Policy Studies, 2009, p. 4,

ՀՆԱ, հարկային եկամուտներ և տուրքեր, եկամտային հարկ դինամիկան (1995-2015թթ.)



Գծապատկեր 2.1.7-ից ակնհայտ է, որ չնայած եկամտային հարկի հավաքագրումների փոքր ծավալներին, այնուամենայնիվ այն ունի կայուն աճի միտում (բացառություն է միայն 2000 թ.): Կայուն աճի միտում ունեն նաև հարկային եկամուտները և տուրքերը: Այստեղ բացառություն է միայն 2008 թ., երբ ՀՆԱ-ի մոտ 12 տոկոս անկումը չհանգեցրեց հարկային եկամուտների նվազման, ավելին՝ եկամտային հարկի գումարները աճեցին շուրջ 6.5 մլրդ-ով[108]: Ինչ վերաբերում է հարկային եկամուտների և տուրքերի ու եկամտային հարկի սահմանման գործակիցներին, ապա այստեղ պատկերը որոշակիորեն փոխվում է: Մասնավորապես, եկամտային հարկի սահմանման գործակիցը և ՀՆԱ-ի աճը փոփոխվում են գրեթե նույն օրինաչափությամբ: Այսինքն, եթե հարկային եկամուտների ու տուրքերի վրա ՀՆԱ-ի աճի ազդեցությունն այնքան էլ ակնհայտ չէ, ապա եկամտային հարկի դեպքում կապն ակնհայտ է: Միգուցե նշված միտումը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ եկամտային հարկի գերակշիռ մասը ձևավորվում է աշխատավարձից և դրան հավասարեցված միջոցներից, իսկ ՀՆԱ-ի աճը կհանգեցնի զբաղվածության աճի, ինչն էլ իր հերթին կբերի վարձու աշխատողների թվաքանակի ավելացմանը:

[108] Հաշվարկի համար հիմք են հանդիսացել Աղյուսակ 2.1.6-ի տվյալները

Գծապատկեր 2.1.8

ՀՆԱ-ի աճ, հարկային եկամուտների և տուրքերի, եկամտային հարկի սահմանության գործակիցներ



Վերը նշվածը մեկ անգամ ևս թույլ է տալիս փաստելու, որ հարկային քաղաքականությունը լուրջ լծակ է կառավարության ձեռքում տնտեսության կայունացման և եկամուտների վերաբաշխման հարցում:

Մյուս կողմից, հարկային քաղաքականության մոտեցումները պետք է լինեն նպատակային և չխոչընդոտեն տնտեսության աճին: Այս համատեքստում կարծում ենք, որ ավելի քան կարևորվում է եկամտային հարկի համակարգի դերը տնտեսության աճի և եկամուտների վերաբաշխման հարցում:

2.2 Հարկվող եկամուտների, հարկման գործող մեխանիզմների գնահատականը և համապատասխանությունը միջազգային առաջավոր փորձին

Ցանկացած երկրի հարկային համակարգի ուսումնասիրությունը, մասնավորապես՝ գործող հարկատեսակները, հարկվող և չհարկվող եկամուտների դասակարգումը, հարկերի դրույքաչափերի կառուցվածքը, արտացոլում է տվյալ երկրի կառավարության հիմնական քաղաքական և աշխարհայացքային մոտեցումները[109]: Ընդ որում, ըստ երկրների հարկային համակարգերի, տարբերությունները կարող են պայմանավորված լինել ոչ միայն տվյալ պետության հարկային համակարգի արդարության, տնտեսության վրա ունեցած ազդեցության, ինչպես նաև հարկերի հավաքագրման արդյունավետության վերաբերյալ ունեցած մոտեցումներով, այլև պատմական, աշխարհագրական, տնտեսական գործոններով:

Ամեն դեպքում, ցանկացած երկրի հարկային համակարգի գլխավոր նպատակը պետք է հանդիսանա պետական համակարգի գոյության ֆինանսավորումը հնարավոր արդյունավետ ճանապարհով: Այսինքն, յուրաքանչյուր պետության կառավարության նպատակն է ապահովել հարկման այնպիսի արդյունավետ մակարդակ, որը չի խաթարի երկրում իրականացվող տնտեսական գործունեությանը, չի առաջացնի գնաճային ճնշումներ և կապահովի կայուն քաղաքական համակարգի առկայություն[110]:

Հարկային համակարգը դինամիկ համակարգ է, որն անընդհատ փոփոխվում է՝ ելնելով տվյալ երկրի կառավարության առջև ծառացած՝ տնտեսական, սոցիալական քաղաքականության առաջնահերթություններից, քաղաքական շարժառիթներից, ինչպես նաև արտաքին գործոններից: Մասնավորապես, գլոբալիզացիոն գործընթացները, տարածաշրջանային, զարգացած երկրների վարած քաղաքականությունն անմիջական ազդեցություն է ունենում այլ

[109] Bird R. M.,. Zolt E. M, “Redistribution via Taxation: The Limited Role of Income Taxes in Developing Countries”, Georgie State University, International Studies Program, Working Paper No 0507, March 2005, p. 3

[110] Bird R. M, “Taxation in Latin America: Reflections on Sustainability and the Balance between Efficiency and Equity”, University of Toronto, International Tax Program Paper, No 0306, June 2003, p. 19

երկրների քաղաքականությունների վրա: Այս առումով հատկանշական է նաև այն հանգամանքը, որ 20-րդ դարի վերջերից սկսած զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներում օրենսդրական փոփոխությունների իրականացման ժամանակ անմիջական մասնակցություն են ունենում նաև միջազգային փորձագետները, ինչպես նաև միջազգային դոնոր կազմակերպությունները, ինչպիսիք են՝ Արժույթի Միջազգային Հիմնադրամը (ԱՄՀ), Համաշխարհային Բանկը, ԱՄՆ ՄԶԳ, այլ ֆինանսական կառույցներ[111]:

Չնայած տնտեսագիտական տեսության մեջ վերը նշված փորձագետների և միջազգային կառույցների տեխնիկական աջակցության շրջանակներում իրականացված բարեփոխումների՝ դրական արդյունքների վերաբերյալ կարծիքները միանշանակ չեն, այնուամենայնիվ, գոյություն ունեն որոշակի ընդհանուր մոտեցումներ, որոնցով ցանկալի է առաջնորդվել ժամանակակից տնտեսական, իրավական և սոցիալական մարտահրավերներին համահունչ հարկային համակարգ ունենալու համար[112]: Օրինակ՝ ֆիզիկական անձանց եկամուտների հարկման դեպքում թե՛ զարգացած երկրների փորձի, թե՛ վերը նշված փորձագետների և միջազգային կառույցների կողմից կատարված աշխատանքների ուսումնասիրությունից ակնհայտ է, որ ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգի բարեփոխումներ նախատեսող միջոցառումները հիմնականում պետք է միտված լինեն հարկվող բազայի ընդլայնմանը և դրույքաչափերի կրճատմանը (իհարկե, այս դեպքում ևս պետք է մոռանալ հարկման կարևորագույն սկզբունքները՝ հարկման չեզոքությունը, հավասարությունը և պարզությունը)[113]: Օրինակ, այսպես, եթե 1980-ական թթ. զարգացած երկրներում եկամտահարկի առավելագույն դրույքաչափը 65% էր, ապահիմա այն առավելագույնը 50% է[114]:

---

[111] Bahl R. W., Bird R. M., “Tax Policy in Developing countries: Looking Back and Forword”, University of Toronto, Institite for International Business, Working Paper No13, May 2008, p. 12

[112] Emran S.M., Stiglitz J.E., “On selective indirect tax reform in developing countries”, Journal of Public Econcomics, Elsevier, vol. 89(4), April 2005, p. 612

[113] Tanzi V., Zee H., “Tax Policy for Developing Countries”, IMF, 2001, p. 5

[114] Hungerford Th. L., “Taxes and the Economy: An Economic Analysis of the Top Tax Rates since 1945”, Congress Research Service, 2012, p. 2,

Ինչպես արդեն նշել ենք, եկամտահարկը այն եզակի հարկատեսակներից է, որին առնչվում են բոլոր ֆիզիկական անձինք: Այս առումով ֆիզիկական անձանց եկամուտների հարկման արդյունավետ համակարգի մշակմանը անհրաժեշտ է մոտենալ բավականին զգուշորեն, մասնավորապես հստակ սահմանել հարկատուների շրջանակը, դրույքաչափերի սանդղակը, հարկվող օբյեկտի սահմանումը, չհարկվող և հարկվող եկամուտների տարանջատման հստակ սահմանագիծը, սոցիալական ապահովագրության վճարների կամ հարկերի կիրառման շրջանակների ու նպատակների հստակ ամրագրումը և այլն: Եկամտային հարկի հաշվարկման պարզ սխեման պատկերված է Գծապատկեր 2.2.1-ում:

Գծապատկեր 2.2.1.

Եկամտային հարկի հաշվարկման սխեմա



Կարող ենք փաստել, որ ֆիզիկական անձանց եկամուտների եկամտային հարկով հարկման առանցքային խնդիրներից է հարկվող եկամտի հստակ սահմանումը: Հարկվող եկամուտը սահմանվում է՝ որպես տվյալ հարկային ժամանակաշրջանում ֆիզիկական անձի

համախառն եկամտի և թույլատրելի նվազեցումների տարբերություն:

Համախառն եկամուտ ասելով հասկանում ենք տվյալ հարկային ժամանակաշրջանում ֆիզիկական անձի ստացած բոլոր հարկման ենթակա եկամուտները, որի մեջ չեն ներառվում այն եկամուտները, որոնք հարկման ենթակա չեն: Ստացվում է, որ հարկվող եկամտի գումարի չափը որոշելու համար անհրաժեշտ է սահմանել համախառն եկամուտը, հարկման նպատակով եկամուտ չհամարվող տարրերը և վերջապես նվազեցվող եկամուտների շրջանակները[115]: Համախառն եկամտի հստակ սահմանումը ավելի քան կարևորվում է եկամտի միասնական մոդելի կիրառության ժամանակ՝ եկամտի որոշ տեսակներ հարկման դաշտից դուրս մնալու հանգամանքով պայմանավորված: Շատ երկրներում այս խնդիրը լուծելու նպատակով առանձնացնում են եկամտի, այսպես կոչված մնացորդային կատեգորիա «և այլ եկամուտներ», որն իր մեջ ներառում է ֆիզիկական անձի ստացած բոլոր այլ եկամուտները[116]:

Ինչպես արդեն վերը նշել ենք, հարկվող եկամտի որոշման համար անհրաժեշտ է նաև սահմանել եկամուտ չհամարվող տարրերը: Եթե համեմատենք տարբեր երկրների եկամուտ չհամարվող տարրերը, ապա դրանք կարող են լինել բազմազան, սակայն տեսականորեն դրանք կարելի է բաժանել մի քանի խմբի: Որպես կանոն, եկամուտ չհամարվող տարրերի մեջ ընդգրկվում են սոցիալական փոխհատուցման նպաստները, որոնք իրենցից ներկայացնում են ավելի շուտ կորստի փոխհատուցում, քան սպառման հնարավորությունների ավելացում[117]:

Երկրորդ խումբը վերաբերում է միջազգային պայմանագրերի, համաձայնագրերի շրջանակներում իրականացրած գործունեության ընթացքում ստացած եկամուտներին: Օրինակ, «Դիվանագիտական կապերի մասին» Վիեննայի կոնվենցիային միացած երկրներում այդ կոնվենցիայի շրջանակներում դիվանագետների և դրանց

[115] Burns L., Krever R., “Individual Income Tax”, Tax Law Design and Drafting, II vol. ed. by Thuronyi V., IMF, 1998, p. 502

[116] Thuronyi V., “Comperative Tax Law”, Kluwer Law International, 2003, p. 234

[117] Stotsky J., “The Base of Income Tax”, Tax Policy Handbook, edited by Parthasarathi Shome, IMF, 1995, p. 122

հավասարեցված անձանց եկամուտները՝ կապված այդ գործունեության հետ, չեն հարկվում[118]:

Մյուս խումբը կառուցվածքային է: Սա հիմնականում կրկնակի հարկումից խուսափելու համար միջոցառումն է, մասնավորապես՝ եկամտի որոշ տեսակներ հարկվում են հարկային գործակալի կողմից աղբյուրի մոտ, այնուհետև ընդգրկվում համախառն եկամտի մեջ և հարկվելու դեպքում ստացվում է, որ նույն հարկով նույն օբյեկտը հարկվում է երկու անգամ: Արդարության տեսանկյունից անհրաժեշտ է, որ այս եկամուտները չներառվեն համախառն եկամտի մեջ[119]:

Եկամուտ չհամարվող տարրերի մյուս ենթախմբի առկայությունը պայմանավորված է քաղաքական կամ վարչական շարժառիթներով: Օրինակ, պետությունը կենսաթոշակային հիմնադրամներում խնայողությունները խրախուսելու համար կարող է չհարկել կենսաթոշակային հիմնադրամներից ստացվող եկամուտները և այլն:

Հարկվող եկամտի սահմանման համար անհրաժեշտ հաջորդ քայլը նվազեցումների համակարգի սահմանումն է, ընդ որում, եկամտի տվյալ տեսակի եկամուտ չհամարվող տարր կամ նվազեցվող եկամուտ համարվելու սահմանները հստակ տարանջատված չեն, և տարբեր երկրներում եկամտի մի տեսակը կարող է համարվել եկամուտ չհամարվող տարր, մեկ այլ երկրում՝ նվազեցվող եկամուտ: Ակնհայտ է, որ նվազեցումների համակարգը նեղացնում է եկամտահարկով հարկման բազան և անհարկի բարդացնում է հարկային վարչարարությունը, սակայն միանշանակ խոսել նվազեցումների տնտեսական անարդյունավետության վերաբերյալ, թերևս ճիշտ չի լինի՝ անհրաժեշտ է դրանք համադրել օգուտներ-ծախսեր հարաբերակցությունից ելնելով: Ընդհանուր առմամբ, նվազեցումները բաժանվում են 2 խմբի՝ ընդհանուր և նպատակային[120]:

---

[118] «Դիվանագիտական կապերի մասին» Վիեննայի Կոնվենցիա, ընդունված 08.04.1961, հոդված 39

[119] Ault H. J., Brian A.J., "Comparative Income Taxation: A Structural Analysis", Kluwer Law International, 2010, p. 291

[120] Zee H.H., "Personal Income Tax Reform:Concepts, Issues, and Comparative Country Developments", IMF Working Paper, 2005, p. 18

Ընդհանուր նվազեցումն իրենից ներկայացնում է եկամտի որոշակի գումար, որը հարկման ենթակա չէ՝ անկախ հարկատուի ստացած եկամտի չափի, տեսակի և այլն: Սաբավականին արդյունավետ լծակ է նույնիսկ ֆիքսված դրույքաչափ ունեցող եկամտահարկի համակարգը պրոգրեսիվ դարձնելու (ըստ էության, կարող է համարվել 0% դրույքաչափ), ինչպես նաև ցածր եկամուտներ ստացող ֆիզիկական անձանց օժանդակելու տեսանկյունից:

Եկամտահարկի ընդհանուր նվազեցում կիրառող երկրները, ինչպես վկայում է միջազգային փորձի ուսումնասիրությունը, բավականին շատ են: Օրինակ՝ ՏՀԶԿ անդամ բոլոր երկրների եկամտահարկի մասին օրենքներն ունեն դրույթներ, որոնց համաձայն եկամտի որոշակի մակարդակ չի հարկվում[121]:

Եկամտահարկի ընդհանուր նվազեցման կիրառության արդյունավետությունը մեծապես կախված է վերջինիս գումարի չափի որոշման հետ: Օրինակ՝ Սլովակիայում, Սլովենիայում և Մեծ Բրիտանիայում չհարկվող եկամտի մեծությունն ուղղակիորեն կապված է ստացվելիք եկամտի չափի հետ: Սլովակիայում եկամտի չհարկվող շեմ չի կիրառվում, եթե ստացվելիք եկամտի չափը 3.8 անգամ գերազանցում է միջին աշխատավարձի չափը: Մեծ Բրիտանիայում հարկատուները չեն կարող օգտվել չհարկվող եկամտի նվազեցման արտոնությունից, եթե նրանց ստացվելիք եկամուտները 3.2 անգամ գերազանցեն միջին աշխատավարձի գումարի չափը[122]:

Այդուհանդերձ, եկամտի չհարկվող շեմի սահմանման ժամանակ անհրաժեշտ է հստակ սահմանել, որ եկամտի չհարկվող շեմը կիրառվելու է տվյալ ֆիզիկական անձի բոլոր եկամուտների, այլ ոչ թե միայն աշխատավարձի և դրանց հավասարեցված վճարների նկատմամբ: Նշված խնդրին կարող են առնչվել եկամտահարկի միասնական մոդելի կիրառության ժամանակ, սակայն, որպես կանոն, եկամտահարկի չհարկվող շեմը կիրառվում է աշխատավարձի և դրանց հավասարեցված եկամուտների նկատմամբ[123]:

---

[121] Special Feature: Trends in personal income tax and employee social security contribution schedules, OECD, 2012, p. 44, Աղյուսակ 1.3.2,

[122] Taxing Wages, OECD, 2011, p. 47

[123] Ganghof S., “The Politics of Income Taxation: A Comparative Analysis”, University of Oxford, 2006, p. 45

Մի փոքր այլ է սոցիալական վճարների հաշվարկման դեպքում եկամտի չհարկվող շեմի կիրառումը: Զարգացած երկրների գերակշիռ մասում վարձու աշխատողների կողմից վճարվող սոցիալական վճարների հաշվարկման ժամանակ եկամտի չհարկվող շեմը բացակայում է: Բացառություն են միայն Ավստրիան, Բելգիան, Կանադան, Իռլանդիան, Նորվեգիան և Մեծ Բրիտանիան, որոնք կիրառում են եկամտի չհարկվող նվազագույն շեմ: Ի դեպ, Սլովակիայում, Իսպանիայում և Թուրքիայում կիրառվում է նվազագույն սոցիալական վճարների կամ հարկերի համակարգ, որի շրջանակներում լրիվ դրույքով աշխատող յուրաքանչյուր վարձու աշխատող պարտավոր է վճարել նվազագույն սոցիալական վճար կամ հարկ, որի գումարը հաշվարկվում է հիմք ընդունելով պաշտոնապես սահմանված նվազագույն աշխատավարձի չափը[124]:

ՀՀ-ում «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով եկամտային հարկով հարկման նպատակով եկամտի չհարկվող շեմ սահմանված չէ [125]: Ինչ վերաբերում է մինչև 2013 թ.-ը վարձու աշխատողների կողմից վճարվող սոցիալական ապահովության վճարների հաշվարկմանը, ապա պարտադիր սոցիալական ապահովության վճարները հաշվարկվում էին համախառն եկամտի նկատմամբ[126]:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ կարծում ենք եկամտային հարկի հաշվարկման բազայի ընդլայնմանն ուղղված բարեփոխումների իրականացման ժամանակ եկամտային հարկով չհարկվող նվազագույն շեմի սահմանումը կարող է արդյունավետ լծակ հանդիսանալ հարկման հորիզոնական արդարության սկզբունքի ապահովման և դեռ ավելին ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգի ուղղահայաց արդարության սկզբունքի ամրապնդմանը: Միաժամանակ, եկամտի չհարկվող շեմի առկայությունը պետության համար կարող է հանդիսանալ լուրջ լծակ նաև մի շարք սոցիալական հարցերի լուծման ժամանակ:

Ինչպես արդեն նշել ենք, նվազեցումների մյուս խումբը նպատակային նվազեցումներն են, որոնք, ըստ երկրների, կարող են

[124]"Special Feature: Trends in personal income tax and employee social security contribution schedules", OECD, 2012, p.59
[125] Տես՝ հոդված 14
[126] Տես՝ հոդված 4

տարբերվել, սակայն հիմնականում դրանք բնույթով նման են և հետապնդում են երկու նպատակ: Առաջին նպատակը պետության կողմից հորիզոնական արդարության սկզբունքի ապահովումն է, մասնավորապես այն կարող է տեղի ունենալ հաշմանդամներին տրվող աջակցության տեսքով: Երկրորդ ուղղությունը գործունեության որևէ ոլորտի, ճյուղի տրվող արտոնություններն են, օրինակ՝ գյուղատնտեսական արտադրությանը, բարեգործությանը: Սակայն իրականում այս նվազեցումները կարող են հանգեցնել դրանց ներդրման հիմնական նպատակների խեղաթյուրման[127]: Նմանատիպ նվազեցումներ սահմանելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև դրանցից բխող վարչարարական ծախսերը: Այս խնդիրների լուծման համար կարելի սահմանել նպատակային նվազեցումներ կատարելու առավելագույն շեմ, որից ավել կատարված ծախսերը նվազեցման ենթակա չեն լինի[128]:

Այժմ անդրադառնանք «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված հարկվող եկամուտների կազմին և որոշակի զուգահեռներ անցկացնենք զարգացած երկրներում վերջիններիս հարկման առանձնահատկությունների միջև:

ՀՀ-ում համախառն եկամուտը սահմանվում է հաշվետու ժամանակաշրջանում հարկ վճարողի ստացման ենթակա՝ հաշվեգրված (պասիվ եկամուտների, ինչպես նաև անհատ ձեռնարկատերեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց մասով՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացված) բոլոր եկամուտների հանրագումարն է[129]: Միաժամանակ, հարկվող եկամուտ է համարվում հաշվետու ժամանակաշրջանում հարկ վճարողի համախառն եկամտի և «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված նվազեցումների և ծախսերի դրական տարբերությունը, եթե նշված օրենքով այլ հարկվող օբյեկտի որոշման առումով այլ բան սահմանված չէ[130]:

Պայմանականորեն եկամտային հարկով հարկվող եկամուտները կարող ենք բաժանել 5 խմբի՝

[127] Dale Ch., “Tax Incentives”, Tax Policy Handbook edited by Parthasarathi Shome, IMF, 1995, p. 166
[128] Zee H. H., “Personal Income Tax Reform: Concepts, Issues, and Comparative Country Developments”, IMF Working Paper, 2005, p. 18,
[129] Տես՝ հոդված 4,
[130] Տես նույն տեղում՝ հոդված 5,

1. աշխատավարձ և դրանց հավասարեցված վճարումներ,

2. կենսաթոշակներ,

3. կապիտալի հետգործառնություններից ստացվող եկամուտներ,

4. ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտներ,

5. և այլ եկամուտներ:

<u>Աշխատավարձ և դրանց հավասարեցված վճարումներ</u>

ՀՀ-ում եկամտային հարկով հարկվող եկամուտների առյուծի բաժինը կազմում են աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները: Աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հստակ սահմանում գոյություն չունի. ըստ երկրների կարող է փոփոխվել: ՀՀ–ում աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների ցանկը սահմանվում է ՀՀ կառավարության որոշմամբ[131]:

Միջազգային պրակտիկայում վարձու աշխատողի հավելյալ վճարները, ինչպես նաև փոխհատուցման վճարները ենթակա են հարկման ընդհանուր սահմանված կարգով, սակայն, ըստ երկրների, դրանք կարող են ունենալ հարկման տարբեր մոտեցումներ: Օրինակ, հավելյալ վճարների որոշ տեսակներ կարող են հարկվող եկամուտ չհամարվել՝ կախված տվյալ երկրի քաղաքական մոտեցումներից և վարչարարական կարողությունների մակարդակից[132]:

Նույնը վերաբերում է նաև փոխհատուցման գումարներին, սակայն, ի տարբերություն չհարկվող հավելյալ վճարների որոշ տեսակների, որպես կանոն, փոխհատուցման գումարները նորմավորվում են, օրինակ՝ վարձու աշխատողի գործուղման ծախսերը փոխհատուցվում են որոշակի սահմանաչափերի շրջանակներում:[133]

Այս առումով հավելյալ վճարների, այդ թվում՝ փոխհատուցման գումարների հարկման մոտեցումները, ընդհանուր առմամբ

[131] Աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 2013 թ.-ի օգոստոսի 8-ի թիվ 853-Ն որոշմամբ,

[132] Cordes J. J., Ebel R. D., Gravelle Jane, “The Encyclopedia of Taxation & Tax Policy”, The Urban Institute Press, 2005, p. 161

[133] Dennis-Escoffier Sh., Karen A. Fortin, Taxation for Decision Makers, 2008 Edition, p. 131

համահունչ են միջազգային պրակտիկայում կիրառվող մոտեցումներին[134]:

Փոխհատուցման գումարների նորմավորման ընթացակարգերը սահմանված են ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ[135]:

Ընդհանուր առմամբ, կարող ենք եզրահանգել, որ ՀՀ-ում աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հարկման ընթացակարգերը հիմնականում համահունչ են միջազգային պրակտիկայում կիրառվող ընթացակարգերի հետ:

<u>Կենսաթոշակներ</u>

Կենսաթոշակային ծրագրերի իրականացման շրջանակներում եկամտահարկի մոդելը կարող է շատ մեծ դերակատարություն ունենալ [136]:

Կուտակային կենսաթոշակների հարկման միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ գոյություն ունեն վերջիններիս հարկման երեք եղանակներ՝

1. կենսաթոշակային հիմնադրամներին մասնակիցների (գործատուների և վարձու աշխատողների) կողմից վճարումներ կատարելու փուլում (TEE-taxed-exempted-exempted),

2. կենսաթոշակային հիմնադրամում ներդրումային եկամտի հաշվեգրման պահին (ETE-exempted-taxed-exempted),

3. կենսաթոշակ ստանալու փուլում (EET-exempted-exempted-taxed)[137]:

Այսինքն՝ ստացվում է, որ այս եղանակների համադրումից կստացվեն կենսաթոշակների հարկման թվով 8 եղանակներ: Օրինակ՝ կարող են լինել երկրներ, որոնք կենսաթոշակները հարկեն և՛ առաջին, և՛ երկրորդ փուլերում (TTE)[138]:

Հարկման արդյունավետության տեսանկյունից առավել ընդունելի տարբերակ է կենսաթոշակները հարկել 3-րդ փուլում: Սա հիմնավորվում է հիմնականում այն հանգամանքով, որ բարձր գնաճային երևույթների առկայության դեպքում ներկայումս

---

[134] «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք, ընդունված 22.12.2010, ՀՕ-246-Ն, հոդված 6-ի 12, 16 և 21 ենթակետեր

[135] ՀՀ կառավարության 2005 թ.-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2335 որոշում

[136] Keenay, G. and Whitehouse E.R. ,"The Role of the Personal Tax System in Old-age Support: A Survey of 15 Countries", Fiscal Studies, Vol. 24, No. 1, 2003, p. 12

[137] Whitehouse, E.R. 'Tax treatment of funded pensions', Social Protection Discussion Paper, World Bank, 1998, p.2

[138] Sullivan M.,Understanding Pensions, Taylor@Fracis e-Library, 2004, p. 70

վճարված գումարները կարող են համարժեք չլինել ապագայում ստացվելիք գումարների հետ: 2-րդ փուլում կենսաթոշակների կրճատումը կարող է հանգեցնել վարչարարական խնդիրների, քանի որ կարող են բարդություններ առաջանալ ներդրումային եկամուտների հաշվարկման ժամանակ[139]:

Եվրամիության երկրներում ևս առավել ընդունելի է կենսաթոշակները հարկել 3-րդ փուլում, այսինքն՝ կենսաթոշակների ստացման պահին[140]:

Ստորև ներկայացնում ենք զարգացած երկրների՝ կուտակային կենսաթոշակների հարկման ընդհանուր մոտեցումները:

Աղյուսակ 2.2.2.

Կուտակային կենսաթոշակների հարկման առանձնահատկությունները զարգացած երկրներում[141]

EET	EEpT[142]	TEE	ETT	TET	TTE	TTT
Կանադա, Ֆինլանդիա, Հունաստան, Իսլանդիա, Նիդերլանդներ, Նորվեգիա, Լեհաստան, Շվեյցարիա, Ավստրիա, ԱՄՆ	Ֆրանսիա, Գերմանիա, Իռլանդիա, Ճապոնիա, Կորեա, Մեքսիկա, Սլովակիա, Իսպանիա, Թուրքիա, Մեծ Բրիտանիա, Բելգիա, Պորտուգալիա	Հունգարիա	Դանիա, Իտալիա, Շվեդիա	Չեխիա, Լյուքսեմբուրգ	Նոր Զելանդիա	Ավստրալիա

Այնուամենայնիվ, կենսաթոշակների հարկման եղանակի ընտրությունը կախված է կուտակային կենսաթոշակային համակարգին անցնելու ժամանակ տվյալ երկրի սոցիալ-տնտեսական առանձնահատկություններից, քանի որ կուտակային կենսաթոշակային համակարգերի ներդրումը ծախսատար գործընթաց

[139] Dilnot, A.W, "Taxation of private pensions: costs and consequences in OECD", 1992, p. 24

[140] http://ec.europa.eu/finance/pensions/index_en.htm, EU Pension Fund Directive on 23 September 2005

[141] Yoo Kwang-Yeol and Serres A., "Tax Treatment of Private Pension savings in OECD countries", OECD Economic Studies No. 39, 2004, p. 79

[142] EEpT- նշանակում է, որ որոշ դեպքում կենսաթոշակները կարող են հարկվել մասամբ,

է: Շատ երկրներ ընտրում են կենսաթոշակների հարկման առաջին եղանակը, քանի որ այն հանդիսանում է պետական բյուջեի եկամուտների լրացուցիչ աղբյուր[143]:

ՀՀ-ում պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի պարտադիր բաղադրիչին միանալու դեպքում կենսաթոշակային վճարները հարկվում են առաջին եղանակով, իսկ կամավոր կուտակային կենսաթոշակները՝ երրորդ եղանակով[144]:

Տոկոսներ

Տոկոսային եկամտի հարկումը տարբերվում է ըստ երկրների՝ կապված այդ երկրներում գործող եկամտահարկի մոդելների: Միասնական եկամտահարկի մոդելի դեպքում տոկոսային եկամուտը հարկվում է միասնական դրույքաչափերով: Կառուցվածքային եկամտահարկի դեպքում հարկային գործակալի կողմից պահված եկամտահարկի գումարը համարվում է վերջնական հարկային պարտավորություն: Այս առումով, բացառություն են՝ Բելգիան, Ֆրանսիան և Պորտուգալիան, որտեղ հարկ վճարողներն իրավունք ունեն որոշելու, թե վերը նշված եղանակներից որն են նախընտրում[145]: Տոկոսային եկամտի հարկման շրջանակներում կարևորվում է պետական պարտատոմսերից ստացվող տոկոսային եկամտի հարկման առանձնահատկությունները: Մասնավորապես, պետական պարտքի ֆինանսավորման նպատակով պետական պարտատոմսերի թողարկումը բավականին արդյունավետ գործիք է թե՛ զարգացած, թե՛ զարգացող երկրներում: Օրինակ՝ մի շարք զարգացող երկրներ պետական պարտատոմսերի շուկայի զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով պետական պարտատոմսերից ստացվող եկամուտները ազատում են եկամտահարկից[146]: Զարգացած երկրներից թերևս միայն ԱՄՆ-ում է, որ պետական պարտատոմսերից ստացվող եկամուտները չեն հարկվում[147]:

ՀՀ-ում տոկոսները հարկվում են հարկային գործակալների կողմից՝ արտոնյալ 10% դրույքաչափով[148]: Բացառություն են կազմում միայն գանձապետական պարտատոմսերի, այլ պետական

[143] World Bank Pension Reform Primer, The tax treatment of funded pensions, 1995, p. 4
[144] «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 6, 2-6-րդ ենթակետեր
[145] OECD, Taxation and household saving, 1994, p. 39
[146] Norregaard J., “The Tax Treatment of Government Bonds”,IMF, 1997, p.5
[147] Novogradac M., Tax-Exempt Bond Handbook - 2009 Edition, p.7
[148] «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 10

արժեթղթերի, Համահայկական բանկի թողարկած պարտատոմսերից տոկոսի կամ մարելիս զեղչի ձևով, ինչպես նաև վերջիններիս օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ այլ նման գործարքներից ստացված եկամուտները[149]:

Աղյուսակ 2.2.3.

Պետական պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկման դեպքում կանխատեսվող եկամտային հարկի գումարի չափը 2010-2015թթ. (մլրդ դրամ)[150]

	Պետական պարտատոմսերի գծով վճարված տոկոսավճարներ	Կանխատեսվող եկամտային հարկ
2012	22.96	2.3
2013	29.73	3
2014	32.95	3.3
2015	32.12	3.2

Չնայած պետական պարտատոմսերի հարկումն էական եկամտային ազդեցություն ունենալ չի կարող պետական բյուջե հավաքագրվող եկամտային հարկի գումարների վրա, այնուամենայնիվ, տարբեր աղբյուրներից տոկոսային եկամուտ ստացող ֆիզիկական անձանց եկամուտների հարկման նկատմամբ խստական մոտեցումը խաթարում է հարկման հորիզոնական արդարության սկզբունքը, ինչը կարծում ենք՝ ոչ արդյունավետ է: Պարտատոմսերի հարկման դրույքաչափերը ըստերկրների ներկայացված են Հավելված 6-ում:

Շահաբաժիններ

Ինչպես գիտենք, շահաբաժինները բաշխվում են շահույթից և, ենթադրվում է, որ հարկվել են շահութահարկով: Նշված գումարները եկամտահարկով հարկելու դեպքում ստացվում է, որ նույն եկամուտը հարկվում է երկու անգամ: Ստացվում է՝ շահաբաժինների հարկման իրական բեռը ավելի բարձր է, քան շահութահարկի կամ եկամտային հարկի դրույքաչափը: Զարգացած երկրներում շահաբաժինների հարկման տարբեր մոտեցումներ են կիրառվում: Օրինակ՝ Էստոնիայում շահաբաժինները շահութահարկով չեն

[149] «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 7
[150] www.minfin.am, Ծառայություններ, Պետական պարտատոմսերի վերաբերյալ տեղեկանքներ 2012-2015

հարկվում: Այնուամենայնիվ, բոլոր զարգացած երկրներում շահաբաժինները հարկվում են (Տես՝ Հավելված 6):

Զարգացող երկրներում առավել նպատակահարմար է շահաբաժիններ չհարկել կամ հարկել արտոնյալ դրույքաչափով, որը հավասար կլինի տոկոսների նկատմամբ կիրառվող դրույքաչափին[151]:

ՀՀ-ում շահաբաժինները չեն հարկվում, դրանք համարվում են եկամտային հարկով հարկման նպատակով նվազեցվող եկամուտ, մասնավորապես՝ համախառն եկամուտը նվազեցվում է ստացված շահաբաժինների չափով:[152]

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2010-2012 թթ. արդյունքներով կազմակերպությունների և ֆիզիկական անձանց բաշխված շահաբաժինների ընդհանուր գումարը տատանվել է 48.7-48.2 մլրդ դրամի սահմաններում, համապատասխանաբար 2010 թ.-ին կազմելով 48.7 մլրդ դրամ, 2011 թ.-ին՝ 48.3 մլրդ դրամ, 2012 թ.-ին՝ 48.2 մլրդ դրամ: Կարծում ենք, որ նշված միտումը արդիական է նաև 2015 թ.-ին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2012թ.-ից հետո լուրջ տնտեսական ակտիվություն չի գրանցվել: Այսինքն, շահաբաժինների հարկման դեպքում պետական բյուջե հավաքագրվող եկամտային գծով գումարները կարող են ավելանալ միջինը 4.8 մլրդ դրամով[153]:

Ամփոփելով կարող ենք ասել, որ հարկային բարեփոխումների շրջանակներում նպատակահարմար կլինի անդրադառնալ ՀՀ-ում շահաբաժինների հարկման հնարավորություններին: Ի դեպ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ շահաբաժիններ ստացող ֆիզիկական անձինք, որպես կանոն, ունեն բարձր եկամուտներ, վերջիններիս հարկումը, մեր կարծիքով, չի կարող ունենալ ընդգծված բացասական ազդեցություն ունենալ հասարակության սոցիալական վիճակի վրա, դեռ ավելին՝ շահաբաժինների հարկումը կարող է արդյունավետ լծակ հանդիսանալ եկամուտների վերաբաշխման հարցում:

<u>Կապիտալ ի հավելված</u>

---

[151] Tanzi V., Zee H., “Tax Policy for Developing Countries”, IMF, 2001, p. 6

[152] «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 7

[153] Հաշվարկն ստացվել է շահաբաժինների նկատմամբ 10% եկամտային հարկի դրույքաչափկիրառելով

Ֆիզիկական անձանց կապիտալի հավելաճի տեսքով ստացված եկամուտների հարկման միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ վերջիններիս հարկումը առավել տարածված է զարգացած երկրներում: Կապիտալի հավելաճը հարկելու տնտեսական նպատակահարմարությունը հիմնավորվում է մի շարք գործոններով, մասնավորապես՝

1. Հեյգ-Սիմոնսի «եկամուտ» տերմինի սահմանումը չի տարանջատում եկամուտների ստացման աղբյուրները,

2. կապիտալի հավելաճից ստացված եկամուտները չհարկելով՝ հարկման խտրական պայմաններ են ստեղծվում աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ և կապիտալի հավելաճի տեսքով եկամուտներ ստացող ֆիզիկական անձանց միջև,

3. կապիտալի հավելաճի որոշ տարրեր, մասնավորապես տոկոսային եկամտի հարկմամբ, հարկման անհավասար պայմաններ են ստեղծվում ներդրումային տարբեր գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց հարկման մոտեցումների միջև,

4. առաջանում են մի շարք վարչարարական խնդիրներ, քանի որ հարկատուները օգտվելով կապիտալի հավելաճից ստացված եկամուտները չհարկելու հնարավորություններից կարող են եկամտի այլ տեսակներ ևս համարել կապիտալի հավելաճից ստացված եկամուտներ և հարկեր չվճարել:

Օրինակ՝ Իսպանիայում և մի շարք այլ զարգացած երկրներում երկարաժամկետ ներդրումների խրախուսման նպատակով այդ ակտիվներից ստացվելիք կապիտալի հավելաճը հարկում են արտոնյալ դրույքաչափերով, իսկ մնացած դեպքերում՝ եկամտահարկի ընդհանուր սանդղակի շրջանակներում[154]:

Իռլանդիայում կապիտալի հավելաճի հարկի ներդրման շարժառիթը եղել ոչ միայն ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգի արդյունավետության բարձրացումը, այլև եկամուտների հավաքագրման մակարդակի աճը:

Մյուս կողմից, կիրառման և հավաքագրման տեսանկյունից բավականին ծախսատար հարկատեսակ լինելու հանգամանքով պայմանավորված՝ մի շարք երկրներ կապիտալի հավելաճը հարկում

[154] Taxation of Capital Gains of Individuals, Policy considerations and approaches, OECD Tax Policy Studies, No 14, 2006, p. 16

են ոչ թե առանձին հարկի, այլ եկամտահարկի մասին օրենքի շրջանակներում[155]:

Օրինակ՝ Իռլանդիայում, Լյուքսեմբուրգում, Սլովակիայում և Մեծ Բրիտանիայում կապիտալի հավելաճը հարկվում է որոշակի շեմը գերազանցելուց հետո, քանի որ եկամտի ցածր մակարդակի դեպքում դրանց հավաքագրման ծախսերը գերազանցում են հավաքագրվող եկամուտների մակարդակը[156]:

Զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներում, այդ թվում նաև ՀՀ-ում, որպես կանոն, կապիտալի հավելաճը չի հարկվում, իհարկե ըստ երկրների կարող են լինել որոշ բացառություններ:

Ֆիզիկական անձանց կապիտալի հավելաճի տեսքով ստացված եկամուտների մասին իրական պատկեր կազմելը գրեթե անհնար է, քանի որ ֆիզիկական անձինք օրենքով պարտավոր չեն տեղեկություններ տրամադրել հարկային մարմիններին իրենց կողմից ձեռք բերված կամ օտարված գույքի կամ կապիտալի համար: Ավելին, «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն, սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի վաճառքից հարկային գործակալ չհանդիսացողներից ֆիզիկական անձանց ստացվող գումարները, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության հետևանքով գույքի վաճառքից ստացվող գումարների, համարվում են նվազեցվող եկամուտներ: Այսինքն, ՀՀ-ում կապիտալի հավելաճը հարկվում է միայն ձեռնարկատիրական գործունեության արդյունք համարվելու դեպքում[157]: Նշված դրույթի առկայությունը մեկ անգամ ևս փաստում է, որ եկամտային հարկի համակարգում բացակայում են արդյունավետ հարկման մեխանիզմները, և հարկային վարչարարությունը գործում է միայն հարկային գործակալի ինստիտուտի միջոցով:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ կարծում ենք, որ եկամտային հարկի գծով լրացուցիչ եկամուտների ավելացման, ինչպես նաև եկամտային հարկով հարկման ենթակա հարկվող բազայի ընդլայնմանն ուղղված միջոցառումների շրջանակներում,

---

[155] King J. R., “Taxation of Capital Gains”, Tax Policy Handbook edited by Parthasarathi Shome, IMF, 1995, p.158

[156] Harding M., “Taxation of Dividends, Interest, and Capital Gain Income”, OECD Taxation Working Paper, No 19, p. 36

[157] «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք, ընդունված 22.12.2010, ՀՕ-246-Ն, հոդված 6-ի 17-րդ ենթակետ

կապիտալի հավելաճի հարկումը կարող է պետական բյուջե հավաքագրվող եկամտային հարկի գումարների աճի հնարավորություններ ստեղծել, ինչպես նաև բացահայտել ֆիզիկական անձանց իրական եկամուտները:

ժառանգություն և նվիրատվություն

Ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգում առանձնահատուկ տեղ ունեն նաև ժառանգության և նվիրատվության տեսքով ստացված եկամուտների հարկման հիմնահարցերը: Զարգացած երկրներում այս եկամուտների հարկումն ունի տարբեր անվանումներ, օրինակ՝ մահվան հարկ, ժառանգության հարկ, նվիրատվության հարկ:

Նվիրատվության և ժառանգության գումարները, որպես կանոն, հարկվում են պրոգրեսիվ դրույքաչափերով, ինչպես նաև օրենքով նախատեսվում է նաև չհարկվող շեմի առկայություն: Չհարկվող շեմի կիրառումն անմիջականորեն կապված է իրավահաջորդության գաղափարի հետ, մասնավորապես՝ անմիջական ժառանգների, ընտանիքի անդամներին տրված նվիրատվության կամ ժառանգության գումարների նկատմամբ հարկեր չեն կիրառվում[158]: Օրինակ, Ֆինլանդիայում ժառանգության գումարները չեն հարկվում, եթե ժառանգությունը տրվում է ազգականներին, իսկ մնացած բոլոր դեպքերում հարկվում են մինչև 35% պրոգրեսիվ դրույքաչափով[159]:

Օրինակ, Մեծ Բրիտանիայում նվիրատվության հարկի դրույքաչափերը վերանայվում են յուրաքանչյուր տարի, որը կախված է անշարժ գույքի գների աճից, արժույթի արժեզրկման կամ այլ ցուցանիշների փոփոխություններից: Մեծ Բրիտանիայում 2014 թ.-ին ժառանգությունից և նվիրատվությունից հավաքագրված եկամտահարկի գումարները կազմել են ՀՆԱ-ի 0.2%, իսկ ամենաշատը հավաքագրվել են Բելգիայում՝ կազմելով ՀՆԱ-ի շուրջ 0.7 %[160]:

[158] Yucelik M. Zuntu, “Taxation of Bequests, Inheritances and Gifts”, Tax Policy Handbook edited by Parthasarathi Shome, IMF, 1995, p.189

[159] Finland, Highlights 2014, Deloitte, International Tax, p. 3

[160] http://stats.oecd.org/viewhtml.aspx?datasetcode=REV&lang=en, Estate, Inheritance and gift taxes as a persentage of GDP

ՀՀ-ում ժառանգության և նվիրատվության տեսքով ստացված եկամուտները եկամտային հարկով հարկման նպատակով համարվում են նվազեցվող եկամուտներ[161]:

Ուսումնասիրելով և ամփոփելով այլ երկրների և ՀՀ փորձը պասիվ եկամուտների հարկման դաշտում կարող ենք եզրահանգել, որ եթե առկա սոցիալ-տնտեսական պայմաններում շահաբաժինների, պետական պարտատոմսերից ստացվող տոկոսների, կապիտալի հավելաճի, ժառանգության և նվիրատվության տեսքով ստացված եկամուտների հարկումը կարող է հանգեցնել որոշ հարկատուների հարկային բեռի, ինչպես նաև եկամուտների թերհայտարարագրման դեպքերի ավելացման, այնուամենայնիվ կարծում ենք, որ անհրաժեշտ է ֆիզիկական անձանց հարկման դաշտից չբացառել նշված եկամուտները:

Միաժամանակ գտնում ենք, որ պասիվ եկամուտների հարկումը հնարավոր կլինի միայն ֆիզիկական անձանց եկամուտների և գույքի ինքնահայտարարագրման համակարգի ներդրման դեպքում:

Տվյալ դեպքում ինքնահայտարարագրման համակարգի ներդրումը հարկային մարմին-հարկատու փոխհարաբերություններում կարող է հանդես գալ որպես փոխշահավետ գործիք: Մասնավորապես սկզբնական փուլում ինքնահայտարարագրումը կարող է ֆիսկալ արդյունք չհետապնդել, այլ ունենալ բացառապես տեղեկատվական բնույթ, ինչը թույլ կտա իրական պատկերացում կազմել հանրապետությունում բաշխվող եկամուտների վերաբերյալ:

<u>Գյուղատնտեսական արտադրանքից ստացված եկամուտներ</u>

Ընդհանրապես, գյուղատնտեսական ոլորտը համարվում է ամենադժվար հարկվող ոլորտներից մեկը[162]:

Սա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ զարգացող երկրներում բացակայում են եկամուտների և ծախսերի հաշվառման մեխանիզմները, վճարումները, որպես կանոն, կատարվում են կանխիկի տեսքով. զարգացած չէ եկամուտների ինքնահայտարարագրման մեխանիզմը: Գյուղատնտեսական ոլորտն

[161] «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք, ընդունված 22.12.2010, հոդված 6-ի 13-րդ ենթակետ

[162] Bird R. M., 1983 “Income Tax Reform in Developing Countries: The Administrative Dimension”, Bulletin for International Fiscal Documentation 37, p. 3-4,

ամբողջությամբ հարկվում է զարգացած երկրներում, սակայն այս երկրներում ևս գործում են որոշակի արտոնություններ[163]:

ՀՀ-ում ևս առկա են նշված խնդիրները: «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հարկվող օբյեկտի որոշման ժամանակ գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող հարկ վճարողի համախառն եկամուտը նվազեցվում է գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի չափով[164]:

Չնայած այն հանգամանքին, որ թե՛ հարկման արդարության, թե՛ եկամտային հարկի գծով եկամուտների հավաքագրման մակարդակի աճի տեսանկյունից գյուղատնտեսական արտադրանքի հարկումը առավել նպատակահարմար է, սակայն կարծում ենք, որ գործող օրենքի և վարչարարական կարողությունների մակարդակի պայմաններում գյուղատնտեսական արտադրանքի հարկումը դրական արդյունք չի ունենա, այդ թվում՝ նաև բնակչության կենսամակարդակի, աղքատության վրա ունեցած բացասական ազդեցության տեսանկյունից:

Գյուղատնտեսական արտադրանքի՝ եկամտահարկով հարկման ապագա մոդելի մշակման համար որպես նախնական քայլ կարծում ենք՝ նպատակահարմար կլինի ներդնել գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող ֆիզիկական անձանց հաշվառման համակարգ: Նշված համակարգի ներդրումը թույլ կտա որոշակիորեն պատկերացում կազմել գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող ֆիզիկական անձանց, ինչպես նաև նրանց կողմից վճարվելիք հարկի պոտենցիալ գումարների վերաբերյալ: Կարծում ենք նաև, որ գյուղատնտեսական արտադրանքից ստացված եկամուտները նախնական շրջանում առավել նպատակահարմար կլինի հարկել արտոնագրային վճարների համակարգի կիրառման միջոցով՝ իհարկե որոշակի չհարկվող շեմի առկայությամբ (մասնավորապես տնամերձերում աճեցվող գյուղատնտեսական արտադրանքը չհարկել):

Այդուհանդերձ, գտնում ենք, որ գյուղատնտեսական արտադրանքի համատարած հարկումը հնարավոր կլինի միայն ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման գործուն մեխանիզմների ներդրման դեպքում:

---

[163] Rajaraman I., “Taxing Agricultural in Developing country”, A possible approach, 2004, p. 22

[164] «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք, ընդունված 22.12.2010, հոդված 8

Այլ եկամուտներ

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված են մի շարք նվազեցվող եկամուտներ, որոնք կարծում ենք բավարար հիմնավորված չեն:

Մասնավորապես, եկամտային հարկով հարկման ենթակա համախառն եկամտի նվազեցվում են օրինակ՝ ՀՀ ազգային հավաքականի կազմում միջազգային մրցույթներում և մրցություններում հաղթած մարզիկների և մարզիչների մրցանակները, ՀՀ կառավարության կողմից բարձրագույն ուսումնական հաստատությանը հատկացված վճարովի չափաքանակի շրջանակում սովորող ուսանողական համակազմի 10 տոկոսի ուսման տարեկան վարձի փոխհատուցման գումարները[165]:

Կարծում ենք՝ խիստ հասցեական արտոնությունները, որոնցից օգտվող ֆիզիկական անձինք սահմանափակ թիվ են կազմում, հարկման արդարության տեսանկյունից ելնելով՝ առավել նպատակահարմար է փոխարինել ուղղակի աջակցության տրամադրման մեխանիզմներով:

Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներ

Գրեթե բոլոր երկրներում ֆիզիկական անձանց ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտների հարկման ընթացակարգերը համահունչ են կազմակերպությունների հարկումը սահմանող ընթացակարգերին: Ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտների առանձնահատկություններից է վերջիններիս հավաքագրման մեխանիզմը, քանի որ դրանք հաշվարկվում են տարեկան հայտարարագրերի հիման վրա[166]:

Բացառություն չէ նաև ՀՀ-ն, մասնավորապես ձեռնարկատիրական գործունեությունից ստացված համախառն եկամտի որոշման ժամանակ կիրառվում է հաշվառման հաշվեգրման եղանակը՝ իրավաբանական անձանց համար «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև թույլատրելի ծախսերը[167]:

---

[165] «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք, ընդունված 22.12.2010, հոդված 6-ի 22-25 ենթակետեր,

[166] Burns L. and Krever R., “Taxation of Income from Business and Investment”, Tax Law Design and Drafting, edited by Victor Thuronyi, IMF, 1998, p. 666

[167] «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք, ընդունված 22.12.2010, հոդվածներ 16,17

ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտների հարկման համակարգի ուսումնասիրությունը կարծում ենք՝ կլինի ոչ լիարժեք, եթե անդրադարձ չկատարվի ֆիզիկական անձանց եկամուտների հարկման այլընտրանքային ռեժիմներին և հարկման մեխանիզմներին: Մասնավորապես, հարկային համակարգի տարրեր են հանդիսանում ոչ միայն հարկերի տեսակները, դրույքաչափերը, հարկվող օբյեկտները, այլև այն եղանակները, որոնց միջոցով հավաքագրվում են այս կամ այն հարկերը[168]:

Պատմականորեն հարկման հիմնական սկզբունքներից է հանդիսացել հարկերի հավաքագրման քիչ ծախսատարությունը, ինչը մեծապես կախված է հարկերի հավաքագրման եղանակների ընտրությունից: Դեռևս Ադամ Սմիթը նշում էր, որ բնակչությունից գանձված հարկի գումարը հնարավորինս չպետք է գերազանցի այն գումարը, որը իրականում վճարվում է պետական գանձարան[169]:

Ընդհանուր առմամբ, տեսության մեջ հայտնի են հարկերի հավաքագրման հետևյալ եղանակները՝

1. կադաստրային եղանակ, այս եղանակի էությունը կայանում է նրանում, որ կադաստրի կողմից ստեղծվում է համապատասխան ռեեստր, որտեղ գնահատվում է նմանատիպ հատկանիշեր ունեցող օբյեկտների եկամտաբերությունը, ինչի հիման վրա էլ հաշվարկվում է գանձվող հարկի գումարը[170]:

2. հարկային գործակալի միջոցով, երբ հարկի պահումն իրականացվում է եկամտի վճարման աղբյուրի մոտ հարկային գործակալի կողմից և հանդիսանում է ֆիզիկական անձանց եկամուտների հարկման ամենատարածված եղանակներից[171]:

Այս եղանակը կոչվում է նաև հարկերի գանձման անկանխիկ եղանակ, որը ՀՀ-ում ամենատարածվածն է:

3. հայտարարագրման եղանակ, այս եղանակի կիրառությունը ենթադրում է ֆիզիկական անձանց եկամուտների

---

[168] Абрамов А.П., Земцов А.А., Макаров А.И., “Совершенствование методов исчисления и взимания налогов с физических лиц”, вестник Томского государственного университета, № 320, 2009, стр.-146

[169] Смит А. “Исследование о природе и причинах богатство народов”, Т.2, Кн.5, Об источниках общего или государственного дохода общества, М.Л.: Государственное социально-экономическое исдательство, 1962, ст. 69

[170] Khalilzadeh-Shirazi J., Shah A., “Tax Policy in Developing Countries”, WB, 1991, p. 89

[171] Heeden K., “The Pay-as-You-Earn Tax on Wages”, edited by Victor Thuronyi, IMF, 1998, p.566

ինքնահայտարարագրման համակարգի առկայություն, այսինքն՝ ֆիզիկական անձինք պարտավոր են տարին մեկ ինքնուրույն հաշվարկել և հարկային մարմին ներկայացնել իրենց տարեկան եկամուտների հաշվարկը (հայտարարագիրը), որի հիման վրա էլ հաշվարկվում է հարկի վերջնական գումարը[172]:

4. վարչարարական եղանակ, այս եղանակի էությունը կայանում է նրանում, որ վճարվելիք հարկի գումարները հաշվարկվում են հարկային մարմինների կողմից, և հարկ վճարողները սահմանված ժամկետներում ստանում են հարկի վճարման ծանուցումներ[173]: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ֆիզիկական անձանց եկամուտների հարկումը հիմնականում իրականացվում է հարկային գործակալի կողմից կամ հայտարարագրման համակարգի միջոցով. միաժամանակ գոյություն չունեն այնպիսի երկրներ, որտեղ կիրառվում է այս եղանակներից միայն մեկը (տես՝ Աղյուսակ 2.2.4.):

Աղյուսակ 2.2.4

Ֆիզիկական անձանց եկամուտների հարկման մեխանիզմները՝ ըստ եկամտի տեսակների[174]

Երկիրը	**Աշխատանքի վարձատրությունև դրան ուղղված միջոցներ**	**Շահաբաժին**	**Տոկոս**	**Վարձակալական վճարներ**
Ավստրիա	գործակալ, հայտարարագրում	գործակալ	գործակալ	տեղեկատվությունը բացակայում է

[172] Baer K., Silvani C., “Designing a Tax Administration Reform Strategy: Experiences and Guidelines”, IMF, Working Paper 97/30, p.12
[173] Alink M. and V. van Kommer, “Handbook on Tax Administration”, IBFD, Netherlands, 2011, p. 305
[174] https://www.oecd.org/ctp/administration/CIS-2010.pdf, Tax Administration in OECD and Selected Non-OECD Countries: Comparative Information Series (2010), p. 200

Աղյուսակ 2.2.4-ի շարունակություն

1	2	3	4	5
Բելգիա	գործակալ, հայտարարագրում	գործակալ	գործակալ	գործակալ, հայտարարագրում
Գերմանիա	գործակալ	գործակալ	գործակալ	տեղեկատվությունը բացակայում է
Ֆրանսիա	հայտարարագրում	հայտարարագրում	հայտարարագրում	հայտարարագրում
Չեխիա	գործակալ, հայտարարագրում	գործակալ	գործակալ	տեղեկատվությունը բացակայում է
Դանիա	գործակալ, հայտարարագրում	գործակալ, հայտարարագրում	հայտարարագրում	տեղեկատվությունը բացակայում է
Ճապոնիա	գործակալ, հայտարարագրում	գործակալ, հայտարարագրում	գործակալ, հայտարարագրում	հայտարարագրում
Շվեյցարիա	հայտարարագրում	գործակալ	գործակալ	տեղեկատվությունը բացակայում է
ԱՄՆ	գործակալ, հայտարարագրում	հայտարարագրում	հայտարարագրում	տեղեկատվությունը բացակայում է
Լատվիա	գործակալ, հայտարարագրում	գործակալ, հայտարարագրում	գործակալ, հայտարարագրում	գործակալ, հայտարարագրում
Լիտվա	գործակալ	գործակալ	գործակալ	գործակալ, հայտարարագրում
Ռումինիա	գործակալ, հայտարարագրում	գործակալ, հայտարարագրում	գործակալ, հայտարարագրում	գործակալ, հայտարարագրում
Չինաստան	գործակալ, հայտարարագրում	գործակալ, հայտարարագրում	գործակալ, հայտարարագրում	հայտարարագրում
Սինգապուր	հայտարարագր	հայտարարագրո	հայտարարագր	հայտարարագրո

[175]	ում	ում	ում	ում
Ռուսաստան	գործակալ	գործակալ	գործակալ	գործակալ
Ուկրաինա	գործակալ	գործակալ	գործակալ	գործակալ
Ղազախստան	գործակալ	գործակալ	գործակալ	գործակալ
Հայաստան	գործակալ	գործակալ	գործակալ	գործակալ

Աղյուսակ 2.2.4-ից ակնհայտ է, որ չնայած հարկային գործակալի միջոցով հարկի պահում իրականացվում է եկամտի մի շարք տեսակների պարագայում, սակայն հարկային գործակալի միջոցով հարկվող ամենատարածված եկամտի տեսակը աշխատավարձի և դրան հավասարեցված միջոցների հարկումն է, այս առումով բացառություն են միայն Ֆրանսիան, Շվեյցարիան և Սինգապուրը (եկամտի այլ տեսակների հարկման մեխանիզմները կներկայացվեն Հավելված 7-ում):

Ռուսաստանում ֆիզիկական անձանց կողմից տարեկան եկամուտների հաշվարկի ներկայացումը պարտադիր է, եթե եկամուտները ստացվել են այլ ֆիզիկական անձանցից, աղբյուրի մոտ չեն հարկվել, ստացվել են ոչ ռուսաստանյան աղբյուրներից, վիճակախաղերից և որոշ բացառություններով գույքի օտարումից[176]:

Ղազախստանում ֆիզիկական անձինք տարեկան եկամուտների հաշվարկ ներկայացնում են այն դեպքում, երբ աղբյուրի մոտ հարկի գանձում (պահում) չի իրականացվել [177]:

Ուկրաինայում որոշ չափով կիրառվում է ծախսերի հայտարարագրման համակարգը, մասնավորապես Ուկրաինայում ֆիզիկական անձինք որոշակի հարկային արտոնություններից օգտվելու նպատակով կարող են կամավորության սկզբունքով ներկայացնել տարեկան եկամուտների հաշվարկներ (տարեկան եկամուտների հաշվարկ ներկայացվում են նաև աղբյուրի մոտ հարկի գանձում (պահում) չիրականացվելու դեպքում)[178]:

Հարկային գործակալի միջոցով հարկերի գանձման եղանակները, գործնականում կիրառման մոտեցումները, ինչպես նաև հարկատու,

[175] Taxation and Investment in Singapore, 2012, Deloitte Highlights, p.19
[176] Doing Business in Russia, 2012, Deloitte Highlights, p.48
[177] Kazakhstan, Deloitte Highlights, 2014, p. 2
[178] Ukraine, Deloitte Highlights, 2014, p.4

հարկային գործակալ և հարկային մարմինների փոխհարաբերությունները կարող են հսկայական տարբերություններ ունենալ ըստ երկրների իրավական համակարգերի, սակայն աղյուսակ 2.2.4-ից կարող ենք կատարել մեկ ընդհանուր եզրահանգում. զարգացող (անցումային տնտեսությամբ) երկրներում, իհարկե որոշակի բացառություններով, ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման համակարգն ունի խիստ սահմանափակ կիրառություն:

Հարկային գործակալի միջոցով աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումներից հարկերի գանձումն իրականացվում է երկու եղանակով՝ կումուլյատիվ և ոչ կումուլյատիվ կամ ճշգրտվող (տարվա վերջում): Կումուլյատիվ եղանակով հարկային գործակալի կողմից պահված հարկի գումարը տվյալ ֆիզիկական անձի համար համարվում է վերջնական հարկային պարտավորություն: Հարկային գործակալի կողմից աշխատավարձի և դրանց հավասարեցված վճարումների հարկման ոչ կումուլյատիվ եղանակի դեպքում հարկային գործակալները հարկի հաշվարկումն (գանձումն) իրականացնում են յուրաքանչյուր ամսվա կտրվածքով, իսկ վերջնական հարկային պարտավորությունը որոշվում է տարեկան եկամուտների հաշվարկի ներկայացման արդյունքում[179]:

Ստորև ներկայացնում ենք մի շարք երկրներում հարկային գործակալի կողմից աշխատավարձից և դրան հավասարեցված վճարումներից հարկի հաշվարկման եղանակների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն (Տես՝ աղյուսակ 2.2.5.):

Աղյուսակ 2.2.5.

Աշխատավարձից և դրան հավասարեցված վճարումներից հարկային գործակալի կողմից հարկի հաշվարկման (գանձման) եղանակները[180]

Կումուլյատիվ եղանակ	Ոչ կումուլյատիվ եղանակ

[179] Mirrlees J., “Tax By Design: The Mirrlees Review”, Institute for Fiscal Studies, 2011, p.124

[180] Tax Administration 2013 Comparative Information on OECD and Other Advanced and Emerging Economies, OECD publishing, 2013, p.291

Ավստրիա, Չիլի, Չեխիա, Դանիա, Էստոնիա, Գերմանիա, Իռլանդիա, Իսրայել, Իտալիա, Ճապոնիա, Կորեա, Նիդերլանդներ, Մեծ Բրիտանիա, Բուլղարիա, Չինաստան, Լատվիա, Ռումինիա, Ռուսաստան, Ուկրաինա, Ղազախստան, Հայաստան	Ավստրալիա, Բելգիա, Կանադա, Ֆինլանդիա, Հունաստան, Հունգարիա, Իսլանդիա, Նորվեգիա, Լեհաստան, Սլովենիա, Շվեդիա, ԱՄՆ

Ոչ կումուլյատիվ եղանակի կողմնակիցները գտնում են, որ տարեկան եկամուտների հաշվարկի (հայտարարագրի) ներկայացման արդյունքում եկամտահարկի գծով նվազեցումների ստացումը փոխհատուցում է հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու հետ կապված անհարմարությունները: Հաջորդ փաստարկը՝ հարկ վճարելու գաղափարի գիտակցումն է, քանի որ յուրաքանչյուր հարկատու այդ հասարակության անդամն է, ուստի տարեկան եկամուտների հաշվարկի (հայտարարագրի) ներկայացումը թույլ է տալիս յուրաքանչյուրին գիտակցել իր հարկային բեռը և հետևաբար իրացնել Սահմանադրությամբ իրեն վերապահված իրավունքները: Մյուս կողմից, մատնանշվում է, որ հաշվարկի ներկայացման արդյունքում հետ վերադարձված գումարները, որոնք, այսպես կոչված, պարտադիր խնայողություններ են և ֆիզիկական անձանց համար խթանիչ դեր ունեն[181]:

Ֆիզիկական անձանց եկամուտները տարեկան եկամուտների հաշվարկի (հայտարարագրի միջոցով հարկման մոտեցման թերություններից նշվում է նաև տարվա կտրվածքով պետական բյուջեի եկամուտների խիստ անհավասար բաշխվածությունը, որին լուծում տալու նպատակով մի շարք երկրներում կիրառվում են կանխավճարային համակարգեր (Տես՝ Աղյուսակ 2.2.6):

Աղյուսակ 2.2.6

[181] Heeden K., “Tax Law Design and Drafting”, International Monetary Fund, 1998, vol. 2, p. 569

Եկամտահարկի գծով կանխավճարների գանձման սկզբունքները մի շարք երկրների օրինակով[182]

Երկիրը	Վճարողները	Հաշվարկման բազան
Ավստրիա	ինքնուրույն իրենց աշխատանքով ապահովված անձինք	նախորդ ժամանակաշրջանի հարկի գումարի 25 %-ի չափով
Ավստրալիա	անձինք, ովքեր ստացել են եկամուտները, սակայն աղբյուրի մոտ չեն հարկվել (որոշակի շեմը գերազանցելու դեպքում)	նախորդ ժամանակաշրջանի հարկի գումարի 25 %-ի չափով
Բելգիա	ինքնուրույն իրենց աշխատանքով ապահովված անձինք կամ այլ անձինք	գումարի չափը որոշում է հարկ վճարողը
Դանիա	անձինք, ովքեր ստացել են եկամուտները, սակայն աղբյուրի մոտ չեն հարկվել	գնահատված հարկի գումարի 10%-ի չափով

[182] https://www.oecd.org/ctp/administration/CIS-2010.pdf, Tax Administration in OECD and Selected Non-OECD Countries: Comparative Information Series (2010), p. 229

Աղյուսակ 2.2.6-ի շարունակություն

1	2	3
Ֆինլանդիա	անձինք, ովքեր ստացել են եկամուտները, սակայն աղբյուրի մոտ չեն հարկվել	նախորդ ժամանակաշրջանի հարկի գումարի 1/12-ի չափով
Ֆրանսիա	բոլոր հարկատու ֆիզիկական անձինք	նախորդ ժամանակաշրջանի հարկի գումարի 33.3%-ի չափով
Էստոնիա	ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձինք	նախորդ ժամանակաշրջանի հարկի գումարի 25%-ի չափով
Իտալիա	ֆիզիկական անձինք, ովքեր ստացել են եկամուտները, սակայն աղբյուրի մոտ չեն հարկվել (որոշակի շեմը գերազանցելու դեպքում)	նախորդ տարվա հարկի գումարի 39.6% և 59.4%-ի չափով
Ճապոնիա	որոշակի շեմը գերազանցելու դեպքում բոլոր հարկատու ֆիզիկական անձինք	նախորդ ժամանակաշրջանի հարկի գումարի 1/3-ի չափով
Թուրքիա	ձեռնարկատիրական կամ մասնագիտական գործունեություն իրականացնող անձինք	նշված ժամանակահատվածում ստացված եկամտի 15 %-ի չափով
Ռուսաստան	ձեռնարկատիրական կամ մասնագիտական գործունեություն իրականացնող անձինք	տարեկան երեք անգամ՝ համապատասխանաբար մինչև հուլիսի, հոկտեմբերի և հունվարի 15-ը
Վրաստան	ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձինք	եռամսյակային՝ համապատասխանաբար մինչև մայիսի, հուլիսի, սեպտեմբերի և դեկտեմբերի 15-ը
Հայաստան	ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձինք	եռամսյակային՝մինչև յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 15-ը

Ընդհանրապես, ֆիզիկական անձանց եկամուտներից գանձվող եկամտահարկի գծով վերջնական հարկային պարտավորությունը տարեկան եկամուտների հաշվարկի (հայտարարագրերի) միջոցով որոշելու մոտեցումը ենթադրում է, որ հարկային վարչարարության համակարգի համակարգչայնացվածության մակարդակը գտնվում է բարձր մակարդակի վրա, իսկ տեղեկատվության փոխանակման մեխանիզմները սերտորեն և արդյունավետ կապված են միմյանց հետ՝ գործատուները, կազմակերպությունները, ֆինանսական համակարգը, նոտարական համակարգը, կադաստրը և այլն: Այսինքն՝ այս համակարգի կիրառումը մեծապես կախված է հարկային վարչարարության

կարողությունների զարգացման մակարդակից, քանի որ հաշվարկների ներկայացման արդյունքում առաջացող հարկի վերջնական գումարների հաշվարկումը հարկային մարմինների ուղղակի գործառույթն է: Թերևս, վերը նշված վարչարարական կարողությունների պակասով է պայմանավորված այն միտումը, որ եկամտից գանձվող հարկերը հարաբերականորեն քիչ դերակատարություն ունեն զարգացող երկրների հարկային համակարգերում, ինչը ճիշտ հակառակն է զարգացած երկրներում[183]: Մասնավորապես, 1980-ական թթ.-ից ի վեր զարգացող երկրներում եկամտահարկ ՀՆԱ հարաբերակցությունը աճել է 1-3%, իսկ զարգացած երկրներում՝ 9-11%-ով: Զարգացած երկրներում աշխատավարձից և դրան հավասարեցված վճարումներից հավաքագրված եկամտահարկի գումարները կազմում են եկամտահարկի ընդհանուր հավաքագրումների 80%-ը, իսկ զարգացող երկրներում՝ շուրջ 95%-ը: Զարգացած երկրներում եկամտահարկ վճարող են համարվում բնակչության 5%-ը, և հայտարարագրվում է եկամտի 15%-ը, մինչդեռ զարգացած երկրներում տվյալ ցուցանիշները կազմում են համապատասխանաբար 50% և 57%[184]:

Ստացվում է, որ արդյունավետ հարկային վարչարարության իրականացումը բավականին լուրջ մարտահրավեր է բոլոր երկրների համար, սակայն այն առավել ընդգծված նշանակություն ունի զարգացող երկրներում: Թերևս, այս հանգամանքով է պայմանավորված, որ զարգացող երկրներում գործունեության որոշ տեսակների հարկման ժամանակ բավականին ինտենսիվորեն օգտագործվում են հարկման այլընտրանքային ռեժիմներ: Չնայած հարկման այլընտրանքային ռեժիմները շատ երկրներում հարկային եկամուտների ավելացման արդյունավետ միջոց են հանդիսանում, այնուամենայնիվ նշյալ ռեժիմների տնտեսական արդյունավետության վերաբերյալ համապարփակ վերլուծությունը բավականին սահմանափակ է[185]:

[183] Bird R. M. and Zolt E. M., “Introduction to Tax Policy Design and Development”,World Bank, 2003, p. 21
[184] Sabirianova K., Buttrick Steve, and Duncan Denvil, “Global Reform of Personal Income Taxation 1981-2005: Evidence from 189 Countries”, National Tax Journal, September 2010, p.469
[185] Bird R. M. and Oldman O., “Income Taxation of the Hard-to-Tax Groups,” in Taxation in Developing Countries, (Baltimore, Johns Hopkins University Press, 4th ed., 1990), p. 299

Թեև հարկման այլընտրանքային ռեժիմների կիրառումը ենթադրում է ժամանակավոր բնույթ և կիրառման պարզ ընթացակարգեր, սակայն մի շարք երկրներում հաստատագրված վճարներով հարկման համակարգերի կիրառումը բավականին բարդ է և,որպես կանոն, հարկման շեմն ու դրույքաչափերը ճիշտ հաշվարկված չեն[186]: Հարկման այլընտրանքային ռեժիմների տեսակների վերաբերյալ աղյուսակը ներկայացվում է ստորև:

Աղյուսակ 2.2.7

Հարկման այլընտրանքային ռեժիմների տեսակները[187]

Մեկ հարկատեսակի կիրառմամբ ռեժիմներ	1. Շրջանառության հարկ-դրույքաչափը կիրառվում է շրջանառության նկատմամբ: Նշված ռեժիմը կիրառվում է Հունգարիայում, Լեհաստանում:
	2. Արտոնագիր-իրենից ներկայացնում է ֆիքսված գումարներ,որոնք հաշվարկվում են ըստշրջանառության,գործունեության տեսակների,որոշ դեպքերում էլ ըստ գործունեության իրականացման վայրի (օրինակ՝ Բուլղարիայում):
	3. Խառը ռեժիմ- ներառում է երկու բաղադրիչ՝ արտոնագրային վճարների համակարգ միկրոձեռնարկությունների հարկման համար և շրջանառության հարկ՝այլ փոքր ձեռնարկությունների համար: Նշված ռեժիմը կիրառում են մի շարք աֆրիկյան երկրներ, օրինակ՝Եթովպիայում,Ուգանդայում և Լիբիայում:
Պարզեցված եկամտահարկի ռեժիմներ	1. Միկրոձեռնարկության ռեժիմ- շրջանառության նկատմամբ որոշակի դրույքաչափի կիրառության ճանապարհով որոշվում է եկամտահարկի բազան, ապա

[186] Bird R.M., Zolt E.M., “Redistribution via Taxation: The Limited Role of the personal Income Tax in Developing Countries, Andrew Young School of Policy Studies, Georgia State University, Working Paper 05-07, p. 48

[187] Bird R.M., Zolt E.M., “Introduction to Tax Policy Design and Development”,World Bank, 2003, p. 26-33

	եկամտահարկի ստանդարտդրույքաչափերի կիրառությամբ հաշվարկվում է վճարման ենթակա հարկը (օրինակ՝ Ֆրանսիայում և Պորտուգալիայում):
	2. Կանխիկի հոսքերի եկամտահարկ-այս ռեժիմը հիմնված է մեկ հաշվում մուտքերի կատարմամբ հաշվապահական հաշվառման վրա, ընդ որում՝ հաշվարկը կատարվում է ոչ թե հաշվեգրման, այլ դրամարկղային մնացորդի սկզբունքով:

Աղյուսակ 2.2.7-ի շարունակություն

1	2
Փոխարինող հարկատեսակներով ռեժիմներ	1. Ավանդական փոխարինում (forfait)-հարկի հաշվարկը հիմնված է պարզեցված հաշվետվությունների վրա, որոնցում տրամադրվում են տեղեկություններ գնումների և վաճառքի, նյութական պաշարների, ներդրումների և կադրային ծախսերի վերաբերյալ:
	2. Հաստատագրված վճար-հիմնված ֆիզիկական ցուցանիշների վրա,որպես կանոն, ներառում են աշխատողների թիվը, գործարար գործունեության իրականացման տարածքի մակերեսը, էլեկտրաէներգիայի հաշիվները, տրանսպորտային միջոցների թիվը և ռեստորանում դրված սեղանների թիվը:
	3. Խառը ռեժիմ-հարկային պարտավորության հաշվարկման համար օգտագործվում են՝ ֆիզիկական ցուցանիշներ, և՝ շրջանառություն:

Ընդհանուր առմամբ, կարող ենք ասել, որ այլընտրանքային հարկման ռեժիմների կիրառությունը թույլ է տալիս ավելացնել հարկատուների և հարկային վճարումների քանակը՝ նվազեցնելով հարկումից խուսափելու դեպքերը, ընդ որում՝ բավականին փոքր վարչարարական ծախսերով[188]:

Զարգացող երկրներում այլընտրանքային հարկման ռեժիմների կիրառությունը համարվում է փոքր և միջին ձեռնարկատիրության հարկման միակ արդյունավետ միջոցը: Ըստ Արժույթի միջազգային կազմակերպության փորձագետների կատարած ուսումնասիրությունների արդյունքների՝ ՓՄՁ սուբյեկտների նկատմամբ հարկման այլընտրանքային ռեժիմներ կիրառող

[188] Terkper Seth, “Managing Small and Medium Taxpayers (SMTs): Tax Administration View Point, Tax Notes International”, 2003, p. 1

երկրներում հարկման ընդհանուր դաշտում գործող հարկատուները ավելի քիչ են, քան հարկման այլընտրանքային դաշտում գործող հարկատուները: Իհարկե, այս օրինաչափությունը տվյալ երկրի զարգացմանը զուգահեռ նվազման միտում ունի: Միաժամանակ, մի շարք երկրների փորձը ցույց է տալիս, որ հարկման այլընտրանքային ռեժիմներից հարկման ընդհանուր դաշտ անցում կատարելու գործընթացն անհրաժեշտ է կազմակերպել ծրագրավորված և աստիճանաբար, քանի որ միանգամից անցում կատարելու դեպքում երկրների մեծամասնությունում այն ուղղակիորեն հանգեցրել է ստվերի ավելացման: Սա նշանակում է, որ հարկային քաղաքականության մշակման պատասխանատուները պետք է լրջորեն գնահատեն հարկման այլընտրանքային համակարգերում գործող հարկատուների՝ հարկման ընդհանուր դաշտում գործելու հնարավորությունները և այդ փոփոխության հնարավոր հետևանքները[189]:

Այս առումով քաղաքականության տեսանկյունից խիստ կարևոր է զգուշությամբ մոտենալ նշված շեմերի սահմանմանը, քանի որ շատ բարձր շեմի սահմանումը հանգեցնում է հարկման ընդհանուր դաշտում գործող հարկատուների թվաքանակի նվազման, իսկ հակառակ դեպքում մեծանում է ստվերում աշխատող հարկատուների թվաքանակը[190]:

Այդուհանդերձ, հարկման այլընտրանքային ռեժիմների կիրառման վերջնական նպատակը պետք է հանդիսանա հարկման ընդհանուր դաշտ բերել այն հարկատուներին, որոնց գործունեության ոլորտի հարկումը որոշակի դժվարություններ է ստեղծում հարկային մարմինների համար: Հիմնականում այն կատարվում է երկու փուլով, մասնավորապես, առաջին փուլում հարկման այլընտրանքային ռեժիմների կիրառությամբ փորձ է արվում ստվերային հատվածում գործունեություն ծավալող

[189] International Monetary Fund, “Taxation of Small and Medium Enterprises,” Background Paper for the International Tax Dialogue Conference, Buenos Aires, 2007, p. 14

[190] Mansfield Ch. Y., “Tax Administration in Developing Countries: An Economic Perspective,” Staff Papers, Internation Monetary Fund, 1990, Vol. 44., pp. 181

հարկատուներին բերել հարկման այլընտրանքային դաշտ, այնուհետև՝ հարկման ընդհանուր դաշտ[191]:

Ինչ վերաբերում է ՀՀ հարկային համակարգին, ապա ՀՀ–ում տարբեր ժամանակներում գործել են հարկման այլընտրանքային վերը նշված գրեթե բոլոր ռեժիմները՝ պարզեցված հարկ, արտոնագրային վճարներ, հաստատագրված վճարներ, շրջանառության հարկ:

ՀՀ-ում գործող հարկման այլընտրանքային ռեժիմների՝ եկամտահարկի (եկամտային հարկի) հավաքագրումների գծով ազդեցությունն ակնհայտ է ստորև ներկայացված աղյուսակ 2.2.8-ից:

Աղյուսակ 2.2.8

Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց եկամուտներից հավաքագրված հարկերը, 2005-2015թթ. (մլն դրամ)[192]

	Եկամտային հարկ/եկամտահարկ ձեռնարկատիրական գործունեությունից	**Պարզեցված հարկ ֆիզիկական անձանցից**	**Հաստատագրված վճարներ ֆիզիկական անձանցից**	**Արտոնագրային վճարներ**	**Շրջանառության հարկ**
2005	624.8	2.654.9	1.419.8		
2006	516.6	3.004.9	1.635.8		
2007	806.08	3.962.1	1.892.2		
2008	1.005.8	3.851.1	2.325.5		
2009	2.789.9	187.5	2.540.0	9.5	
2010	4.062.7	-33.6	2.139.1	15.9	
2011	4.663.0	-34.7	2.222.6	44.0	
2012	5.176.5	-43.3	874.1	5.697.2[193]	
2013	3.404.2.[194]	-74.7	149.0	6.833.7	13.397.3[195]

[191] Burns L., “Taxation of the Small Business Sector,” paper presented at the Third Annual Meeting of the Pacific Islands Tax Administrators’ Association, Raratonga, Cook Island; 2006, p. 43

[192] Աղյուսակը մշակվել է հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի կողմից տրամադրված՝ 2005-2015թթ. ՀՀ պետական բյուջե մուտքագրված եկամուտների վերաբերյալ տարեկան տեղեկանքները

[193] 2012-2013թթ. արտոնագրային վճարների գումարի մեջ ներառված են նաև իրավաբանական անձանց կողմից վճարված արտոնագրային վճարների գումարները,

[194] 2013թ.-ից հետո նշված գումարն արտացոլում է միայն եկամտային հարկի գումարները,

[195] Նշված գումարի մեջ ներառված են անհատ ձեռնարկատերերի, նոտարների և իրավաբանական անձանց կողմից վճարված շրջանառության հարկի գումարները:

2014	3.677.5	-13.8	-104.4	6.690.0	15.638.6
2015	3.449.6	-4.5	145.9	6.570.7	11.859.4

Աղյուսակ 2.2.8-ից ակնհայտ է, որ 2005-2015թթ. կտրվածքով հարկման այլընտրանքային դաշտում գործող ֆիզիկական անձանց կողմից վճարվող հարկերն ավելի շատեն, քան հարկման ընդհանուր դաշտում գործող ֆիզիկական անձանց կողմից վճարվող եկամտահարկի (եկամտային հարկի) գումարները: Մյուս կողմից, կարող ենք փաստել, որ պարզեցված հարկի գործողության դադարեցմամբ, այլ հավասար պայմաններում, պարզեցված հարկ վճարող ֆիզիկական անձինք ընդգրկվել են հարկման ընդհանուր դաշտ, քանի որ 2009թ. կտրվածքով հավաքագրված եկամտահարկի գումարն աճել է շուրջ 1.7 մլրդ դրամով, իսկ հաստատագրված վճարները՝ ընդամենը 215 մլն դրամով: Ի դեպ, նույն միտումը չի գործում հաստատագրված վճարներով հարկման ենթակա գործունեության տեսակների կրճատման դեպքում, քանի որ նշված գործունեության տեսակներն ամբողջությամբ տեղափոխվել են արտոնագրային վճարներով հարկման համակարգ: Եկամտահարկի կայուն աճի միտումն առկա է մինչև 2013թ., այսինքն՝ մինչև եկամտային հարկի մասին օրենքի ուժի մեջ մտնելը: Մասնավորապես, 2013թ. եկամտային հարկի գումարները 2012թ. համեմատնվազել են շուրջ 1.4 մլրդ դրամով:

Կարծում ենք՝ վերը նշվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ արտոնագրային և հաստատագրված վճար, ինչպես նաև շրջանառության հարկ վճարողները և նոտարները «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն եկամտային հարկ վճարում են ամսական 5 հազար դրամի չափով՝ յուրաքանչյուր ամսվա համար մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ)[196], ընդ որում՝ նշված գումարները համարվում են եկամտային հարկի գծով վերջնական հարկային պարտավորություններ: Նշված դրույթը խեղաթյուրում է եկամտային հարկի հաշվարկման ողջ տրամաբանությունը, քանի որ եկամտային հարկը հաշվարկվում է եկամտի նկատմամբ (կախված եկամտի տեսակից հարկվող կամ համախառն եկամտի նկատմամբ), իսկ այս դեպքում վճարվում է որոշակի գումար, որի վճարումը ապահովում է հետագայում նշված

[196] Տես՝ հոդված 10-ի 8-րդ ենթակետ,

ֆիզիկական անձանց կենսաթոշակ ստանալու իրավունքը: Այսինքն, ստացվում է, որ 5 հազար դրամները, ըստ էության, կուտակային վճարներ են: Այս առումով կարծում ենք՝ նպատակահարմար չէ կենսաթոշակի իրավունք ստանալու հանգամանքը կապել եկամտային հարկ վճարելու հանգամանքի հետ: Ի դեպ, ոչ անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձանց դեպքում կուտակային վճարն ուղղակի կապ ունի տվյալ ֆիզիկական անձի ստացվելիք աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ:

Աղյուսակ 2.2.8-ի տվյալները և գործող հարկման այլընտրանքային ռեժիմները թույլ են տալիս ենթադրելու, որ նշված պայմանների անփոփոխության դեպքում, համենայն դեպս, ֆիզիկական անձանց կողմից ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից եկամտային հարկի հավաքագրումների կտրուկ աճ չի արձանագրվի:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք կատարել որոշակի եզրահանգումներ, մասնավորապես՝

- ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համար ինքնահայտարարագրման համակարգի ներդրումը կարող է լուրջ խթան հանդիսանալ հավաքագրվող եկամտային հարկի գումարների, ինչպես նաև հարկային կարգապահության աճի առումով,
- որոշ դեպքում հարկման այլընտրանքային ռեժիմները կարող են լինել արդյունավետ, սակայն վերջիններս պետք է լինեն հնարավորինս պարզ և հասկանալի հարկ վճարողների համար, հաշվարկվեն շրջանառության նկատմամբ, հաշվարկման և վճարման ընթացակարգերը լինեն հնարավորինս պարզ և քիչ ծախսատար, կիրառվեն միայն ֆիզիկական անձանց նկատմամբ:

Եվ ամենակարևորը կարծում ենք, որ հարկման այլընտրանքային ռեժիմները պետք է կրեն ժամանակավոր բնույթ, և հարկային քաղաքականության մշակողները պետք է պարբերաբար ուսումնասիրեն վերջիններիս ազդեցությունը հարկ վճարողների, ընդհանուր հարկային համակարգի, ինչպես նաև հարկերի հավաքագրելիության մակարդակի վրա:

ԳԼՈՒԽ 3. ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

3.1 Եկամտային հարկի օրենսդրության կատարելագործման ուղիները

Պետության տնտեսական քաղաքականության իրականացման գործընթացում կարևորագույն լծակ են հանդիսացել և հանդիսանում հարկերը: Ինտեգրացիոն գործընթացների այսօրինակ զարգացումը, ինչը հանգեցրել է աշխատանքային ռեսուրսների և կապիտալի տեղաբաշխման մեծ հնարավորությունների, ազդակ է պետությունների համար մշակել այնպիսի մրցունակ հարկային քաղաքականություն, որն էլ ավելի կբարձրացնի պետության մրցունակությունը[197]:

Պատմականորեն հարկային համակարգերի առաջնային նպատակն է հանդիսացել պետական ծախսերի ֆինանսավորման համար անհրաժեշտ միջոցների հավաքագրումը: Սակայն ներկայումս հարկային համակարգի միջոցով պետությունը կարողանում է իրականացնել նաև այլ գործառույթներ: Մասնավորապես, հարկերը ազդում են խնայողություններ կատարելու, աշխատանքի առաջարկի, մարդկային կապիտալում ներդրումներ կատարելու, նոր արտադրություններ ձեռնարկելու, նորարարություններ կատարելու ուղղությունների վրա[198]:

[197] Нурумов А.А, “Итоги реформирования налоговой системы Республики Казахстана и задачи по ее дальнейшему совершенствованию”, ВЕСТНИК ОГУ №12 (161)/декабрь`2013, с. 113, 7

[198] Johansson **A.**, Heady Ch., Arnold J., Brys B. and Vartia L., “Tax and Economic Growth”, OECD, 2008, p. 5, 85

Նշված նպատակների իրականացման համար պետություններն ընտրում են հարկային համակարգի որոշակի տարրեր կամ դրանց համակցություններ: Օրինակ՝ տրամադրում են հարկային արտոնություններ, նվազեցնում են հարկման դրույքաչափերը:

Այս համատեքստում տարբեր երկրների ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգի միջազգային փորձի ուսումնասիրությունները թույլ են տալիս կատարել մի շատ կարևոր եզրահանգում. զարգացած երկրներում, բացի այն, որ եկամտահարկը կազմում է հարկային եկամուտների շոշափելի մասը, միաժամանակ առաջնային դերակատարություն ունի պետության՝ եկամուտների և հարստության վերաբաշխման հարցում: Զարգացող երկրներում ճիշտ հակառակ պատկերն է, որը պայմանավորված է մի շարք գործոններով, մասնավորապես՝

1. զարգացող երկրներում գործում է եկամտահարկի կառուցվածքային մոդելը, և դրույքաչափերի սանդղակը գրեթե պրոգրեսիվություն չունի: Հավաքագրված եկամտահարկի գումարների գերակշիռ մասը գանձվում է տնտեսության ոչ ստվերային ոլորտում ներգրավված աշխատողների աշխատավարձից և դրան հավասարեցված միջոցներից:

Սա թույլ է տալիս կատարել ևս մեկ կարևոր եզրահանգում. եկամտահարկի նման ծավալները հարկային եկամուտների և ՀՆԱ-ի կազմում չի կարող զարգացող երկրների պետությունների կողմից օգտագործվել եկամուտների կամ հարստության վերաբաշխման հարցում (Տես՝ Աղյուսակ 3.1.1):

2. եկամտահարկի պրոգրեսիվ համակարգի առկայությունը բավականին ծախսատար է և պահանջում է որոշակի վարչարարական, տնտեսական, քաղաքական ծախսեր: Միաժամանակ, զարգացող երկրները, որպես կանոն, փորձում են իրենց հարկային համակարգերը կառուցել զարգացած երկրների հարկային համակարգերում գործող սկզբունքների հիման վրա՝ անտեսելով այն փաստը, որ նշված համակարգերի արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ վարչարարական կարողություններ զարգացող երկրներում առկա չեն:

3. զարգացող երկրներում աղքատության հաղթահարմանն ուղղված միջոցառումներն իրականացվում են պետության ծախսային քաղաքականության միջոցով, օրինակ՝ բնակչության որոշակի խավի որոշակի սոցիալական օգնության գումարներ տրամադրելու, սոցիալական աջակցության ծրագրեր իրականացնելու միջոցով[199]:

Սակայն պետության կողմից իրականացվող ծախսային քաղաքականության միջոցով եկամուտների վերաբաշխումը ևս ունի իր խնդիրները: Շատ հաճախ այդ միջոցառումները ճիշտ թիրախավորված չեն լինում և դրանցից կարողանում են օգտվել նաև միջին ու բարձր եկամուտ ստացող ֆիզիկական անձինք:

Ընդհանրապես, եկամուտների և հարստության վերաբաշխման չափման միավոր է հանդիսանում Ջինիի գործակիցը, որը ցույց է տալիս տվյալ երկրներում բնակչության բոլոր անդամների և տնային տնտեսությունների եկամուտների կամ սպառման բաշխումը ինչ չափով է տատանվում բացարձակ հավասար բաշխումից: Ջինի գործակցի 0 տոկոս արժեքը մատնանշում է բաշխման բացարձակ հավասարություն, իսկ 100 տոկոս արժեքը՝ բացարձակ անհավասարություն[200]:

Աղյուսակ 3.1.1

Եկամուտների և հարստության վերաբաշխման պատկերը մի շարք երկրներում(2013)[201]

	Մեկ շնչին ընկնող ՀՆԱ (ԱՄՆ դոլար)	**Ջինիի ինդեքս**
Հայաստան	7.527	30.3
Վրաստան	6.976	41.4
Ադրբեջան	16.594	33.0
Ղազախստան	22.467	28.6
Ղրղզստան	3.110	33.4
Բելառուս	17.055	26.5
Ռուսաստան	23.654	39.7
Ուկրաինա	8.508	24.8
Էստոնիա	25.132	32.7
Լիտվա	24.483	32.6
Բելգիա	40.607	33.1

[199] Bird R. M., Zolt E. M., “Redistribution via Taxation: The Limited Role of Income Taxes in Developing Countries”, Georgie State University, International Studies Program, Working Paper No 0507, March 2005, p. 3

[200] Lenger A. , Schumacher F., “Understanding the Dynamics of Global Inequality”,Springer, Ebook, p. 30,

[201] http://hdr.undp.org/sites/default/files/2015_human_development_report.pdf, United Nations development program, Human Development Report 2015,Table 3 (p. 232), Table 11(p. 260),

Գերմանիա	43.207	30.6
Նորվեգիա	62.448	26.8
Շվեդիա	43.741	26.1
Ֆինլանդիա	38.846	27.8
Մեծ Բրիտանիա	37.017	38.0
ԱՄՆ	51.340	41.1

Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 3.1.1-ից, եկամուտների վերաբաշխումն ամենաարդյունավետ կերպով իրականացվում է սկանդինավյան երկրներում: Ուշադրության է արժանի նաև փաստը, որ չնայած ներկայացված երկրների շարքում Հայաստանում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշով ամենացածրերից է, սակայն Ջինիի գործակիցը շատ բարձր չէ: Միևնույն ժամանակ, հետաքրքիր է նաև այն, որ ԱՄՆ-ում Ջինիի գործակիցը բավականին բարձր է, չնայած ԱՄՆ-ում եկամուտների վերաբաշխման անհավասարությունը հիմնականում պայմանավորված է միջին և բարձր եկամուտներ ստացող անձանց եկամուտների վերաբաշխման անհամաչափությամբ[202]:

Զարգացող երկրներում եկամտահարկի սահմանափակ դերը ակնհայտ է վերջինիս՝ հարկային եկամուտների, ՀՆԱ-ի մեջ իր ունեցած փոքր տեսակարար կշռով, այն դեպքում, երբ զարգացած երկրներում այն կազմում է հարկային եկամուտների գերակշիռ մասը:

Աղյուսակ 3.1.2-ից ակնհայտ է, որ զարգացած երկրներում հարկեր/ՀՆԱ ցուցանիշը բավականին բարձր է, ի տարբերություն զարգացող երկրների, ինչպես նաև շոշափելի է եկամտահարկի դերը թե ՀՆԱ-ի, թե հարկային եկամուտների տեսակարար կշռում:

Աղյուսակ 3.1.2

Հարկային եկամուտները և եկամտային հարկը ՀՆԱ-ի կազմում (2014թթ.)[203]

	Հարկային եկամուտներ/ՀՆԱ	**Եկամտահարկ/ՀՆԱ**	**Եկամտահարկ/հարկային եկամուտներ**
Ավստրիա	42.9	10.14	23.5
Բելգիա	44.6	12.8	28.7
Գերմանիա	36.1	9.5	26.3
Իտալիա	43.6	11.6	26.6
Էստոնիա	32.9	5.8	17.8
Մեծ	32.6	8.9	27.5

[202] Gornick J. and Milanovic B., “Income Inequality in the United States in Cross-National Perspective: Redistribution Revisited”, Luxembourg Income Study Center, New York, 2015, 2-3pp.,
[203] http://www.oecd-ilibrary.org/taxation/taxes-on-personal-income_20758510-table4

Բրիտանիա			
Շվեդիա	42.7	12.2	28.6
Դանիա	50.9	27.7	54.4
Ֆինլանդիա	43.9	13.4	30.6
Նորվեգիա	39.1	9.8	25.1
ԱՄՆ	26.0	9.9	38.2
Ուկրաինա[204]	23.5	4.8	20.1
Հայաստան[205]	21.4	6.0	28
Ռուսաստան[206]	28.7	3.6	14
Վրաստան[207]	24.7	6.7	26.8

Աղյուսակ 3.1.2-ում ներկայացված երկրների շարքում դիտարկված ցուցանիշների մասով համեմատաբար ոչ բարենպաստ դիրքում է գտնվում ՀՀ-ն, ինչը վկայում է ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգում առկա խնդիրների և բարեփոխումների անհրաժեշտության մասին:

Ճիշտ է սոցիալական խնդիրների լուծման ժամանակ եկամտահարկին խիստ մեծ նշանակություն տալը, մասնավորապես՝ եկամուտների բաշխման միակ և ամենաարդյունավետ միջոց համարելը, կարծում ենք՝ բավականին չափազանցված մոտեցում է, այնուամենայնիվ, վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զարգացած գրեթե բոլոր երկրներում կան օրինաչափություններ՝

- եկամտահարկը բավականին մեծ տեսակարար կշիռ է կազմում հարկային եկամուտների կազմում,
- չնայած որոշ երկրներում եկամտահարկի դրույքաչափերը բավականին բարձր են, աղքատության ցուցանիշը բավականին ցածր է,
- աշխատավարձը և դրան հավասարեցված միջոցները հարկվում են ավելի բարձր դրույքաչափերով, իսկ կապիտալի գործառնություններից ստացված եկամուտները՝ ցածր դրույքաչափերով,
- եկամտահարկին զուգահեռ աշխատավարձի և դրանց հավասարեցված միջոցների նկատմամբ կիրառվում են սոցիալական

[204] http://cost.ua/en/budget/revenue/#1
[205] http://armstat.am/file/article/finansner_2015_1.pdf
[206] http://www.roskazna.ru/ispolnenie-byudzhetov/statistika-gosudarstvennykh-finansov-rf/
[207] www.geostat.ge, Main Statistics, GDP and other Indicators of National accounts, Government Finance Statistics, 2014

հարկեր, որոնք ձևավորվում են գործատուների և վարձու աշխատողների կողմից:

- սոցիալական հարկերը, որպես կանոն, ունեն նպատակային նշանակություն,որոնք հիմնականում ուղղվում են առողջապահության,նպաստների,կենսաթոշակների վճարմանը,
- գործում են եկամուտների և գույքի հայտարարագրման մեխանիզմներ, որոնց արդյունքում սահմանվում է վերջնական հարկային պարտավորության չափը,ընդ որում,կախված ընտանեկան, սոցիալական վիճակից՝ հայտարարագիր տրամադրելու դեպքում տրամադրվում են հարկային արտոնություններ,
- հարկային բարձր կարգապահություն:

Չնայած այն հանգամանքին, որ զարգացած երկրներում գործող ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգ ունենալու համար համընդհանուր սկզբունքներ գոյություն չունեն,քանի որ զարգացած երկրներում ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգերը ևս կարող են սկզբունքորեն տարբեր լինել, այնուամենայնիվ վերջիններիս բարեփոխումների դինամիկայի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ամեն դեպքում գոյություն ունեն որոշակի ընդհանուր մոտեցումներ, որոնց տեղայնացումը զարգացող երկրների ազգային օրենսդրություններում հնարավորություն կտա բարձրացնել եկամտահարկի դերը հարկային համակարգում թե՛ ֆիսկալ, թե՛ սոցիալական քաղաքականության ազդեցության տեսանկյունից:

Ընդհանուր առմամբ,օրենսդրական կարգավորման տեսանկյունից անհրաժեշտ լուծումների տարբերակներ են.

✓ հարկման բազայի ընդլայնում,

Հարկման բազայի ընդլայնման միջոցառումներում կարևորվում են ոչ միայն գործող արտոնությունների կրճատումը և նոր հարկային արտոնությունների չտրամադրումը, այլև չհարկվող եկամուտների, մասնավորապես՝ կապիտալի հետ գործառնություններից ստացվող եկամուտները հարկման դաշտ բերելը:

✓ պրոգրեսիվ դրույքաչափերի առկայություն,

Եկամտահարկի պրոգրեսիվ դրույքաչափերը, որպես կանոն, զարգացող երկրներում ոչ միշտ են հանգեցնում ակնկալվող արդյունքների:Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ զարգացող երկրներում եկամտահարկով հարկման բազան, որպես կանոն, իրենից ներկայացնում է աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ, այսինքն՝ ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգի պրոգրեսիվության մասին խոսք անգամ լինել չի կարող: Միաժամանակ, ի տարբերություն զարգացած երկրների, զարգացող երկրներում պրոգրեսիվ դրույքաչափերը կարող են հանգեցնել որոշակի խնդիրների: Սխալված չենք լինի, եթե նշենք, որ պրոգրեսիվ եկամտահարկի դրույքաչափերը կարող են ազդել ֆիզիկական անձանց վարքագծի վրա: Օրինակ՝ բարձր դրույքաչափերը կարող են ազդել ֆիզիկական անձանց հարկման դաշտից ստվեր անցնելու վրա[208]: Նույն սկզբունքը գործում է նաև անհատ ձեռնարկատերերի պարագայում: Մասնավորապես, հարկման բարձր դրույքաչափերը կարող են ստիպել գործունեություն ծավալել տնտեսության ստվերային հատվածում: ՀՀ-ում ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակը 2013 թ.-ի դրությամբ, ըստ պաշտոնական տվյալների, կազմում է 49.9%[209]:

Եկամտահարկի բարձր դրույքաչափերը կարող են ազդել նաև ֆիզիկական անձանց խնայողություններ կատարելու որոշումների վրա: Գլոբալիզացիոն գործընթացներն այստեղ ևս ունեն իրենց դերակատարությունը. ֆիզիկական անձինք կարող են կատարել ներդրումներ երկրի սահմաններից դուրս, այնտեղ որտեղ առկա են հարկման ավելի լավ պայմաններ: Եվ վերջապես հարկերի հավաքագրման ընթացակարգերի արդյունավետ կիրառումը շատ մեծ նշանակություն ունի հարկերի հավաքագրման հարցում:

Այստեղ հարկ ենք համարում անդրադառնալ և ընդգծել նաև հարկերի վճարման բարոյահոգեբանական ասպեկտների նշանակությունը: Հարկային կարգապահություն ասելով հասկանում ենք հարկ վճարողների՝ հարկեր վճարելու ներքին

[208] Sokoloff K., Zolt E., “Inequality and Taxation: Evidence from the Americas on how Inequality may Influence Tax Institutions”, Tax Law Review, Vol 59, No 2, 2006, p.266,

[209] http://www.armstat.am/file/article/trud_2015_6.pdf, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2015, հատված՝ Զբաղվածություն, էջ-51

շարժառիթները, որոնք պայմանավորված են պետության նկատմամբ ունեցած վստահությամբ: Այսինքն, եթե հարկ վճարողը բավարարված է պետության կողմից մատուցված ծառայությունների որակից կամ տեսանելի է իր կողմից վճարված հարկերի ծախսման ուղղությունները, ապա հարկ վճարելու գիտակցությունն ինքնաբերաբար բարձրանում է: Եվ հակառակը, եթե երկրում ստվերի մակարդակը բարձր է, ապա հարկ վճարողների հարկային կարգապահությունը գտնվում է բավականին ցածր մակարդակի վրա[210]:

Ինչպես արդեն նշել ենք, հարկերի հավաքագրումը բավականին ծախսատար գործընթաց է: Որոշ գնահատականների համաձայն՝ զարգացած երկրներում հարկերի հավաքագրման վրա կատարված ծախսերը կազմում են հավաքագրված հարկերի շուրջ 1 տոկոսը[211]: Զարգացող երկրներում այս ցուցանիշն ավելի բարձր է: Թերևս, այս հանգամանքով է պայմանավորված այն միտումը, որ զարգացող երկրների հարկային եկամուտների կազմում գերակշռում են անուղղակի հարկերից հավաքագրված եկամուտները, քանի որ վերջիններիս հավաքագրման ծախսերը մեծ չեն[212]:

Մյուս կողմից անհրաժեշտ է անդրադառնալ նաև հարկ վճարողների կողմից հարկ վճարելու վրա կատարված ծախսերին: Նույնպես որոշ գնահատականների համաձայն՝ զարգացած երկրներում հարկեր վճարելու վրա կատարված ծախսերը մի քանի անգամ գերազանցում են զարգացած երկրների համապատասխան ցուցանիշի մակարդակը: Օրինակ՝ հարկային գործակալի միջոցով հարկեր չվճարելու դեպքում հարկ վճարողը պարտավոր է որոշակիորեն տիրապետել հարկային օրենսդրությանը, ինքնուրույն լրացնել և հարկային մարմնին ներկայացնել համապատասխան հաշվարկներ, տեղեկություններ: Այս ամենն իրենից ներկայացնում է բավականին ծախսատար գործընթաց, և այդ պատճառով էլ զարգացող երկրներում եկամտահարկով հարկման ենթակա են համարվում այն եկամուտները, որոնցից հարկերի

[210] Bird R., Martinez-Vazkuez J., “Societal Institutions and Tax Effort in Developing Countries”, Working Paper 2004-21, CREMA, 2004, p. 4,
[211] Tax Administration 2013 Comparative Information on OECD and Other Advanced Economies, 2013, p. 180,
[212] Ghata S., “Introduction to Development Economics”, Routledge; 4 edition, 2003, p.133

գանձման պարտավորությունը պատկանում է հարկային գործակալներին: Սույն ենթագլխում մեր կողմից վերլուծվել են, թե նշված խնդիրներին որքանով է առնչվում ՀՀ-ում գործող ֆիզիկական անձանց հարկման համակարգը և ինչ միջոցառումներ կարելի է ձեռնարկել վերջինիս բարելավման ուղղությամբ:

Աղյուսակ 3.1.3

Ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգի խնդիրները

Օրենսդրություն	Վարչարարություն
1. արտոնությունների լայն շրջանակ, մասնավորապես, չեն հարկվում շահաբաժինները, պետական պարտատոմսերից ստացվող տոկոսները, կապիտալի հավելաճը, գյուղատնտեսությունից ստացված եկամուտները	1. հարկերի հավաքագրման մեխանիզմները կատարելագործման կարիք ունեն,

Աղյուսակ 3.1.3-ի շարունակություն

1	2
2. դրույքաչափերի սանդղակի պրոգրեսիվության անարդյունավետություն, մասնավորապես՝ եկամտային հարկի չհարկվող շեմի բացակայություն, իսկ 24.4%, 26% և 35% դրույքաչափերը բավարար պրոգրեսիվություն չեն հաղորդում ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգին	2. բացակայում են ինքնահայտարարագրման մեխանիզմները, ինչն էլ իր հերթին նվազեցնում է հարկային մարմնի կարողությունները՝ ֆիզիկական անձանց իրական եկամուտների մասին լիարժեք պատկերացում կազմելու համար:
3. եկամտահարկի և պարտադիր սոցիալական վճարների նմանօրինակ միավորումը աննախադեպփորձ էր, որը սոցիալական քաղաքականության տեսանկյունից այնքան էլ արդյունավետչէր, մասնավորապես սոցիալական վճարներ կատարելու բեռը տեղափոխվեց բացառապես վարձու աշխատողների վրա, մյուս կողմից խաթարվեց վճարված հարկ-ստացվելիք օգուտտեսանելի կապը:	

Նշված խնդիրները դիտարկել ենք առանձին եկամտի տեսակների նկատմամբ, որն ամփոփներկայացված է Գծապատկեր 3.1.4-ում:

Գծապատկեր 3.1.4

Ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգի օրենսդրության և վարչարարական մեխանիզմների համեմատական սխեմա



Միաժամանակ, ըստ եկամտի տեսակների՝ եկամտային հարկի հավաքագրման դինամիկան հասկանալու նպատակով Գծապատկեր 3.1.5-ում ներկայացվել են 2004-2015 թթ. կտրվածքով հավաքագրված եկամտային հարկի գումարները՝ ըստ եկամտի տեսակների:

Գծապատկեր 3.1.5[213]

Հավաքագրված եկամտային հարկն ըստ եկամուտների կազմի 2004-2015թթ. (տոկոսային հարաբերությամբ)



Գծապատկեր 3.1.4-ը և 3.1.5-ը թույլ են տալիս կատարել որոշակի եզրահանգումներ, մասնավորապես եկամտային հարկ գանձվում է, կարելի է ասել, միայն հարկային գործակալի ինստիտուտի միջոցով, իսկ օրենսդրության՝ միջազգային փորձին համահունչ կարգավորումներ առկա չեն՝ հիմնականում պայմանավորված դրանց կիրառման համար համապատասխան վարչարարական կարողությունների բացակայությամբ:

Այսինքն, ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգի հետագա զարգացումները և բարեփոխումներն առավել նպատակահարմար կլինի դիտարկել հարկման մեխանիզմների

[213] Տվյալները վերցված են Աղյուսակ 2.1.5-ից:

կատարելագործման և նոր, արդյունավետ մեխանիզմների համադրման համատեքստում:

ՀՀ-ում ներկայումս եկամտային հարկի հավաքագրումների առյուծի բաժինը կազմում են եկամտի այս տեսակից հավաքագրված գումարները: Ստացվում է, որ եկամտային հարկի հավաքագրման հիմնական բեռն ընկնում է վարձու աշխատողների վրա, և նշված դինամիկան առկա է նաև «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո: Կարծում ենք՝ այս դինամիկան խոսում է այն հանգամանքի մասին, որ ֆիզիկական անձանց եկամուտների հարկման դաշտում խնդիրները հիմնականում պայմանավորված են ոչ թե օրենսդրական կարգավորումների բացթողումներով, այլ հավաքագրման մեխանիզմների խնդիրներով:

ՀՀ-ում առկա եկամտահարկի հավաքագրելիության խնդիրների մասին վկայում է նաև եկամտահարկի եկամտային արդյունավետության ցուցանիշը (Տես՝ Աղյուսակ 3.1.5): Եկամտահարկի եկամտային արդյունավետությունը ցույց է տալիս եկամտահարկի հավաքագրման արդյունավետությունը: Այն հաշվարկվում է որպես եկամտահարկ/ՀՆԱ և եկամտահարկի կշռված դրույքաչափի հարաբերակցություն: Եկամտահարկի կշռված դրույքաչափը որոշվում է որպես եկամտահարկի սահմանային ցածր և սահմանային բարձր դրույքաչափերի կշռված միջին[214]:

Աղյուսակ 3.1.5[215]

Եկամտահարկի եկամտային արդյունավետությունը մի շարք երկրներում[216]

	Եկամտահարկի նվազագույն դրույքաչափը	Եկամտահարկի առավելագույն դրույքաչափը	Եկամտահարկ/ՀՆԱ հարաբերակցությունը	Եկամտահարկի եկամտային արդյունավետությունը

[214] Grote M., Caner Selcuk, and Hutton Eric,"Continuing Tax Policy Reforms in Armenia-Planning for a Simpler, Fairer and More Efficient Tax System", IMF, 2011, p. 23

[215] https://www.usaid.gov/data/dataset/cdeb8a1b-3440-4e88-b6cb-81b2428f8cea, Collecting Taxes Database-2012-2013,

[216] Աղյուսակում բերված որոշ ցուցանիշներ կարող են չհամապատասխանել այլ աղյուսակներում արտացոլված որոշ տվյալների հետ, քանի որ կարող են տարբերվել նշված ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանությունները:

Ավստրիա	20.4%	50%	12.20	0.27
Բելգիա	25%	50%	15.30	0.31
Գերմանիա	15%	45%	11.0	0.25

Աղյուսակ 3.1.5-ի շարունակություն

1	2	3	4	5
Իտալիա	23%	43%	13.80	0.32
Դանիա	3.7%	51.5%	25.8	0.55
Շվեդիա	31%	57.8%	15.30	0.26
Ֆինլանդիա	8.5%	30%	15.50	0.60
Մեծ Բրիտանիա	20%	50%	12.90	0.26
ԱՄՆ	10%	35%	11.80	0.34
Էստոնիա	21%	21%	5.40	0.26
Լատվիա	26%	26%	1.0	0.04
Լիտվա	15%	15%	3.50	0.23
Սլովակիա	19%	19%	2.50	0.13
Չեխիա	15%	15%	2.36	0.16
Ուկրաինա	15%	15%	0.47	0.03
Հայաստան	10%	20%	2.15	0.11
Վրաստան	20%	20%	5.91	0.30
Ղազախստան	10%	10%	10.50	1.05
Ռուսաստան	13%	13%	7.60	0.58

Այս ցուցանիշը ևս փաստում է, որ ՀՀ-ում առկա է եկամտահարկի հավաքագրելիության խնդիր:

Միաժամանակ, մեր կողմից իրականացվել է նաև եկամտային հարկի եկամտային արդյունավետության գնահատում, որի արդյունքներն ամփոփված են ստորև ներկայացված աղյուսակում:

Աղյուսակ 3.1.6.

Եկամտային հարկի եկամտային արդյունավետությունը (2013-2015թթ.)[217]

	Եկամտային հարկի նվազագույն դրույքաչափը	Եկամտային հարկի առավելագույն դրույքաչափը	Եկամտային հարկ/ՀՆԱ	Եկամտային հարկի եկամտային արդյունավետություն	Մեկ շնչին ընկնող ՀՆԱ (ԱՄՆ դոլար)	Փոխարժեք (ԿԲ միջին փոխարժեք
2013	24.4	35	5.6	0.16	7.734.8	408.11
2014	24.4	35	6	0.17	8.099.2	474.97
2015	24.4	35	6.2	0.18	8393.5	483.75

Աղյուսակ 3.1.6-ից ակնհայտ է, որ եկամտային հարկի ներդրումը ևս չի հանգեցրել ֆիզիկական անձանց եկամուտների հարկման եկամտային արդյունավետության մակարդակի բարձրացման:

Ֆիզիկական անձանց եկամուտների հարկման վերաբերյալ զարգացած երկրների փորձի, ինչպես նաև ՀՀ ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգում առկա օրենսդրական կարգավորումները և համապատասխան վարչարարական կարողությունների վերլուծությունից ելնելով կարծում ենք՝ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել հարկային վարչարարության բարելավման ուղղությամբ, ինչը ենթադրում է եկամուտների գանձման եղանակների կատարելագործում և հարկային կարգապահության մակարդակի բարձրացում:

Ամփոփելով սույն ենթագլխում կատարված վերլուծության արդյունքները՝ ներկայացնենք ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգի բարեփոխումների հիմնական մոտեցումները.

1. Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումները

Գտնում ենք, որ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հարկման բարեփոխումների հիմնական ուղղությունը պետք է զուգորդված լինի սոցիալական քաղաքականության որոշ տարրերի հետ: Մասնավորապես, հարկման բեռի նվազեցումը և սոցիալական հարկի (վճարների) նոր համակարգի ներդրումը պետք է հանդիսանան բարեփոխումների հիմնաքարը: Հարկման ցածր բեռը և ակնկալվող օգուտները կստիպեն մի կողմից վարձու աշխատողներին

[217] Աղյուսակը կազմվել է հիմք ընդունելով Համաշխարհային բանկի տեղեկատվական բազայի և ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական տվյալները՝ համապատասխանաբար մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի և փոխարժեքի համար:

դուրս գալ ստվերային հատվածից, մյուս կողմից էլ գործատուների կողմից կկրճատվեն վճարվող աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների իրական մակարդակի թաքցման դեպքերը: Այս առումով անհրաժեշտ՝

1) վերանայել «Եկամտային հարկի մասին» օրենքի համաձայն գործող դրույքաչափերի սանդղակը՝ համակարգին հաղորդելով իրական պրոգրեսիվություն՝ միաժամանակ նախատեսելով եկամտի չհարկվող շեմ,

2) պարբերաբար վերանայել և գնահատել «Եկամտային հարկի մասին» օրենքով նախատեսված նվազեցվող եկամուտների կազմը և ընդլայնել հարկման բազան, արտոնությունները տրամադրել որոշակի ժամանակահատվածի կտրվածքով,

3) ներդնել սոցիալական հարկի նոր համակարգ, որը կունենա նպատակային ուղղվածություն և ուղղված կլինի սոցիալական խնդիրների լուծմանը՝ առողջապահություն, նպաստներ, կենսաթոշակներ ուղղություններով, ընդ որում, սոցիալական հարկ վճարելու բեռը բաշխել վարձու աշխատողների և գործատուների միջև,

4) կատարելագործել հարկերի գանձման մեխանիզմները, սոցիալական խթանների զուգակցմամբ աստիճանաբար ներդնել գույքի և եկամուտների գլոբալ հայտարարագրման համակարգ:

Նշված միջոցառումների իրականացումը հնարավոր է կարճաժամկետ հատվածում հանգեցնի բյուջե հավաքագրվող եկամտային հարկի գումարների նվազման, սակայն երկարաժամկետ հատվածում այն կբերի եկամուտների թերհայտարարագրման նվազման, այսինքն՝ ստվերային տնտեսության կրճատմանը և պետական բյուջեի եկամուտների աճի:

2. Պասիվ և այլ եկամուտներ

Պասիվ և այլ եկամուտների հարկման բարեփոխումների հիմնական ուղղությունը կարծում ենք վերջիններիս հարկման մեխանիզմների կատարելագործումն է, որը հնարավոր կլինի միայն եկամուտների և գույքի հայտարարագրման մեխանիզմների ներդրման դեպքում, ընդ որում, հայտարարագրման համակարգի կայացման համար գտնում ենք, որ ներդրման սկզբնական շրջանում

անհրաժեշտ է, որ այն օգտագործվի ոչ որպես ֆիսկալ լծակ, այլ վերջինիս միջոցով հնարավոր լինի տեղեկատվություն հավաքագրել ֆիզիկական անձանց իրական եկամուտների վերաբերյալ: Կարծում ենք՝ այստեղ անհրաժեշտ է սահմանել որոշակի արտոնություններ, որոնք կշահագրգռեն հարկ վճարողների ներկայացնել հայտարարագրեր, մասնավորապես՝

1) պասիվ և այլ եկամուտների հարկման մոտեցումները համապատասխանեցնել միջազգային պրակտիկայում ընդունելի սկզբունքներին, որը կարծում ենք՝ հնարավոր կլինի միայն համապատասխան ինքնահայտարարագրման մեխանիզմի ներդրման դեպքում,

2) ներդնել ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգը, որը սկզբնական շրջանում կունենա զուտ տեղեկատվական բնույթ, մասնավորապես ֆիզիկական անձինք հարկային գործակալի միջոցով հարկման ենթակա եկամուտ ստանալուց բացի այլ եկամուտ ստանալու դեպքում պարտավոր կլինի ներկայացնել տարեկան եկամուտների հայտարարագիր,

3) նախատեսել խթաններ, մասնավորապես հարկի գումարի նվազեցում, սոցիալական բնույթի որևէ ծախսի նվազեցում, օրինակ՝ ամուսնական կարգավիճակից ելնելով որոշակի նվազեցումների տրամադրում, յուրաքանչյուր երեխայի հաշվով նվազեցման իրավունք հարկվող եկամտից, ուսման, առողջության վրա կատարված ծախսերի նվազեցման հնարավորություններ, որոնք ավելի տեսանելի և շոշափելի կլինեն հարկ վճարողների համար և կշահագրգռեն ֆիզիկական անձանց օգտվելու գույքի և եկամուտների հայտարարագիր ներկայացնելու դեպքում ստացվելիք օգուտներից:

Երկարաժամկետ հատվածում եկամուտների և գույքի ինքնահայտարարագրումը կհանգեցնի ընդհանուր հարկային կարգապահության աճի, եկամուտ ստացող-եկամուտ վճարող իրական կապերի բացահայտմանը և ի վերջո երկրում ստեղծվող եկամտի և վերաբաշխման իրական պատկերի արտացոլմանը:

3. Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներ

Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամտային հարկի փոքր ծավալների հիմնական պատճառը կարծում ենք գործող դրույքաչափերն են, ինչպես նաև այլընտրանքային հարկման ռեժիմների առկայությունը: Այս առումով անհրաժեշտ՝

1) նվազեցնել եկամտային հարկի դրույքաչափերը՝ դրանք հավասարեցնել ովշահութահարկի դրույքաչափերին,

2) հնարավորինս կրճատել հարկման այլընտրանքային ռեժիմների կիրառությունը,

3) հարկման այլընտրանքային ռեժիմ սահմանել միայն շատ փոքր շրջանառություն ունեցող անհատձեռնարկատերերի համար:

3.2 ՀՀ-ում եկամուտների գլոբալ հայտարարագրման համակարգի ներդրման և ստվերային տնտեսության դեմ պայքարի հնարավորությունները

Տարբեր երկրներում ֆիզիկական անձանց եկամուտների հարկման ինքնահայտարարագրման եղանակների ներդրման առանձնահատկությունների ուսումնասիրությունները վկայում են, որ դրանց ներդրման հիմնական նպատակներից է հանդիսանում հարկային հավաքագրումների համակարգի պարզեցումը և ինքնահայտարարագրման համակարգի ներդրումը[218]:

Ինքնահայտարարագրման համակարգի առանցքային առանձնահատկությունը կայանում է նրանում, որ հարկի հավաքագրման հետ կապված բեռը առնվազն կիսով չափ ընկնում է հարկ վճարողի վրա, ինչն էլ իր հերթին հարկ վճարողին թույլ է տալիս անմիջականորեն ընդգրկվելու հարկ վճարելու գործընթացում:

Մյուս կողմից, հարկ վճարողների կողմից չարաշահումներ թույլ չտալու նպատակով անհրաժեշտաբար ավելանում են հարկային մարմինների կողմից իրականացվող հարկային ստուգումների և ուսումնասիրությունների քանակները: Սակայն հարկային մարմնի կողմից հարկային ստուգումների և ուսումնասիրությունների էքստենսիվ կիրառման դեպքում, հարկի հավաքագրման հայտարարագրման եղանակի կիրառությունը կիմաստազրկվի[219]:

Այս առումով կարծում ենք՝ շատ կարևոր է օրենսդրությամբ հստակ սահմանել հայտարարագրման համակարգի միջոցով հարկեր վճարելու դեպքում հարկ վճարողների և հարկային մարմինների իրավունքներն ու պարտականությունները:

Իհարկե, ցանկացած նոր համակարգի ներդրում իր հետ առաջ է քաշում որակապես նոր խնդիրներ և հարկ վճարողների կողմից հնարավոր է միանշանակորեն չընդունվել համակարգի ներդրումից ակնկալվող արդյունքները: Ամեն դեպքում, հարկերի հավաքագրման

[218] Loo E.C., "The influence of the introduction on self assessment on compliance behaviour of individual taxpayers in Malaysia", PhD thesis, University of Sydney, 2006, p.46

[219] Hansford A. and Hasseldine J., "Tax auditing under the self assessment: survey evidence from the United Kingdom", New Zealand Journal of Taxation Law and Policy, N 9, 2003, p. 173

հայտարարագրման համակարգի ներդրման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք խնդիրներ, մասնավորապես՝

➢ հարկման և հարկերի վերաբերյալ գիտելիքների առկայություն,

Հարկային օրենսդրության վերաբերյալ հարկ վճարողների գիտելիքները հսկայական ներուժ են ներկայացնում: Մասնավորապես, Էրիկսենի և Ֆալանի կողմից կատարվել են մի շարք ուսումնասիրություններ, որոնց արդյունքում հեղինակները եկել են այն եզրահանգման, որ հարկային օրենսդրության վերաբերյալ ունեցած գիտելիքներն ուղղակիորեն կապված են հարկեր վճարելու վարքագծի հետ և վերջինիս կատարելագործման համար անհրաժեշտ են հարկային օրենսդրության վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքների համապատասխան մակարդակ[220]: Մի շարք երկրներում, օրինակ՝ ԱՄՆ-ում հայտարարագրման համակարգի ներդրմանը զուգընթաց ներդրվել են նաև առցանց ուսումնական դասընթացներ, որոնք թույլ են տալիս ֆիզիկական անձանց պատկերացում կազմել հարկային օրենսդրության մասին[221]: Նմանատիպ դասընթացներ կարող են կազմակերպվել թե՛ հարկային մարմինների, թե՛ հասարակական կազմակերպությունների կողմից:

ՏՀԶԿ անդամ երկրների 60%-ում գործում է եկամուտների պարտադիր հայտարարագրման համակարգը: Միևնույն ժամանակ, ՏՀԶԿ երկրները մշակել են ընթացակարգեր, որոնց համաձայն հարկային մարմիններն օժանդակում են հարկ վճարող ֆիզիկական անձանց իրենց հարկային պարտավորությունների ճիշտ գնահատմանը՝ թույլ տալով հարկային մարմին ներկայացնել հայտարարագրերի նախնական տարբերակներ: Նմանատիպ պրակտիկա կիրառվում է Դանիայում, Ֆինլանդիայում, Նորվեգիայում և Շվեդիայում[222]:

➢ համակարգի պարզությունը,

Հայտարարագրման համակարգի ներդրումն անհրաժեշտ է, որպեսզի լինի հնարավորինս պարզ, քանի որ շատ դեպքերում հայտարարագրերը հարկային մարմնի տեսանկյունից կարող են

[220] Eriksen, K., and Fallan, L, "Tax knowledge and attitudes towards taxation: A report on a quasi experiment. Journal of Economic Psychology", N 17, 1996, p. 387–402.
[221] www.irs.gov
[222] https://www.oecd.org/ctp/consumption/CIS-2006.pdf, Tax administration in OECD and selected non-OECD countries, Comparative information series (2006), 2007, p.61

լինել պարզ, իսկ հարկ վճարողների կողմից՝ ոչ: Այս դեպքերում, առավել նպատակահարմար է մինչև հայտարարագրման համակարգի գործարկումը հանրային քննարկման ներկայացնել հայտարարագրերի և հաշվարկների ձևերը, ինչպես նաև լրացման կարգերը[223]:

➢ հարկային ստուգումները,

Հայտարարագրման համակարգի ներդրումը ենթադրում է, որ հարկային մարմինները պետք է ունենան այնպիսի ստուգումների համակարգ, որը թույլ կտա բացահայտել ներկայացված հայտարարագրերով և հաշվարկներով ներկայացված տեղեկությունների ճշտությունը:

➢ տույժեր և տուգանքներ,

Տույժերի և տուգանքների համակարգի ճիշտկիրառումը բավականին լուրջ դերակատարություն ունի ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման համակարգի կայացման հարցում, մասնավորապես տույժերի և տուգանքների ճիշտ մշակված համակարգը մեծ ազդեցություն է ունենում հարկ վճարողների վարքագծի վրա, քանի որ շատ քիչ հարկ վճարողներ կցանկանան ներառվել հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգումներում: Մի շարք հետազոտություններ ցույց են տվել, որ տույժերի և տուգանքների ճիշտկիրառումը ավելի մեծ ազդեցություն կարող է ունենալ հարկ վճարողների վարքագծի վրա, քան հարկային ստուգումները[224]:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման համակարգի ներդրմանը, ապա այդ գործընթացը սկսվել է դեռևս 1990-ական թթ.-ից: Ինչպես արդեն նշել ենք, «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության առաջին օրենքն ընդունվել է 1995 թ.-ի ապրիլի 1-ին, որի դրույթները, չնայած որոշակի վերապահումների, նախատեսում էին ֆիզիկական անձանց տարեկան եկամուտների համատարած հայտարարագրում[225]:

---

[223] C. Silvani and K. Baer, “Designing a tax administration reform strategy: Experiences and guidelines”, Working paper, IMF, 1997, p. 16

[224] Fischer C., Wartick M. and Mark M., “Detection probability and taxpayer compliance: A review of the literature”, *Journal of Accounting Literature,* N 11, 1992, p.8

[225] «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենք, ընդունված 08.02.1995, ՀՕ-130, հոդված 19,

Հայտարարագիր կարող էին չներկայացնել միայն այն ֆիզիկական անձինք, որոնք՝

ա□ եկամուտ էին ստացել բացառապես հիմնական աշխատանքի վայրից,

բ□ պասիվ եկամուտներ էին ստացել՝ մեկ անգամ կամ նույն վճարման վայրից մի քանի անգամ և օրացուցային տարվա ընթացքում ստացված պասիվ եկամուտների ընդհանուր գումարը չի գերազանցում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի համաձայնությամբ ՀՀ կառավարության կողմից սահմանված չափը:

Մնացած բոլոր դեպքերում մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը եկամտահարկ վճարող ֆիզիկական անձինք պարտավոր էին ներկայացնել տարեկան եկամուտների մասին հայտարարագրեր: Միաժամանակ, ՀՀ կառավարության 1995 թ.-ի հունիսի 15-ի «Ֆիզիկական անձանց տարեկան եկամուտների հայտարարագրման կարգի և հայտարարագրերի ձևերի հաստատման մասին» թիվ 342 որոշմամբ հաստատվեց ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման կարգը և տարեկան եկամուտների մասին հայտարարագրերի ձևերը: Հատկանշական է, որ նշված որոշումը չէր անդրադառնում ֆիզիկական անձանց գույքի հայտարարագրմանը և վերաբերում էր բացառապես տարվա ընթացքում ֆիզիկական անձանց կողմից ստացված եկամուտներին, այսինքն՝ ուներ բացառապես ֆիսկալ բնույթ:

1997 թ.-ի դեկտեմբերի 27-ին ընդունվեց «Եկամտահարկի մասին» ՀՀ նոր օրենքը (ՀՕ-183□, որի ընդունմամբ ուժը կորցրած ճանաչվեց 1995թ.-ին ընդունված «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-130□[226]:

«Եկամտահարկի մասին» ՀՀ նոր օրենքով ևս նախատեսված էր ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համախմբված եկամուտների հայտարարագրման սկզբունք[227]: Հարկման ենթակա եկամտի մեկից ավելի աղբյուրների առկայության դեպքում ֆիզիկական անձի եկամուտները (այդ թվում՝ եկամտի վճարման աղբյուրում հարկային գործակալի միջոցով հարկված) պետք է միասնականացվեին տարեկան

[226] «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենք, ընդունված 27.12.1997, ՀՕ-183, հոդված 40
[227] Տես նույն տեղում, հոդված 31

եկամուտների հայտարարագրով, որի արդյունքում կարող էր առաջանալ լրացուցիչ վճարման ենթակա եկամտահարկի գումար: Ֆիզիկական անձի հայտարարագիր ներկայացնելու պարտավորությունը պետք է վերահսկվեր հարկային մարմինների կողմից կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներկայացվող ֆիզիկական անձանց վճարված եկամուտների մասին տեղեկությունների հիման վրա:

Սակայն օրենքի գործողության երեք տարիների արդյունքները ցույց տվեցին, որ եկամուտների հայտարարագրում կատարում էին հիմնականում անհատ ձեռնարկատերերը: Միաժամանակ, ֆիզիկական անձանց անհատական հաշվառման բացակայությունը և նրանց վճարված եկամուտների մասին տեղեկությունների համակարգչային մշակման ծրագրերի բացակայությունը հարկային մարմիններին հայտարարագրման գործընթացի ուղղությամբ անհրաժեշտ վերահսկողություն ապահովելու հնարավորություն չտվեցին: Այդ իսկ պատճառով «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում կատարվեցին փոփոխություններ և լրացումներ, որոնց համաձայն 2001 թ.-ի հունվարի 1-ից սահմանվեց եկամուտների հարկման ամսական սկզբունք՝ եկամտի վճարման յուրաքանչյուր վայրում՝ առանց տարեկան հայտարարագրի հիման վրա եկամուտների հետագա համախմբման պարտավորության:

Չնայած ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման համակարգի ներդրման վերը նշված անհաջող փորձերին՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարևորեց ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգի ներդրումը, որն ընդգրկվեց նաև հանրապետության երկրորդ նախագահի նախընտրական ծրագրում: Այդ են վկայում նաև Արժույթի Միջազգային Հիմնադրամի (ԱՄՀ), այնուհետև Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (GREKO) հետ ստորագրված հուշագրերով ՀՀ կառավարության ստանձնած պարտավորությունները[228]:

Մասնավորապես, խոսքը վերաբերում է օրենսդրության շարունակական կատարելագործմանը, որը կհանգեցնի գույքի և

[228] 2004 թվ.-ից ՀՀ-ն անդամակցում է Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբին

եկամուտների հայտարարագրման համակարգի ներդրմանը, հատկապես պետական կառավարման հատվածում:

Նշված համատեքստում ՀՀ կառավարության 2001 թ.-ի մարտի 31-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգի ներդրման պետական ծրագրի մասին» թիվ 275 որոշմամբ հաստատվեց ՀՀ քաղաքացիների գույքի և եկամուտների հայտարարագրման պետական ծրագիրը, որի նպատակն էր հայտարարագրման համակարգի ներդրմամբ պայքարել կոռուպցիայի դեմ, ապահովել եկամուտների առաջացման նկատմամբ թափանցիկություն, որն էլ իր հերթին կհանգեցներ հասարակության վստահության ամրապնդմանը: Մյուս կողմից, նշված որոշման համաձայն, ՀՀ-ում գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգի կայացման համար տարանջատվեցին 4 փուլեր[229], ընդ որում, այս ծրագիրը նախատեսվում էր իրականացնել աստիճանաբար՝ առաջնահերթություն տալով սահմանափակ քանակությամբ քաղաքացիների գույքի և եկամուտների հայտարարագրմանը (պետական բարձրաստիճան պաշտոնյաներ, պետական ծառայողներ□, այնուհետև ընդլայնել հայտարարատու քաղաքացիների շրջանակները: Վերջին՝ 4-րդ փուլը ենթադրում էր հայտարարատու քաղաքացիների շրջանակի ընդլայնմանը զուգահեռ հայտարարագրման համակարգի՝ որպես ֆիսկալ լծակ օգտագործելու հնարավորությունների բացահայտմանը: Ծրագրի իրականացման նպատակով 2001 թ.-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության իշխանության մարմինների ղեկավար աշխատողների գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքը, որի գործողության ժամկետը նախատեսված էր մինչև 2009 թ.-ի հունվարի 1-ը[230]:

Նշված օրենքի կիրառման շրջանակը շատ սահմանափակ էր, ընդգրկում էր միայն իշխանության մարմինների պաշտոնատար և նրանց փոխկապակցված անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերը, որոնք ունեին ավելի շատ վերահսկողական կամ

[229] ՀՀ կառավարության 2001թ.-ի մարտի 31-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգի ներդրման պետական ծրագրի մասին» թիվ 275 որոշում, կետ 2.1,

[230] «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենք, ընդունված 07.07.2006, ՀՕ-164-Ն, հոդված 23,

շահերի հայտարարագրման բնույթ (2008 թ.-ի հունվարի 1-ից մինչև 2009 թ.-ի մարտի 17-ը հայտարարագրեր են ներկայացրել 55444 հայ-տարարատուներ[231]):

ՀՀ-ում հայտարարագրման համակարգի ներդրման վերջին փուլը համարվեց «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որի համաձայն առաջին հայ-տարարագրերը պետք է ներկայացվեին 2007 թ.-ի համար՝ 2008 թ.-ի ապրի-լի 15-ից ոչ ուշ[232]: Նշված օրենքի համաձայն՝ հայտարարագրման ենթակա էր ֆիզիկական անձանց ստացած գրեթե բոլոր եկամտի տեսակները, այդ թվում՝ նաև «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն չհարկվող կամ նվազեցվող եկամուտի տեսակները (շահաբաժինները, նվիրատվության կամ ժառանգության տեսքով ստացված եկամուտները և այլն): Հայտարարագրման ենթակա էր նաև գույքը (անշարժ և շարժական գույք, թանկարժեք իրեր)[233]:

«Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ ենթադրվում էր, որ ներկայացվե-լիք գույքի և եկամուտների հայտարարագրեր կարող են ապահովել որոշակի ֆիսկալ արդյունք: Մասնավորապես, օրենքում[234] ամրագրված էր, որ 2014 թ.-ին և հետագա տարիներին հայտարարագիր ներկայացնելու պահանջը տարածվելու է տարեկան մինչև 1 մլն դրամ եկամուտ ստացող ֆիզիկական անձանց վրա, այսինքն՝ 2014 թ.-ից հետո աշխատունակ բնակչության մեծ մասը կհամարվեր հայտարարատու: Սակայն 2007 թ.-ի դեկտեմբերի 18-ին օրենքում կա-տարվեցին փոփոխություններ[235], որոնց համաձայն սահմանափակվեց հայտարարագրման պահանջը պաշտոնատար անձ կամ անհատ ձեռնարկատեր չհամարվող ֆիզիկական անձանց նկատմամբ, և հայտարարագրեր ներկայացնելու պահանջ դրվեց միայն այն ֆիզիկական անձանց նկատմամբ, որոնց տարեկան եկամուտները գերազանցում էին 8 մլն դրամը, իսկ գույքի հետ կապված գործարքները գերազանցում էին որոշակի սահմանը (անշարժ գույքի դեպքում՝ 50 մլն դրամը, շարժական գույքի, արժեթղթերի և

[231] Տեղեկությունը տրամադրվել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն,
[232] Տես նույն տեղում՝ հոդված 23,
[233] Տես նույն տեղում՝ հոդված 6,7,
[234] Տես նույն տեղում՝ հոդված 9,
[235] Տես նույն տեղում՝ հոդված 5,

այլ ներդրման, փոխառությունների, այլ թանկարժեք գույքի դեպքում՝ 8 մլն դրամը)[236]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքի նմանաբովանդակ կիրառությունը ֆիսկալ արդյունք ընդհանրապես չէր ապահովում և, ըստ էության, հայտարարագիր ներկայացնում էին միայն պաշտոնատար անձինք, 2012 թ.-ի հունվարի 1-ից ուժը կորցրած ճանաչվեց «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքը[237]:

Բարձրաստիճան պաշտոնյաների, նրանց փոխկապակցված անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի ներկայացման կարգը ամրագրվեց «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով, որի ներքո ստեղծվեց էթիկայի հանձնաժողով, որին էլ ներկայացվում են բարձրաստիճան պաշտոնյաների, նրանց փոխկապակցված անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերը:

Ներկայումս ՀՀ-ում հայտարարագրման համակարգն ունի բացառապես վերահսկողական բնույթ: Մասնավորապես, ՀՀ Ընտրական օրենսգրքի համաձայն՝ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 5 օրվա ընթացքում, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունները) կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացնում կուսակցության գույքի և ֆինանսական միջոցների մասին հայտարարագիր, իսկ թեկնածուների գրանցման համար օրենսգրքով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 5 օրվա ընթացքում, թեկնածուները համապատասխան ընտրական հանձնաժողով են ներկայացնում հայտարարագիր իրենց գույքի և եկամուտների մասին[238]:

Ընդհանրացնելով կարող ենք եզրակացնել, որ ՀՀ-ում գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգի ներդրման հիմնական

---

[236] «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված 18.12.2007, ՀՕ-300-Ն, հոդված 3,

[237] «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, ընդունված 26.05.2011, ՀՕ-172-Ն, հոդված 49,

[238] Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգիրք, ընդունված 26.05.2011, ՀՕ-164-Ն, հոդված 6

թերությունները և դրանց առկայությամբ պայմանավորված խնդիրները, թերևս սրանք են՝

- գույքի հայտարարագրման ընթացակարգը որևէ ձևով չէր կապվում գույքահարկի գծով հարկային պարտավորությունների հաշվարկման ու վճարման հետ, մասնավորապես գույքի հայտարարագրման հիման վրա գույքահարկի գծով հարկային պարտավորությունների գնահատումը պահանջում է նաև տեղեկատվական հոսքերի կազմակերպում տեղական ինքնակառավարման մարմինների, տարածքային հարկային տեսչությունների, ինչպես նաև գույքի նկատմամբ իրավունքներ գրանցող կազմակերպությունների ու գույքի հետկատարվող գործարքները հիմնավորող փաստաթղթեր վավերացնող նոտարական ինստիտուտի միջև, ինչը բացակայում էր:
- հայտարարատուների սահմանափակ շրջանակը, ինչը խոչընդոտում էր խաչաձև ստուգումներ և ուսումնասիրություններ կատարելուն, չէր գործում հայտարարագրման խթանման (եկամուտների և ծախսերի մասով փոխադարձ վերահսկողության) սկզբունքը,
- առաջին անգամ հայտարարագրվող գույքի կամ եկամտի առկայությունը հավաստող տեղեկատվության ստուգման մեխանիզմներն անկատար էին,
- գույքի և եկամուտների շարժն ապահովող գործարքների կողմ հանդիսացող հայտարարատուների՝ միևնույն գործարքի վերաբերյալ հայտարարագրած տեղեկատվության համադրման և այդ ճանապարհով համապատասխան շեղումների բացահայտման տեխնիկական և կազմակերպական հնարավորությունները սահմանափակ էին:

Հաշվի առնելով վերը նշվածները՝ կարծում ենք, որ ՀՀ-ում գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգի հետագա զարգացումը (կատարելագործումը) պետք է առավելապես կողմնորոշված լինի հետևյալ հիմնական նպատակների իրականացմանը.

1. **պետական բյուջեի կառուցվածքում եկամտային հարկի տեսակարար կշռի բարձրացում.** ներկայումս պետական բյուջեի

մուտքերում եկամտային հարկը կազմում է շուրջ 26 տոկոս[239], որը գրեթե ամբողջությամբ գանձվում է հարկային գործակալների կողմից: Ստացվում է այնպես, որ ՀՀ-ում այն եկամուտները, որոնց հարկումը վերապահված չէ հարկային գործակալներին, գրեթե չեն հարկվում:

2. Ֆիզիկական անձանց հարկային կարգապահության բարձրացում, ինքնագնահատման համակարգի կայացում, ինչպես նաև հայտարարագրված տեղեկատվության հավաստիության համար հայտարարուի կողմից պատասխանատվության ստանձնման անհրաժեշտություն. անհրաժեշտ է ֆիզիկական անձանց գործնական հնարավորություն ընձեռել՝ ինքնահայտարարագրմամբ կատարելու սահմանադրական նորմի պահանջը («Յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ»)[240]: Միաժամանակ, հայտարարագրման համակարգի ներդրումը կարևոր քայլ ու արդյունավետ միջոց է՝ ամրագրելու ֆիզիկական անձանց պատասխանատվությունը՝ տարեկան արդյունքների հիման վրա հայտարարագրված տեղեկատվության հավաստիության համար:

3. Իրավաբանական և ֆիզիկական անձանց միջև առկա կապերի բացահայտում. առևտրային կազմակերպություն ստեղծելու և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու գլխավոր նպատակը ֆիզիկական անձի կողմից եկամտի ստացումն է: Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրմամբ մի կողմից հնարավոր կլինի բացահայտել կազմակերպություններից ֆիզիկական անձանց ստացած իրական գումարների չափը, մյուս կողմից՝ եկամուտ վճարող կազմակերպության իրական շահույթը: Այսպես, ներկայումս շատ կան այնպիսի կազմակերպություններ, որոնք տարիներ շարունակ հարկային մարմիններին ներկայացնում են հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվարկներ (հաշվետվություններ, հայտարարագրեր) և որոնցում արտացոլում են հարկային վնաս՝ դրանով իսկ խուսափելով պետական բյուջե

[239] Տես աղյուսակ 2.1.3
[240] ՀՀ Սահմանադրություն, ընդունված 05.07.1995, հոդված 45

շահութահարկի վճարումից: Նման կազմակերպությունն, ըստ էության, սեփականատիրոջը շահաբաժին վճարել չի կարող: Միաժամանակ, նման կազմակերպությունները շարունակում են աշխատել, քանի որ իրականում սեփականատիրոջը (հիմնականում ֆիզիկական անձանց) ապահովում են ստվերային եկամուտ:

Այսինքն, ստացվում է, որ իրականում սեփականատիրոջ ստացած եկամուտներն ավելին են, քան կազմակերպության կողմից հարկային մարմիններին ներկայացված հաշվարկներում (հաշվետվություններում, հայտարարագրերում) արտացոլված եկամուտները:

Խնդիրը կայանում է նրանում, որ հարկային մարմինները պետական բյուջեի եկամուտներն ապահովելու նպատակով իրենց ուժերը կենտրոնացնում են հավելյալ արժեք ստեղծող իրավաբանական անձանց վրա, ինչը, սակայն նրանց հնարավորություն չի ընձեռում բացահայտելու այդ օրինակ ստվերը: Ներկայումս այս ուղղությամբ իրականացվող գործողություններն արդյունավետ չեն, քանի որ ֆիզիկական անձանց հաշվետվության վերաբերյալ օրենսդրությունը բացակայում է: Այսինքն, հասարակության համար տեսանելի ծախսերի հիմքում ընկած եկամուտների զգալի մասը ստվերային դաշտում է, ուստի ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգը նաև կողմնորոշված է այդպիսի եկամուտների բացահայտման գործնական և արդյունավետ մեխանիզմների կիրառությանը:

ՀՀ-ում գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգի հետագա կատարելագործմամբ կբացահայտվի երկրում թաքնված զբաղվածությունը: Այսպես, գործատուներն իրենց կազմակերպությունների հաշվապահական փաստաթղթերում չարտացոլված (պակաս արտացոլված) եկամուտներից ֆիզիկական անձանց (իրենց աշխատակիցներին կամ կազմակերպությունում ընդհանրապես չհրամանագրված անձանց) աշխատանքի դիմաց վարձատրություն են կատարում՝ դրանով իսկ խուսափելով եկամտային հարկի՝ օրենքով սահմանված չափով կատարումից: Թերևս, սա է հիմնական պատճառն այն բանի, որ ՀՀ-ում իրական աշխատավարձի բարձրացման և նոր աշխատատեղերի ստեղծման պայմաններում երկրի պետական բյուջեի

եկամուտների կառուցվածքում եկամտահարկի ու պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների տեսակարար կշիռն էական-որեն չի ավելանում[241]:

ՀՀ-ում գործող հայտարարագրման համակարգի հետագա զարգացումը կարծում ենք, ի վերջո, պետք է կողմնորոշված լինի ֆիսկալ նպատակների իրականացմանը և պետք է ընթանա հետևյալ հիմնական ուղղություններով՝

1. Հայտարարատուների շրջանակի աստիճանաբար ընդլայնում, այսինքն՝ հայտարարագրման համակարգի կայացման համար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնց դեպքում ֆիզիկական անձինք շահագրգռված լինեն ներգրավվելու հայտարարագրման դաշտ, մասնավորապես հայտարարագիր ներկայացնելու դեպքում որոշակի արտոնությունների տրամադրում (կրթության, առողջապահության վրա կատարված ծախսերը նվազեցնելու իրավունք) կամ վերջնական հարկային պարտավորության գումարի նվազեցման հնարավորություններ:

Օրինակ, Խորվաթիայում ֆիզիկական անձինք կարող են չներկայացնել տարեկան եկամուտների վերաբերյալ հաշվարկներ, հայտարարագրեր: Սակայն, որպեսզի վերջիններս կարողանան օգտվել որոշակի հարկային նվազեցումներից կամ արտոնություններից, նրանք պարտավոր են ներկայացնել տարեկան եկամուտների հաշվարկներ: Այսինքն, նվազեցումներ ստանալու իրավունքն ուղղակիորեն կապված է տարեկան եկամուտների հաշվարկներ ներկայացնելու հանգամանքի հետ, ինչն էլ իր հերթին ավելացրել է տարեկան եկամուտների հայտարարագրեր ներկայացնող ֆիզիկական անձանց թիվը[242]:

2. «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթների վերանայում: Կարծում ենք, որ ֆիզիկական անձանց կողմից ներկայացվող հայտարարագրերում անհրաժեշտ է ներառել ոչ միայն հարկվող եկամուտները, այլև չհարկվողները: Այսպես, ՀՀ կառավարության կողմից վարվող հարկային քաղաքականության տեսանկյունից «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն

[241] Տես հավելված 2.1.2

[242] Šimović H., "Effect of expenditures in personal income taxation on horizontal equity in Croatia", University of Zagreb, Working Paper 12-03, 2012, p. 6

որոշ չհարկվող եկամուտները հետագայում ևս չհարկելու դեպքում օրինակ՝ ժառանգության, նվիրատվության, շահաբաժինների, գույքի արժեքի հավելաճի տեսքով ստացվող եկամուտները, այնուամենայնիվ անհրաժեշտ է վերջիններս ևս ներառել ֆիզիկական անձի տարեկան եկամուտների հայտարարագրում, ինչը թույլ կտա հարկային մարմիններին իրականացնել համապատասխան համադրումներ:

3. Վերահսկողության գործուն մեխանիզմների մշակում և ներդրում, օրինակ՝ համապատասխան օրենսդրական դաշտի մշակում: Իհարկե, ինչպես արդեն նշել ենք, առավել նպատակահարմար է հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգումների ոչ հաճախակի լինելու հանգամանքը (հարկային մարմնի կողմից իրականացվող հաճախակի ստուգումները կարող են հանգեցնել հարկ վճարողների մոտ դժգոհության, ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել չհայտարարագրման դեպքերի աճի):

Այս առումով կարևորվում է նաև հարկային մարմնի վարչարարական կարողությունների համապատասխան մակարդակի առկայությունը թե՛ տեխնիկական հագեցվածության, թե՛ մասնագիտական կարողությունների տեսանկյունից:

Օրինակ՝ մի շարք երկրներ հայտարարագրման համակարգի ներդրմանը զուգահեռ լայնամասշտաբ ծրագրեր են իրականացնել հարկային համակարգում տեղեկատվական տեխնոլոգիաների համատարած ներդրման համար, մասնավորապես հայտարարագրերի ներկայացումը իրականացվում է բացառապես էլեկտրոնային ձևով, ինչը թույլ է տալիս հարկ վճարողների տնտեսել ժամանակ և այլ ռեսուրսներ[243]:

Կարծում ենք՝ հայտարարագրման համակարգի ներդրման համար կարևորագույն նախադրյալներից է հարկային մարմնում ֆիզիկական անձանց հարկման նպատակներին ծառայող տեղեկու-թյունների ամբողջական բազայի ձևավորումը, որում կներառվեն տվյալներ հարկային մարմինների կողմից հայտարարագրման ենթակա գույքի ու դրա հետ կապված գործարքների վերաբերյալ

[243] Palil M.R., “Tax knowledge and tax compliance determinants in self assessment system in Malaysia”, University of Birmingham, Research Archive, e-theses repository, 2010, p.40

գույքի նկատմամբ իրավունքները գրանցող կազմակերպությունից, գույքի հետկատարվող գործարքների փաստաթղթերը վավերացնող նոտարներից, «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ֆիզիկական անձանց եկամուտվճարողներից, ՀՀ օրենսդրության համաձայն տարբեր գերատեսչական մարմիններից:

Նշված տեղեկատվական բազան թույլ կտա հարկային մարմիններին համապարփակ տեղեկատվություն ստանալ ՀՀ ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների վերաբերյալ, ինչպես նաև կնվազեցնի տեղեկությունների ստացման, համադրման և օգտագործման ընթացակարգերի հետ կապված վարչարարական ծախսերը:

Միաժամանակ, անհրաժեշտ է նաև կատարելագործել հարկային մարմնի աշխատակիցների գիտելիքները և հմտությունները՝ կապված ֆիզիկական անձանց եկամուտների և գույքի հայտարարագրերում ներառված տեղեկատվությունը վերհանելու, ստուգելու, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում հարկ վճարողներին աջակցելու հետ:

4. ազգաբնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացում,

ԱՄՆ-ում հայտարարագրման համակարգի շարունակական բարեփոխումների համատեքստում մեծ նշանակություն ունեն հայտարարատու ֆիզիկական անձանց հարկային օրենսդրության առնչվող գիտելիքների բարելավումը: Օրինակ, ԱՄՆ-ում հայտարարատու ֆիզիկական անձինք կարող են օգտվել “Public Information Programme”, “Free tax Return Preparation for You by Volunteers” և այլ ծրագրերից: Միաժամանակ պարբերաբար հասարակության շրջանում անց են կացվում հարցումներ՝ պարզելու նրանց մտահոգությունները և առաջարկությունները կապված հայտարարագրման գործընթացի հետ՝ ընդհուպ մինչև հայտարարագրի գույնը, ձևը և այլն[244]:

ՀՀ-ում ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման համակարգի ներդրման ժամանակ կարծում ենք՝ անհրաժեշտ կլինի հասարակական հիմունքներով իրականացնել միջոցառումներ, ինչը թույլ կտա բարձրացնել հարկ վճարողների գիտելիքները, ինչպես

[244] Mills P.C., “New IRS audit compliance initiative to launch”, Bulletin Board, 2008, p. 24

նաև հստակ ներկայացնել հայտարարագրման համակարգի ներդրումից ակնկալվող օգուտները:

5. տույժերի և տուգանքների համակարգի մշակում:

Կարծում ենք՝ անհրաժեշտ է մշակել տույժերի և տուգանքների այնպիսի համակարգ, որը կբարձրացնի հարկ վճարողների զգոնությունը, ինչն էլ դրական ազդեցություն կունենա հարկ վճարողների վարքագծի վրա: Միաժամանակ անհրաժեշտ է տույժերի և տուգանքների կիրառման համակարգը մշակել այնպես, որ պատժամիջոցների կիրառումը տարանջատվի հետևյալ կերպ՝

- հայտարարագիրը ժամանակին չներկայացնելու դեպքում տույժեր և տուգանքներ,
- հարկերը ժամանակին չվճարելու դեպքում տույժեր և տուգանքներ,
- հարկային պարտավորությունները հայտարարագրում ճիշտ չարտացոլելու դեպքում տույժեր և տուգանքներ:

Օրինակ՝ ԱՄՆ-ում հայտարարագիրը ժամանակին չներկայացնելու դեպքում կիրառվում է 5% տույժ յուրաքանչյուր ամսվա համար, իսկ տուգանքները հաշվարկվում են հայտարարագիրը ներկայացնելու համար սահմանված օրվանից սկսած: Հարկերը ժամանակին չվճարելու դեպքում կիրառվում է 0.5% տույժ յուրաքանչյուր ամսվա համար (տուգանքներ չեն հաշվարկվում), և հարկային պարտավորությունները հայտարարագրում ճիշտ չարտացոլելու դեպքում տույժերի չափը սահմանված է 20-75%՝ կախված սխալի բովանդակությունից (տուգանքները հաշվարկվում են հայտարարագիրը ներկայացնելու համար սահմանված օրվանից սկսած)[245]:

Միաժամանակ ՀՀ-ում համատարած հայտարարագրման համակարգի ներդրման վերաբերյալ կարծիք կազմելու նպատակով մեր կողմից կատարվել են հարցումներ (հարցաթերթիկ ներկայացված է Հավելված 8-ում), որոնց արդյունքները ներկայացվում են ստորև.

Գծապատկեր 3.2.1.

[245] https://www.oecd.org/ctp/consumption/CIS-2006.pdf, Tax administration in OECD and selected non-OECD countries, Comparative information series (2006), published in 2007, p.95-96

Ինչպես եք վերաբերվում ՀՀ-ում եկամուտների և գույքի համատարած հայտարարագրման համակարգի ներդրմանը[246]



Հարցման մասնակիցներից 34-ը, ովքեր դեմ էին հայտարարագրման համակարգի ներդրմանը, հիմնականում իրենց մոտեցումը պայմանավորում էին հարկային համակարգի նկատմամբ ունեցած անվստահությամբ:

Այդուհանդերձ, հարցումների արդյունքները, ըստ մեզ, մատնանշում են, որ միջազգային պրակտիկայի փորձին համահունչ հայտարարագրման համակարգ մշակելու և հասարակության իրազեկվածության մակարդակի պատշաճ բարձրացման պարագայում ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման համակարգի ներդրումը կհանդիսանա արդյունավետ գործիք ՀՀ-ում հարկային նոր մշակույթի ձևավորման համար:

[246] Հարցումներն իրականացվել են հեղինակի կողմից, ընդ որում հարցման ենթակա են եղել տարբեր մասնագիտությունների տեր թվով 100 մասնակիցներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսությունում կատարված աշխատանքից ակնհայտ է, որ ֆիզիկական անձանց եկամուտների հարկման արդյունավետ համակարգի մշակումը և կիրառումը բավականին բարդ գործընթաց է: ՀՀ-ում ժամանակակից հարկային քաղաքականության սկզբունքներին և պահանջներին բավարարող եկամտային հարկի մոդելի կատարելագործումը պահանջում է օրենսդրական և վարչարարական կարգավորումների համակարգված իրականացում:

Հետազոտության արդյունքում կատարված ուսումնասիրությունները և վերլուծությունները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրակացությունները, մասնավորապես՝

• Ժամանակակից հարկային համակարգի գործառույթները որակապես փոխվել են. մինչև 20-րդ դարի կեսերը հարկային համակարգի ձևավորման համար անհրաժեշտ նախադրյալներ էին համարվում հարկային համակարգի կայունությունը, չեզոքությունը, եկամուտների վերաբաշխումը, իսկ 20-րդ դարի կեսերից հետո հարկային համակարգի ձևավորման ժամանակ մեծ կարևորություն էր տրվում սոցիալական արդարությանը՝ ընդգծելով հարկային համակարգի միջոցով սոցիալական խնդիրներ լուծելու հնարավորությունները:

• Զարգացած երկրներում եկամտահարկը մեծ դերակատարություն ունի սոցիալական բնույթի խնդիրների լուծման հարցում, ընդ որում, վիճակագրական տվյալները վկայում են, որ այս երկրներում զգալի է նաև եկամտահարկի և սոցիալական ապահովություն վճարների (որոշ երկրներում՝ սոցիալական հարկ) գծով հավաքագրումների տեսակարար կշիռը հարկային եկամուտների կազմում: Ինչ վերաբերում է զարգացող (անցումային տնտեսությամբ) երկրներին, ապա եկամտահարկը և սոցիալական վճարները խիստ սահմանափակ դերակատարություն ունի թե՛ սոցիալական խնդիրների լուծման հարցում, թե՛ հարկային եկամուտների կազմում:

• Ֆիզիկական անձանց եկամուտների համակարգի ուսումնասիրությունները վկայում են, որ կենսաթոշակային բարեփոխումների համատեքստում սոցիալական ապահովության համակարգերը լուրջ փոփոխությունների են ենթարկվել, որոնց հիմնական նպատակն է եղել տնտեսել վարչարարական կարողությունները:

• Աշխարհում առավել տարածված են եկամուտների հարկման՝ հարկային գործակալի և հայտարարագրման միջոցով մեխանիզմները, ընդ որում, զարգացող (անցումային տնտեսությամբ) երկրներում հայտարարագրման համակարգերն ունեն բավականին սահմանափակ դեր: Մասնավորապես, զարգացող (անցումային տնտեսությամբ) երկրներում եկամտահարկի գծով հավաքագրումների շուրջ 90 %-ը կազմում են աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումներից

հավաքագրված գումարները, որոնք գանձվում են հարկային գործակալների կողմից :

Զարգացած երկրներում լայնամասշտաբ կիրառություն ունի ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրումը, որի միջոցով հնարավորություն է ստեղծվում հարկային մարմնի համար պատկերացում կազմել ֆիզիկական անձանց իրական եկամուտների և հետևաբար նաև իրական հարկային պարտավորությունների վերաբերյալ, ինչը երկարաժամկետ հատվածում կհանգեցնի ընդհանուր հարկային կարգապահության աճի, եկամուտ ստացող-եկամուտ վճարող իրական կապերի բացահայտման և, ի վերջո, երկրում ստեղծվող եկամուտների վերաբաշխման իրական պատկեր, այսինքն՝ զարգացած երկրներում ինքնահայտարարագրման համակարգի կայացումը հանգեցնում է ծախսերի ինքնահայտարարագրման համակարգի ներդրմանը, հետևաբար ստվերային տնտեսության կրճատմանը:

Ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտությունների արդյունքում հնարավոր է դառնում ներկայացնել հետևյալ առաջարկությունները.

- Աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հարկման բարեփոխումների հիմնական ուղղությունը պետք է զուգորդված լինի սոցիալական քաղաքականության հետ: Մասնավորապես, հարկման բեռի նվազեցումը և սոցիալական հարկի (վճարների) նոր համակարգի ներդրումը պետք է հանդիսանան բարեփոխումների հիմնաքարը, ընդ որում, սոցիալական հարկերի վճարման պարտավորությունը պետք է բաշխվի գործատուի և վարձու աշխատողի միջև:
- Պասիվ և այլ եկամուտների հարկման բարեփոխումների հիմնական ուղղությունը պետք է իրականացվի հարկման մեխանիզմների կատարելագործման համատեքստում. եկամուտների և գույքի հայտարարագրման մեխանիզմների ներդրում: Ընդ որում, հայտարարագրման համակարգի ներդրման արդյունավետությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ կլինի համապատասխան միասնական տեղեկատվական բազայի ստեղծում՝ ֆիզիկական անձանց իրական եկամուտների վերաբերյալ պատկերացում ունենալու

նպատակով: Միաժամանակ ֆիզիկական անձանց եկամուտների ինքնահայտարարագրման մեխանիզմի ներդրումն անհրաժեշտ է զուգակցել որոշակի սոցիալական խթաններով, օրինակ՝ հարկի գումարի նվազեցում, սոցիալական բնույթի որևէ ծախսի նվազեցում հարկվող եկամտից, ինչը ավելի տեսանելի է, և հարկ վճարողների համար վճարվող հարկ-ստացվելիք օգուտ կապը շոշափելի կլինի:

- Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտների հարկման համակարգում բարեփոխումների հիմնական ուղղությունը պետք է հանդիսանա հնարավորինս մոտարկումը շահութահարկով հարկման համակարգին՝ միաժամանակ հնարավորինս կրճատելով հարկման այլընտրանքային ռեժիմների կիրառությունը:
- Հարկման այլընտրանքային ռեժիմների մշակման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել որոշակի հանգամանքներ, մասնավորապես հարկման այլընտրանքային ռեժիմները պետք է լինեն հնարավորինս պարզ և հասկանալի հարկ վճարողների համար, հաշվարկվեն շրջանառության նկատմամբ, հաշվարկման և վճարման ընթացակարգերը լինեն հնարավորինս պարզ և քիչ ծախսատար, կիրառվեն միայն ֆիզիկական անձանց նկատմամբ: Միևնույն ժամանակ, հարկման այլընտրանքային ռեժիմները պետք է կրեն ժամանակավոր բնույթ և պարբերաբար գնահատվի վերջիններիս ազդեցությունը հարկ վճարողների, ընդհանուր հարկային համակարգի, ինչպես նաև հարկերի հավաքագրելիության մակարդակի վրա:
- ՀՀ-ում ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների համատարած հայտարարագրման համար անհրաժեշտ է իրականացնել մի շարք միջոցառումներ, մասնավորապես.

1. Հայտարարատուների շրջանակի աստիճանաբար ընդլայնում՝ սոցիալական խթանների զուգակցմամբ, մասնավորապես վերջնական հարկային պարտավորության գումարից կրթության, առողջապահության վրա կատարված ծախսերի նվազեցման հնարավորություններ:

2. «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթների վերանայում՝ առաջարկում ենք ֆիզիկական անձանց կողմից ներկայացվող հայտարարագրերում ներառել ոչ միայն հարկվող եկամուտները, այլև չհարկվողները: Այսպես, ՀՀ կառավարության կողմից վարվող հարկային քաղաքականության տեսանկյունից «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն որոշ չհարկվող եկամուտները հետագայում ևս չհարկելու դեպքում օրինակ՝ ժառանգության, նվիրատվության, շահաբաժինների, գույքի արժեքի հավելաճի տեսքով ստացվող եկամուտները անհրաժեշտ է ևս ներառել ֆիզիկական անձի տարեկան եկամուտների հայտարարագրում, ինչը թույլ կտա հարկային մարմիններին իրականացնել համապատասխան համադրումներ:

3. վերահսկողության գործուն մեխանիզմների մշակում և ներդրում,

4. ազգաբնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացում,

5. տույժերի և տուգանքների համակարգի մշակում:

Ատենախոսության մեջ ներկայացված հետազոտության արդյունքների կիրառումը հնարավորություն կտա ՀՀ-ում ֆիզիկական անձանց եկամուտների հարկման դաշտում ձևավորել նոր հարկային մշակույթ, ինչը թույլ կտա ավելացնել ՀՀ պետական բյուջե հավաքագրվող եկամուտները, ինչպես նաև յուրաքանչյուր հարկ վճարող առավել գիտակցորեն կմոտենա իր կողմից վճարվող հարկերի բովանդակությանը և նշանակությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Նորմատիվ իրավական ակտեր

1. «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենք, ընդունված 22.12.2010, ՀՕ-209-Ն [102]

2. Դիվանագիտական կապերի մասին Վիեննայի կոնվենցիա, ընդունված 08.04.1961, [118]

3. «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենք, ընդունված 08.02.1995,ՀՕ-130, [225]

4. «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենք, ընդունված 27.12.1997, ՀՕ-183, [87, 225-227]

